

ԳՈՒՐԳԷՆ ՏԷՐ ՎԱՐԳԱՆԵԱՆ

ԵՐԶՆԿԱ-ԿԱՄԱԽ ԳԱՒԱՌԱԲԱՐԲԱՌԸ

ԵՒ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՅՈՒԾԵՐ

1968

Երուսաղեմ

ԳՈՒՐԳԷՆ ՏԷՐ ՎԱՐԳԱՆԵԱՆ

4

S-37

ԵՐԶՆԿԱ-ԿԱՄԱՒ ԳԱՒԱՌԱԲԱՐԲԱՈՒ

ԵՒ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՅԵՐ

43

2513

3-89

1968

Երուսաղեմ



ՅՈՒԹԱՐՁԱՆ

ԱՅՍ ՀԱՏՈՐԻՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԿՐԱՍԸ ՀՈԳՍԵԱՆ Է ԵՐԶԿԱՅԻ ԻՄ ԳԳՐԱ-
ՅԱԿԱՆ ՄՏԵՐԻՄ ԸՆԿԵՐ՝

ՇԱՐԱՄ՝ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՐ ՀԱՆԳՈՒՅԵԱԿ ՀՕՐ՝ *ԿՈՐԷՆ ՎԱՐՋԱԳԵՏԻ*. ՄՕՐ՝ *ՍԱԲԵՆԿԻ* ԵՒ
ՔՈՅՐԵՐՈՒՆ, ՈՐՈՆՔ ԱՆԳԵՐԵԶՄԱՆ ԶՈՀ ԳԱՅԻՆ ԹՐԺԱԿԱՆ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԵԱՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆՅ ԸՆԹԱՅՔԻՆ. ԻՆԶՊԵՆ ՆԱԵԻ ԻՐ ՍԻՐԵԼԻ ԿՆՈՂ՝
ՓԱՐԻԶԻ, ԿՆԵԱԿ ԳՕՑԱՀԵԱՆ, ԿԱՐԲԵՐԳ, ՈՐ ԱՆԱԿՆԱԿԱՍՕՐԷՆ ԿԼՈՒՆԵՑԱԻ ԻՐՄԷ
ԱՆՈՂՈՔ ՀԻՈՒՆԳՈՒԹԵԱՄԲ ՄԸ. 1935-ԻՆ. ԿՈՐ ՍՈՒԳԻ ՄԱՏՆԵԼՈՎ ԶԻՆՔ:

ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԳԱՐՈՅ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԵՑԻ:

Գ. Տ. Վ.

ՉՈՆ ԱՐՏԱՄՈՐՄՈՔ

Այս համեստ երկս կը նուիրեմ յիշատակին մեր բիւրաւոր նահատակներուն, որոնք բզիկ բզիկ կենագրաւ եզան քուրանական Գորշ Գայլին ժանիփներուն տակ: Ասոնց մէջ էին իմ հարազատներս, մեծ հայրս՝ Տէ՛ր ՎԱՐԳԱՆ, հայրս՝ Տէ՛ր ՊԻՄԷՆ ֆահանաները, մայրս՝ ԶԱՐՈՒՀԻ, եղբայրներս՝ ՍԱՄՈՒԷԼ, ՅՈՎՆԱՆ, ՎԱՀԱՆ եւ քոյրս՝ ՎԱՍԿԱՆՈՅՇ:

Ո՛վ Հայ, դուն որ կը կարդաս այս սողերը, յիշէ, որ դատ մը ունինք դեռ չլուծուած: Մի՛ մոռնար որ մեր նահատակներու ձայնը, անոնց արդարութեան կոչը չէ լռած դեռ: Ականջ տուր այդ ձայնին եւ կատարէ քու պարտականութիւնդ մեր նահատակներու սրբազան դատին հանդէպ:

ԱՆՈՆՑ ԶԱՅՆԸ

Գիտեմ, որ պիտի գայ:

Պիտի գայ քայլ առ քայլ, հանդարտ ու հանդիսական, եղերամօր մը ծանրութեամբ: Սեւեր է հագած եւ իր քղանցքները մոռալի ամպի մը պէս կը ծածկեն հարկզունները: Սեւ քող մը կը պարուրէ իր դէմքը: Աչքերէն հոսող արցունքի կաթիլները հասիկ հատիկ կ'իյնան իր քայլերուն առջեւ՝ կարմիր ծաղիկներ բանալով քարմ վերքերու նման:

Ո՛վ Ապրիլ, ծաղիկներու ամիս, սիրոյ եւ երգի պահ, երբ կեանք կը յորդես ամէն անկիւնէ, հողէն ու օդէն, ինչո՞ւ ցառով կը լեցնես սիրտս, եւ հեռաւոր խեղդամահ սիրոյ մը կարօտով կը տուայտես հոգիս:

Գարունը կարմիր վարդերէ դրասանգներ է կախեր պատուհանիս առջեւ: Առտուան արեւին շողերը սկիւրիւր քիքեռներու նման կը հանգչին անոնց վրայ ու կը քովան: Կը վորձեմ փրցնել կիսաբաց վարդ մը: Բայց ձայն մը կը կեցնէ զիս: Կեանքին պաղատանք... Մի՛ մեղցներ: Ու այդ ձայնին հետ կարծես քովէն կախուած բոլոր ծաղիկները կը շարժին, կը շնչեն, կը դառնան աչք, բերան, դէմք, ու կը ժպտին անտես պարիկի մը քեւերուն մէջ հանգչող կարմրաքուշ մանուկներու նման:

Ու կը մտածեմ այն անբիւ ծաղիկ հոգիներուն մասին, որոնք ամէն օր կը խամբին, կը մորթնորուն սա մեր անգուրք մատնելով եւ կոխան կ'ըլլան մեր բարբաբոս ոտներուն՝ ԱՆՈՆՑ ՊԵՍ...: Այո, անոնց պէս, որոնց ցար ամէն Ապրիլի կը կոտտայ սրտիս մէջ, գարնան ծաղիկներուն հետ, արիւնոտ աղօսներ բանալով հոն:

Այդ ակօսով կուգայ ձայնն իրենց՝ խուլ, հեռաւոր, անդրաշխարհիկ երգի մը հանգոյն, միահամուռ, փոքորկոտ, պաղատագին, ահագոյցիկ ու քաղցր միանգամայն, հսկայ վանքի մը կամարներուն տակէն, հսկումի գիշերին բարձրացող մեղեդիի մը նման: Այս ապրիլեան առաւօտուն, կարմիր վարդերով դրաստեգուած պատուհանիս աջեւ, ակամօ կուտամ այդ երգին՝ ակնարկս յառած ջինջ ու կապոյտ երկնքին:

— Ո՞ր էք, կ'ըսեն ձայներն այն, *ո՛վ հեռուս որ սիրելիք: Քանի՛ քանի՛ տարիներ մնացեր ենք որր, անտէր: Ո՛չ հայեցի բառ մը սուրբ, ո՛չ աղօթք մը լուսաւոր, ո՛չ արցունքի կաթիլ մը շեկան մեղմէլ լուսթիւնն մեր ահաւոր մենտթեան, կակուղցնել կարծրութիւնն մեր մոռցրած դամբանին:*

Այսօր, ահա, ոտքի ենք մեր ծառայուն հողմարքէն, ու սղեղէն շրթներով ձեզ կը կանչենք փերստին: Ա՛հ, մի՛ նեակէք մեր վրայ մոռացութեան ամպը դուժ ու լքումի սարսափով մի՛ պարուրէք որը մեր:

Եկէ՛ք, եկէ՛ք, հեռուէն, աշխարհի շորս ծաղերէն: Գիտենք, կեանքը փոխուած է, կարիքներն են զանազան եւ շատ վէրքեր խորախոր սպիտակեր են արդէն:

Բայց պարտք մ'ունիք մեզ հանդէպ, պարտքը ամբողջ ցեղի մը, զոր արիւնով մեր կարմիր, կոշկոճանքով մը անլուր, վճարեցինք մենք որ մը արնածարս պապական թուրմտական Գորշ Գայլին:

Ու այդ պարտքն է որ կուզենք, նուազագոյն տակօսով, մեր արիւնի սրբազան մարհակալին անկորստս:

Տրտիւնէն ձեր սրտերուն ծնած անուշ զգացում մը, յիշատակին մեր հանդէպ, նարեկէն խոր հծծին մը, արցունքի ջերմ կաթիլ մը եւ կամ գոնէ յարգանքի, փեր-

յիշումի կամ սիրոյ բառ մը թուած ձեր շրթներէն այս սրբազան մեծ օրին, տարին գոնէ մէկ անգամ...

Ես կը լսեմ այդ ձայնը այս ապրիլեան առաւօտուն: Ընտանի է ան ինձի, իմ մանկութեան սէր ու խիղովը օծուն: Մօրս ձայնն է անիկա, այնպէս անուշ ու տխուր, որ արցունքի ցողով մը կը մշուշէ ակնարկս: Արու բարբառն է հօրս՝ վրէժի թոյնովն ահաւոր. ձայնը քրոջս անուշիկ, եղբայրներուս ու, վերջապէս, արիւնի, համայնական գոհարերումի սուրբ կապերով միասնացած հեծեծամէր իմ ցեղիս, իմ տարաբախտ երկրին:

Ես կը լսեմ այդ ձայնը: Սիրտս ամբողջ կը բանամ ես այդ կոչին հեռաւոր ու ծերադիր կ'աղօթեմ իմ մանկութեան օրերուս հաւատովը լուսաւոր, հատիկ հատիկ կրկնելով բառերն այն քաղցր ու փափուկ, գորս մայրիկս գետեղեց որպէս անմիւք մարգարիտ իմ մանկական շրթներուն:

«ՄՇԱԿ» (Ֆրէզնօ),

Ապրիլ 24, 1936



Ա

ԵՐԶՆԿԱ-ԿԱՄԱԽ ԳԱԻԱՌԱԲԱՐԲԱՌԸ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Կար ժամանակ մը երբ գաւառացին որպէս անկիրք եւ անօր լեզուն ալ որպէս կոշտ ու անարժէք կ'արհամարհուէին: Բայց գիտակից անձերու շանֆերով՝ արհամարհուած բնաշխարհիկ հայր հետզհետէ դարձաւ գուրգուրանքի եւ անօր լեզուն ալ հետաքրքրութեան առարկայ:

Ժողովուրդի մը ողնասիւնը բնաշխարհի հողին կառչած այն զանգուածն է, որ հայրենի ժառանգութիւնները ի գին մեծամեծ գոհողութեանց կը պահէ ու կը պահպանէ: Այդ զանգուածին խօսած լեզուն, հակառակ իր երեւութական կոշտութեան եւ աղաւաղումներուն, այն անսպառ շտեմարանն է, որուն մէջ պահուած են ժողովուրդի մը բարատին եւ հոգիին խորհրդաւոր գոհները, անբակնեքու մէջ լճուած եւ քաղուած հնուութեանց բնկորներուն նման:

Հայ ժողովուրդի լեզուն, իր գրական եւ պաշտօնական ձեւէն գառ, ունեցած է եւ ունի ժողովուրդին առօրեայ խօսակցութեան յատուկ տեղական բարբառները, որոնք աշխարհագրական միջավայրի եւ պատմական դէպքերու ազդեցութեամբ ստացած են ինքնայատուկ նկարագիրներ: Նախնեաց ուսմիտները, որ գրաբարէն գառ եւ անօր քով հասարակաց խօսակցութեան լեզուն էր, չէր կըրնար միօրինակ բարբառ մ'ըլլալ: Այս ուսմիտներէ բազմաբանց մնացորդներն են այսօր գոյութիւն ունեցող գաւառաբարբառները:

Արդի հայերէնը, իր գրական երկու մեծ նիւզերէն դուրս, ունի բազմաբիւ գաւառաբարբառներ (ըստ Աճառեանի 31), որոնցմէ ոմանք իրենց խորհուրդեամբ անհասկնալի են ազգին ընդհանրութեան: Այսպէս, ամէնէն հմուտ հայկաբանն անգամ չի կրնար հասկընալ, օրինակ, Զէյթունի գաւառականը կամ Զոկերէնը, առանց երկար ատեն մնալու նոյն բարբառները խօսող ժողովուրդներուն մէջ:

Մեր գաւառաբարքամերու ուսումնասիրութիւնը կարեւոր է կրկնապէս: Նախ՝ անով կրնանք լուսարանել մեր ժողովուրդի պատմական և ընկերային կեանքին զանազան երեւոյթները: Երկրորդ՝ անով կրնանք նոխացնել մեր գրական լեզուին բառագանձը, և աւելի կենդանութիւն, յստակութիւն և հայկականութիւն տալ անոր:

Որոշ է թէ գրական լեզուն ըլլալով ենթակայ օտար ազդեցութեանց, անգզալարար կրնայ կորսնցնել իր բնիկ նկարագրէն տարբեր, դառնալով արուեստական և անհարազատ: Ըմբռնելու համար այս հաստատումին նշոյթիւնը, բաւ է իրարու մօտ դնել և բազդառել, օրինակ՝ Պոլսոյ, Իզմիրի և գաւառի գրական վարպետներու գործերը:

Առաջին աշխարհամարտին տեսար եղանոր Տանկահայ ժողովուրդին հետ անխնայ նսեւ անոր գաւառաբարքամերը: Առնք կորուստէ փրկելու և ուսումնասիրելու համար գեներատիւ աշխատանք տարուած էր պատերազմէն առաջ: Մեծամասն լեզուորան Հրաչեայ Անտոնեան ուսումնասիրեց մեր բարբառները, դասաւորեց զանոնք և այսպէտով դրաւ հիմը հայ բարբառագիտութեան: Բայց սակաւին ընկելէ շատ բան կար: Հիմա որ հրդեհը լափլիզած է մեր հայրենի բազմազարեան տան մեծագոյն մասը, ամէն գիտակից հայու նուիրական պարտականութիւնն է ջանալ անբնեւրէն ազատել ինչ որ կարելի է, ըլլալ բարբառ, բանահիւստութիւն, աւանդութիւն, սովորաբար ելլի:

Մեր հայրենակցական միութիւնները և անհատներ այս ուղիւրեանք կարեւոր աշխատանք կատարած են: Դժբախտաբար ասանց մեծ մասը գիտական արժէքէ գուրկ են զի, մասնաւորապէս բարբառներու ուսումնասիրութիւնը կատարողները, նիւրին համար պէտք եղած պատրաստութիւնը չեն ունեցած ընդհանրապէս: Իր մնայ որ Հայաստանի և արիւմտի մեր բանասէրները այդ հուսմիւրեքը անգամ մըն ալ աչէ՛ք անցնելով դնեն զանոնք պէտք եղած գիտական հիմքերուն վրայ:

Երգնկա-կամախ գաւառաբարքաւը ժամանակին տեղին վրայ չէ ուսումնասիրուած դժբախտաբար: Այս տողերը գրողին իղձն էր այդ պակասը լրացնել: Դժբախտաբար վերահաս առաջին աշխարհամարտը այդ փափախի իրագործման արգելի եղաւ: Այս երկու գաւառներու պատմութեան, նախապատերազմեան կեանքին և տեղա-

25/3 42 388

հանութեանց մասին կան երեք գործեր հրատարակի վրայ: Բայց ասանց մէջ կը պակսի եկեղեցւոց և Գաւառնաղեաց գաւառներու բարբառին մասին աշխատուած ուսումնասիրութիւն մը: Գ- Սիւրմուկեան միայն շօշափած է նիւրը: Զ- Քիւրտեանի արժէքաւոր պատմական ուսումնասիրութեան երկրորդ հատորը լոյս չէ տեսած և չնմ գիտեր թէ ինք արգիտօք պիտի գրադի՞մ մեր գաւառաբարքաւը:

Պակաս մը լրացնելու փափաքով, ապախնած յիշողութեան և հայրենակիցներէ նմանց օժանդակութեան, պիտի ջանամ կորուստէ փրկել Երգնկայի գաւառաբարքաւը իր յատկանշական գծերով:

Պրոֆ. Հրաչեայ Անտոնեան 1911-ին գրած իր «Հայ Բարբառներու Դասակարգութիւն Մը» ֆրանսերէն գործին մէջ կ'ըսէ. «Կամախի բարբառին չորքը բացարձակապէս ոչինչ կայ: Երգնկայի բարբառին չորքը քանի մը փոքր տեղեկութիւններ կան «ԲԻԻՐԱԿՆ»ի 1898-ի 563 էջին վրայ և բաւական երկար յօդուած մըն ալ 1899-ի 386-388 էջերուն վրայ»: Վերոյիշեալ գրութեանց ընդօրինակութիւններ ունեցալ շնորհիւ Վիեննայի Միլիթարեանց օժանդակութեան: «ԲԻԻՐԱԿՆ»ի 1898 տարուայ 563 և 564 էջերուն վրայ կայ Երգնկայի մէջ ուսուցչութիւնը բրած Ս. Ամատեանի գրութիւնը: Դժբախտաբար Ամատեան, հակառակ իր մտաւորական հանգամանքին, սխալ մերձեցում ունի իր նիւրին: Ահա թէ ինչ կ'ըսէ ան. «Ես սրբա՛ն պիտի գործնան ընթերցողները (գէր անոնք որ Երգնկա բնակած չեն) երբ իմանան թէ բոլոր գաւառներուն մէջ Երգնկայի բարբառն ամէնէն մաքուրն է: Նոր հայերէնի լուսագոյն օրինակ մը, որ անշուշտ Պոլսոյ լրագրութեան տարածած լեզուէն առաջ կազմուած է, թէև անոր շատ կը նմանի»: «ԲԻԻՐԱԿՆ»ի խմբագիր Գալիք Խաչկունց կոնց խմբագրական ծանօթութեամբ մը իր կտակածը կը յայտնէ Ամատեանի հաստատումներուն շուրջ և իրաւամբ: Երէ Ամատեան ֆիչ մը մօտէն ուսումնասիրած ըլլար դեռ նոր դպրոց մտնող տղուն, անուս Երգնկացիին կամ գիւղացիին լեզուն, պիտի չըսէր թէ Երգնկայի բարբառը ամէնէն մաքուրն է: Ճշդելու համար իր կտակածները, «ԲԻԻՐԱԿՆ»ի խմբագրը ձեռք կը ձգէ Երգնկայի գիւղական լեզուով գրուած հէքեար մը, գոր կը հրատարակէ իր թերթի 1899 տարւան 386-388 էջերուն վրայ: Այդ հէքեարը, գոր պիտի տանք յետոյ, ցոյց կուտայ թէ Երգնկայի գաւառաբարքաւը Ամատեանի կարծա-



ծին չափ մաքուր չէ: Ամառեան իր կարծիքը կազմած է լեզուին վրայ երգնկա ֆազաֆի կրքուած դասուն, որուն հետ յարաբերութեան մէջ էր ինք՝ իր պաշտօնին բերումով:

ԵՐԶՆԿԱՅԻ ԳԱՒԱՌԱՐԱՐԱՐԱՌՐ

Երգնկայի գաւառաբարբառը բնիով կը հասկնամք այն լեզուն, որ կը խօսուէր պատմական Եկեղեցաց գաւառին մէջ: Այդ գաւառին կեդրոնն էր Երգնկա ֆազաֆը, որ իբր մտաւոր եւ տնտեսական կեդրոն կ'իշխէր ամբողջ գաւառին եւ անոր շրջակայ վայրերուն վրայ: Քաղաքն ունէր երեք մանչերու եւ մէկ աղջկանց լաւ կազմակերպուած նախակրթարաններ, որոնց մէջ կեդրոնական վարժարանը բարձրագոյն նախակրթարանի աստիճան ունէր: Հինէն ի վեր եղած են ընթերցասիրաց եւ բանասիրաց միասիւններ: Երգնկա ունեցած է իր բառրոնի շէնքը: Իր այս համգամեմեմով իսկ ան աւելի ենթակայ էր այսպէս կոչուած գրական հովիւն, որ կուզար Պոլսէն: Ամէն դպրոցական պատանիի առաջին մտահոգութիւնն էր «գրաբար» խօսիլ, այսինքն այն լեզուն որ կերտուած էր Պոլսոյ մէջ եւ եղած գրական եւ դպրոցական լեզու: Ասոր համար գաւառաբարբառը իր հարազատութեամբ պահուած էր ֆազաֆի անուս գամգուածին եւ գիւղերուն մէջ:

Հարկ է խօստովանիլ քէ Եկեղեցաց գաւառականը չունի, օրինակ, Տարօնի, Վասպուրականի եւ Արարատի բարբառներուն ցայտուն նկարագիրը: Ան աւելի մէկ նիւզն է այն լեզուին, որ բոս Անտանի, կը խօսուէր այն երկրամասին վրայ՝ որուն արեւմտեան սահմանն էր Եփրատ գետը եւ հիւսիսայինն ալ Պոնտական լեռները: Այսպէսով այս ընդարձակ խօսելակերպին մաս կը կազմեն, դարձաւ ըստ Անտանի, Երգնկայի, Կամախի, Խարբերդի, Բայուի, Հասպոզուրի, Չմշկածագի, Չարսանագի, Քոլիի, Տերսիմի բարբառները: Բայց պէտք կը զգամք նշել քէ, հակառակ Անտանիի եւ հետագայ լեզուարաններու կողմէ ընդունուած այս սահմանազճումին, կան ակներեւ տարբերութիւններ այս գաւառաբարբառներուն միջին: Այս գրութեան հետագայ էջերուն մէջ պիտի ցոյց տանք տարբերութիւնները, որ կան Երգնկա-Կամախի եւ Խարբերդի բարբառներուն միջին:

Այս առիւտ աւելորդ չլլայ նշել նաեւ հետեւեալ կէտը: Պատմութենէն գիտենք քէ Պոլսոյ եւ շրջակայքի հայ գաղութներու կազմութեան մէջ կարեւոր դեր խաղացած են Երգնկայէն, Կամախէն ու շրջականերէն եկած գաղթականները, որոնք ժի դարու սկիսքին Ցալաի կոչուած հրոսակներու հալածանքներէն իռզուցին իրենց քնավայրերը եւ խոյս տուին դէպի Պոլիս եւ հաստատուեցան հոն եւ անոր շրջակաները: Այսպէսով, կարելի է ըսել քէ Երգնկա-Կամախ շրջանի լեզուն իր դերն է ունեցած Պոլսոյ շրջակայ հայ գաղութներու գաւառաբարբառներու կազմութեան մէջ: Ասով կարելի է բացատրել մերձատրութիւնը, որ կայ Երգնկա-Կամախ բարբառին եւ Պոլսոյ գաւառաբարբառին միջին:

Երգնկա-Կամախ գաւառաբարբառին մէջ ալ յարկերէն բաներու գործածութիւնը սովորական է, բայց ոչ չափազանցեալ՝ նման Պոլսոյ: Կարգ մը բառեր հայերէն մասնիկներու յաւելումով ընտանեցած են: Օրինակի համար՝ *խորթիկը*—խօսիլ, *խալէլ*—պատալի, *չորիկը*—ծննդաբնի, *չալէլ*—մտազելի, *չալէլ*—պայտելի, *խորջէլ*—ծախսելի, *կըրնիկը*—դիզելի խոտի, բարդելի, *քիթիկը*—հայտելի, *զմէլ*—սփրտ ըննել ելլն:

ԿԱՄԱԽԻ ԳԱՒԱՌԱՐԱՐԱՐԱՌՐ

Կամախի Մարիկ գիւղացի, այժմ Նրէզոս բնակող Գրիգոր Պաղտիկեանէ ստացած լուսարանութեանց համահայն, կը գտնենք քէ Կամախի բարբառին ենչլանական դրութիւնը եւ ձևարանութիւնը նման է Երգնկայի լեզուին: Արդէն հինէն ի վեր Եկեղեցաց եւ Գարսնաղեաց գաւառները ազգագրական եւ մշակութային կապերով միացած են եզեր: Սեպուի լեռան սրբավայրերը, որքան Գարսնաղեաց նոյնքան ալ Եկեղեցաց գաւառի ժողովուրդին պատկանած են: Երգնկա ֆազաֆէն մինչեւ Կամախի հազիւ 35 էրկմերը է: Կամախցիներ առեւտրական եւ բարեկամական կապերով միացած էին Երգնկայի: Քանի մը Կամախցի ընտանիքներ հաստատուած էին Երգնկայի մէջ: Այս տուններէն նշանաւոր էին Թէլիլիբեան, Պոլսեան եւ Թանիկեան գերդաստանները:

Ինչ որ ըսած ենք այս աշխատութեան մէջ, կը պատշաճին նաեւ Կամախի բարբառին: Այստեղ ալ ձայնիկ գրերը բառերու առջեւ ու

բառերու մէջ ու վերջը՝ մասնաւորապէս ՚ն գիրէն ետք պահած են իրենց հարագատ հնչիւնը: Երկարբառներու ձայնափոխութիւնը եւ գրերու լծորդութիւնն ալ շատ քիչ բացատրեանք նույնն են: Հետեւեալ կէտերուն մէջ կամայօցին կը տարբերի երզնկացիէն: Կամայօցին կը գործածէ *ով*-ի փոխարէն միայն *վեւ*, որ նման է հարբերոցցիին: Երզնկացին սովորաբար կը գործածէ *վով*, բայց ունի նաև *վեւ* ալ: *Հաս, հոգ հոն*-ի փոխարէն կամայօցին ունի *Ֆեւ, Փեւ, Ֆեւ: Կարել* բայը երզնկացին կ'արտասանէ *կեւլ*, իսկ կամայօցին՝ *կրեւլ: Խաղող* բառը երզնկացին կ'արտասանէ *հուող*, իսկ կամայօցին՝ *հաղող*: Խարբերոցցիին նման կամայօցին ալ *դիւնամ* եւ *դնայ* կը հնչէ *դննայ*: Երզնկացին սպասնիի *պիտե*-ին տուջին վանկը միայն կը գործածէ, մինչ, ըստ Պաղտիկեանի, իրենէ *պիտե*-ն քնաչնի սեր: Պարագան նույնն է Քրիի մէջ՝ բաղդատմամբ Խարբերոցի, որ *պիտե*-ին վերջին վանկը կը գործածէ: Ըստ Ա. Պարտիզեանի՝ Քրիցի *պիտե*-ն չեն սեր: Այս տարբերութիւնները, սակայն, երբեմնակամ կազմին, այսինքն հնչիւնական դրութեան չեն վնասը: Նման տարբերութիւններու կը հանդիպինք նոյն բարբառը խօսող բազմէ գիւղի, գիւղէ գիւղի միջև: Ըստ Պարտիզեանի, իրենց գիւղին՝ Քրիի Կարմանի մէջ իրենէ բառ ունէին, որ գործածական չէր ժամ մը հետո գտնուող ուրիշ գիւղի մը մէջ: Կարող չեղանք երզնկացի բարբառին այս տեղական տարբերութիւնները ճշդիլ, բանի որ կարելի չեղաւ գտնել անձեր գտնագտն գիւղերէ եւ բաղդատել անոնց խօսելակերպը:

Յատկանշական պարագայ մըն է որ կամայի Բագատիչ գիւղերը իրենց բարբառով բոլորովին կը տարբերին տեղական լեզուէն. Գ. Պաղտիկեան հետեւեալը կը գրէ ինձ այս մասին՝ «Բագատիչներու երեւ(՞) գիւղերը կը գործածեն *կը* մասնիկը բայերու վերջաւորութեան. *խօսիմ կը, կ'ըրթիմ կը, կ'ուտէ կը, ուսկէ՞ կուզես կը, կ'նչ կ'անես կը, վաղեմ կը, ճեմեմ կը* եւլն: Այս գիւղերու հնչականու-

(*) Գ. Պաղտիկեան կը յիշէ *երէր* Բագատիչներ, մինչդեռ քնդանբառչու ընդունած թիւը երկուս է: Ինձ սուած լատարմութեան համաձայն երկու Բագատիչներու մօտ գտնուող Ս. Նշան վանքն ալ, ուր երկու տասնեակ շնամակներ կ'ապրէին, յամբ ոքո՛ւս Բագատիչ կը յիշուէր: Ասէ՛ր՝ երե՛ք Բագատիչներ յիշատակութիւնը:

Իրանը աւելի քաւ է եւ աւելի եղանակաւոր»: Յայտնի է քէ տակա կարճն քարբառն է, որուն մաս կը կազմէ նաեւ Գերջանի բարբառը: Ինչպէ՞ս պէտք է բացատրել այս երեւոյթը: Ըստ իս՝ կայ բացատրութեան կերպ մը, որ կրնայ հասանական ըլլալ: Ինչպէս գիտնեմ, պատմական Բագատիչ գիւղը կը գտնուէր Գերջանի գաւառին մէջ, մինչև Մեծ Եղեռնը: Չեմ գիտեր քէ ան այժմ գոյութիւն ունի՞ քէ ոչ: Այս գիւղին բարբառը կարճոյ լեզուն է, որուն գլխաւոր յատկանիշներէն մին է սահմանական եղանակի *կը*-ին գետնորմը բայէն շեռոյ: Եթէ բայը ձայնաւորով սկսի, այն պարագային *կը* կը դրուի բայէն առջեւ եւ վերջ: Լեզուական այս նոյն երեւոյթն է, որ գոյութիւն ունէր կամայի Բագատիչներուն մէջ: Մեր պատմական հին աղբիւրները, ինչպէս Ագարանգեղոս եւ Խորենացի, միայն մէկ Բագատիչ կամ Բագայտիչց գիւղ կը նանչնան, եւ այդ ալ Գերջանի Բագատիչն է ուր կար Միխիի հոչակաւոր Մեհեանը: Թէ ո՞ր ժամանակէն կը սկսի երեւումը կամայի Բագատիչներուն, կարելի չեղաւ ինձ ճշդիլ, բանի որ ձեռքիս տակ կը պակսին պէտք եղած աղբիւրները: Գրիգոր Դարանաղեցի չի յիշեր այս գիւղերը: Յայտնի է քէ իր օրով առնեմ տակաին գոյութիւն չունէին կամ նոր կը հաստատուէին:

Կ'ենթադրեմ քէ այս գիւղերուն ծագումը պէտք է փնտռել ժիլգարուն սկիզբները: Գիտնեմ քէ ժՁ դարուն վայնանին եւ ժէ-ի սկիզբը Զայլիներ կոչուած առաջակարար խումբի աստատութեամբ Օսմանեան կառավարութեան դէմ, աւեր ու կոտորած կը սրբառին Կիլիկիայէն մինչև Արարատեան Հայաստան: Ազատուելու համար այս ասրապիներէն՝ բազմաթիւ հայեր եւ բուրքի լիկով իրենց բնակավայրերը իտալ տունի դէպի արեւմուտք, դէպի Պալիս, ուր կը յուսային գտնել աւելի ասպեակութիւն: Այս գաղթականութեանց մէջ կային, ինչպէս կը պատմէ Գրիգոր Դարանաղեցի պատմիչը, բազմաթիւ հայեր կարճոյ, երզնկացի եւ կամայի եւ այլ շրջաններէն: Երբ բուրք կառավարութիւնը վերջապէս ճգնաճեղ Զայլիները եւ համեմատաբար աւելի ազատով վիճակ մը տեղիճցն ժողովուրդին համար, սուլթանին կրամանով մեծ քիւով գաղթականներ, Պաղտ շրջաններէն, բունութեամբ վերադարձուցան իրենց նախկին տեղերը: Այս վերադարձողներէն ոմանք հաւանաբար նախորդեցին մնալ նամբուն վրայ աւելի յարմար վայրերու մէջ: Թերեւս վերադարձող Գերջանի Բագատիչցիներէն մաս մըն էր, որ

հիմնեց Կամախի Բագատիչը, որ դարերու ընթացքին մեծցաւ ու կազմեց երեք տարբեր իրարու կից Բագատիչներ: Այս Բագատիչները, ապրելով որպէս առանձին համայնք, կրցան պահել իրենց բարբառը եւ սովորոյթները յաջորդ դարերու ընթացքին:

*

ՇՆՈՐ ՀԱԿԱՒԻՔ

Այս նախարանը փակելէ առաջ կ'ուզեմ իմ մտնուար շնորհակալութիւններս յայտնել այն հայրենակիցներուս եւ բարեկամներուս, որոնք աւելի կամ պակաս չափով օգնեցին ինձ այս աշխատութեանս մէջ: Աւելորդ կը համարեմ անոնց անունները յիշել այստեղ. զի իրենց տեղը անոնք արդէն յիշուած պիտի ըլլան: Միայն պարտք կը զգամ շնորհակալութեանս հետ յայտնել նաեւ գնահատմանս կամայայտնի հայրենակցիս՝ Գրիգոր Պաղտիկեանի, որուն կը պարտիմ իր գաւառի բարբառին մասին ունեցած ծանօթութիւններս:

ՅՆՉԻՆԱՐԱՆՈՒԹԻՒՆ^(*)

Հնչինարանութիւն ըսելով կը հասկնանք լեզուի մը մէջ տաւերու ունեցած ձայնական արժէքը եւ ստանց ուսումը՝ դարերու ընթացքին եւ ներկայ ժամանակին մէջ: Է. Բ. Աղաջան հետեւեալ կերպով կը սահմանէ այս դիտութիւնը. «Լեզուի հնչիւնական համակարգի ուսումնասիրութեամբ է գրազվում լեզուարանութեան բաժիններից մէկը՝ հնչիւնաբանութիւնը»: Այս համակարգը, ըստ Աղաջանի, կարելի է ուսումնասիրել նկատի ունենալով անոնց արտասանական կամ ձայնական տանձնաշատկութիւնները մէկ կողմէն, միւս կողմէն ալ անոնց պատմական դարգացման ընթացքը, թէ՛ տուեալ լեզուն հնչիւնական ի՛նչ փոփոխութիւններու ենթարկուած է դարերու ընթացքին:

Յայտնի է թէ հայերէն գրերու ձայնական արժէքը փոփոխութեան ենթարկուած է դարերու ընթացքին: Գրաբարի մէջ մեր գրերէն սմանց ձայնական արժէքը այն չէր, ինչ որ կը ներկայացնեն տնոնք այսօր: Օրինակի համար, բառակիրգրի Յ գիրը այսօր կ'արտասանուի որպէս Հ, բայց նախապէս ան ունեցած էր իր սեփական բառամիջի հնչիւնը նաև բառերու սկիզբը:

Եթէ նկատի աւանդ արդի աշխարհարարի գրական երկու ճիւղերը, անոնց մէջ տաւերու ձայնական տարբերութիւնները ակնբարեւն: Այսպէս՝ Batum, Paris, Boston, California անունները Արեւելահայ լեզուով կը գրուին Բարում, Պարիս, Բաստոն, Կալիֆորնիա, իսկ Արեւմտահայ լեզուով նոյն անունները կը գրուին Պարում, Բարիզ կամ Փարիզ, Պոսքոն, Քալիֆորնիա կամ Գալիֆորնիա, բայց կը հնչուին գրեթէ նոյն ձևով: Աւելորդ է ըսել թէ Արեւելահայ լեզուին ոսյն հնչիւնները աւելի ուղիղ են եւ հարպստ՝ գրաբարին:

(*) Եւրոպական phonetic կամ phonetique բառիմ դէմ մենք ունիմք իրիք բառեր. ձայնարանութիւն, հնչարանութիւն եւ հնչիւնարանութիւն: Այս երեքն ալ զործածուած են բանասիրական երկերու մէջ: Մենք պիտի նայընթերթիմք հնչարանութիւն բառը: Նկատի առնելով, սակայն, որ ներկայիս Հայաստանի մէջ ընդունուած եւ զործածական բառն է հնչիւնարանութիւն, մենք ալ նետնեցանմ այս զործածականին:

Տառերու հնչիւնական դանդաղութիւնները շատ աւելի զգալի են մեր դաստաբարբառներուն մէջ: Ասոր համադրելու համար բուսական է իրարու մօտ ընթել օրինակ, Տարօնցի, Վասպուրականցի, Բարձր Հայքցի, Տիգրանակերտցի եւ Կիլիկեցի անուս հայեր եւ անոնց արտասանել տալ դանդաղ յատկանշական բառեր: Ընդհանուր ձայնական տարբերութիւններէ զատ պիտի նշմարային հնչիւնական նուրբ երանդներ, զորս կարելի չէ արտաբերել մեր այբուբենի ձայնական ծանօթ արժէքներով:

Երզնկայի եւ Կամախի բարբառը իր հնչիւնական գրութեամբ պարզ է եւ չունի, օրինակ, Վանի կամ Մուշի բարբառներուն ձայնական հարստութիւնը: Մտորել կուտանք այս բարբառին ձայնական զլխաւոր յատկանշիւնները(*):

Ձ Ա Յ Ն Ա Ի Ո Ր Ն Ե Ր

Ձայնաւորներէն պիտի յիշենք միայն անոնք որոնք հնչական որեւէ փոփոխութեան կ'ենթարկուին.

Ա.— ԱՅԻ ձայնաւորը պահած է իր նախնական, այսինքն

(*) ՅԱՆՕԹՈՒԹԻՒՆ:— Այս գործին մէջ մասնաւոր ճիշդ ըրած ենք կարելի եղածին չափ պարզ ձեւով Արիւայացնել միւրք, Խակամալի ըլլալու համար մեր լիզուակոմ Խարցերու ոչ-մասնագէտ Խարիեմիկեցիներում: Անշուշտ գիտեմք յէ. Խակամալ մեր չամբին, կարգ մը կէտերու մէջ դժուար պիտի ըլլայ Խակամալի գտնուի մեր Խասարակ ընթերցողներուն: Փորձով դիտեմք թէ մասնաօրոտլու ձայնի, խուլ եւ շնչելի խուլ կամ բու գրերու ձայնական արժէքը բացատրելու մեր ճիշդին մէջ ոմանց կողմէ Խակամալի չեմք ըլլար: Ասոր համար Խասարակ ընթերցողին գործը քիչ մը աւելի դիւրացնելու նպատակով, ուր որ պիտի է՝ օգնութեան կամպած ենք լատիներէն տառերը: Այս տառերուն մէջ Ս գիրը պէտք միշտ արտասանել մեր ՈՐ ձայնին պէս:

Արեւմտախոյ քիչ շատ ուսումնական անձերն անգամ յամտի կը շփոթին, երբ մեր տառերում զանազան հնչիւնները կ'օգտեն Արիւայացնել: Այսպէս, բարեկամ մը կը գրէ ինձ թէ իրենց գիւղին մէջ բարեւ, գարեւ, գտնակ, ջուր, ծուկ քուսերը կը հնչուէին պարեւ, կարու, ամանակ, ճուր, ծուկ: Այս բայտարարութիւնը Խակամալի է Արեւմտախոյ մը համար: Արեւելոսխոյ մը անոր թակ օգտածին բոլորովին Խակամալը պիտի Խակամալ: Բարեկամիս թակ ուզածք այն է թէ՛ ձայնից գրերը բառերու սկիզբը պահած են իրենց հարազատ հնչիւնները:

Մետրոպոլան հնչիւնը, որ զործածական է մեր երկու գրական բարբառներուն մէջ ալ: Այդ հնչիւնը ճանաչելուպիսին միջին բարձրութեան հնչիւն է, որ արտասանվում է խոշափողը ազատ ու բաց պահելով, լիզուն ասփակ, թերանը եւ շրթունքները բաց»: Օրինակ, ստոնք քանի մը բառեր. ամառ, աշխատանք, քառարան:

Բարբառներու մէջ այս սովորական այբէն զատ կան սուր երկու տարբերակները, որ են Բմային եւ շրթնային այբ: Երզնկայի բարբառին մէջ կայ միայն քմային այբը՝ սակաւաթիւ բառերու մէջ: Այս քմային այբի հնչիւնը նման է անդիւրէն A գրին հանած ձայնին հոտ, mat, that բառերուն մէջ, ինչպէս նաեւ Խուրբերէն Էքմէլ, էք, էկէր բառերուն մէջ՝ մեր է գրին հանած ձայնին: Այս քմային այբը կը ներկայացուի դարձուած(տ) այբով: Այսպէս, Երզնկայի բարբառին մէջ առաջ կը հնչուի տառը, զարնել-գորնել, մայիլ-մայիլ, խփանք-խփանք, Սարգիս-Սարգիս, ամէն-ամէն:

Ա կը փոխուի է-ի մէջ քանի բառերու մէջ: Օրինակի համար. անել-էնել, անիլ-էնիլ: Այսպէս, Խոսակցութեան մէջ կ'ըսուի. էնիլ-պակաս ի՞նչ կը խարաքես: Էս իմ պարտես էնիլ-էնիլով փնարես իմ: Պակասին պակաս կ'ըսես, ամա էնիլին համար թերանց չես քանար:

Այբ կը փոխուի Ը-ի ցուցական դերանուններու եւ ստոնց հոլովական ձևերուն մէջ. օրինակ. Աս-ըս, աղ-ըղ, ան-ըն, սա-սը, դա-ըը, ըսար, սըսը, ընկէ, ընանց, ըղանցմէ, ըղանց, ընանցմէ եւն: Ասիկ զատ շատ մը բառեր հոլովման, խոնարհումի, սծանցման եւ բարդութեանց միջոցին վերջին վանկին մէջ գտնուող այբը կը վերածեն ըթի: Օրինակ. ամպակ-ամպըկնալ, օշխար-օշխորի, ազգաւ-ազգըտի, ազգըտութիւն, տուար-տուրրի-տուրրներ, գգալ-գգըլտի-ղգըլնոց, քարակ-քարըկնալ-քարըլնալ, տակ-ըսի, կիւանդ-կիւրընգալ-կիւրընդես, կարկտամ-կարկըտնել-կարկըտուք եւն:

Այբ կ'ըլլայ ինի՝ խառակ բառին մէջ, որուն բայը կ'ըլլայ խստիկել: Կայ նաեւ խտրելի ձևեր:

Ա = Ո = քստամիլ-քսումիլ:

Ե-է.— Գրարարի մէջ այս երկու գիրերը ունէին տարբեր հնչիւններ: Ենչ կը համապատասխանի մեր այժմու Ե-ին եւ սուր ձայնը ունէր թէ՛ բառերու սկիզբը եւ թէ՛ բառերուն մէջ: Այսօր մեր գրական լեզուին մէջ ան իր հարազատ հնչիւնը պահած է միայն բառերու մէջ, իսկ բառերու սկիզբը ան կը հնչուի որպէս Յ: Այս եւէն սուրճ գրուած Յ գիրը պէտք է հնչել իր սկզբնական ձայնով, այնպէս ինչ-

պէս կը հնչենք զայն կայնիլ բառին մէջ: Ինչպէս ծանօթ է մեզմէ շուտերուն, այսօր Հայաստանի մէջ բառասկզբից ց գիրը փոխանակուած է Հ-ով, եւ ց-ին վերագրածուած է իր Մերսողեան հարգարտ հնչիւնը:

Է զի՞ն սկզբնական հնչիւնը, բառ լեզուարաններու, մտաւորապէս է՛ց էր: Ան այսօր գրեթէ նոյնացած է ւ-ին հետ, անոր բառամբէր հասած ձայնին:

Երզնկա-Կամախ բարբառին մէջ ե՛մ զիրը, մի քանի բացառութեամբ, պահած է իր հին հնչիւնը: Բառերու առջև ան միշտ կը հնչուի որպէս է: Այսպէս. երկու-երկու, երթալ-էրալ, երկինք-երկինք, եկուր-էկո եւն: Բացառութիւն են քանի մը միտմանի բառեր, որոնց առջև ե՛ք կը հնչուի որպէս ց՛ն: Օրինակ. երբ-իմի, ետ-յետ, յետ, ել-յիլ, եղ-յեղ, երգ-յերգ եւն: Ես անձնական գերանուր կը հնչուի լն: Իմ, ես, եմք, եմ էական բայեր կը հնչուին որպէս էմ, էս, էմք, էն:

Ե = ւ: Եղիւ-եղած գերբայներուն մէջ ե՛ք փոխուած է թառ-յին այրի եւ այդ բառերը կը հնչուին ուղիւ-տղամ: Ձեռք կը հնչուի ձոռք, լեռ-լոռ, մեռիլ-մոռիլ:

Ե փոխուած է Ա-ի եղբայր բառին մէջ, որ եղած է այսբար: Ե կ'ըլլայ Ը հետեւեալ բառերուն մէջ. եզունց-ըզումց, յիզու-լլզու, ածելի-ածըլի, ձեզբել-ըզբել: Բացի եզումց բառէն, միտաներուն մէջ Ը չի գրուիր, բայց կը հնչուի:

Ե կը փոխուի Ի-ի հետեւեալ բառերուն եւ պարագաներուն մէջ. երեք կը հնչուի իրեք, երկցիկն-իրիկիմ, երկեր-իրիկում, հրեշտակ-իրիշտակ, երկիւմ-իրիկամ: Ել լծորդութեան բայերու սահմանական ներկայի եզակի եւ յոգնակի առաջին զէմբին մէջ ե՛ք կը փոխուի Ի-ի: Այսպէս, կ'ուտեմ կ'ըլլայ կ'ուտիմ, կ'ուտենք կ'ուտիմք, կը գագեմ-կը վագիմ, կը վագիմք, կը ձեռեմ-կը ձեռիմ, կը ձեռիմք եւն: Ձեմ կ'ըլլայ շիմ, շիմ ուտեր, շիմ վագի եւն:

Ե կ'ըլլայ Ո ցերեկ բառին մէջ, որ կ'ըլլայ ցորեկ:

Ե կ'անհետանայ կորոյ մը բառերու մէջ: Այսպէս. հայելի-հայլի, երեսուն-լոսում, աւերել-աւրել, աւերել-ալել, կեդեւել-կեդել, գայելել-գայլել եւն:

Է— Այս գիրը շատ փոփոխութեան չ'ենթարկուիր: Ամանց-մանց եւ բարդութեանց միջոցին ան կը փոխուի Ի-ի: Այս ալ ընդհանուր երեսնիմ է թէ՛ մեր հին եւ թէ՛ նոր գրական լեզուներուն եւ գաւառաբարբառներուն մէջ: Էական բայի սահմանական ներկայ եզակի

երրորդ զէմբի է գիրը միշտ կը հնչուի որպէս թառային այր: Ասկէ գտա՞ Ել լծորդութեան բայերու սահմանական ներկայի երրորդ զէմբերու վերջին է-ն ալ միշտ թառային այրի վերածուելու. ձգտում ունի: Այսպէս՝ կը վագե, կ'ուտէ, կը խե՛ եւ նման բայերու վերջին է-երը թառային այրի ձայն ունին եւ կը հնչուին կը վագո, կ'ուտո, կը խոմ:

Է կը փոխուի Ը-ի, մէջ բառի հոլովումներու միջոցին եւ կ'ըլլայ մըջի, մըջէմ, մըջով, մըջիմով:

Ը— Այս ձայնաւորը շատ քիչ փոփոխութեան կ'ենթարկուի: Ունիւք ինքնօր բար, որ հին ընդմը մեւին փոփոխուկ է: Կ'սենք. ինքնօր եզա ո ըսոր դրացո չնս գացիր: Կը յիշեմ ուրիշ երկու բառեր ալ, որոնց մէջ ըթ գիրը փոխուած է ինի: Այս երկու բառերն են՝ կըլշոք եւ ճըրագ, որ կը հնչուին կըլշոք եւ ճիրագ:

Արեւմտահայ գրական լեզուի լնայ երզնկայի բարբառին մէջ անիլ է, մինչ Կամախի մէջ, բառ Գորդար Պարտիկանի վկայութեան, փոխուած չէ: Օրինակի համար, կ'սեն. Ես ի՞շ պի անիմ ըս զուէ (շափ) հացը; Ինչ ա անես մը մըրէմ քեզ մեղաւոր պի հանիմ:

Ո = Օ— Ինչպէս ծանօթ է, գրաբար սկիզբէն Օ գիր չունէր: Ան փոխառութիւն է յունարէնի ԹԱ գարէն յետոյ: Օ ձայնը ատուց միակ գիրը մեր լեզուին մէջ եղած է Ո-ն, որ կ'արտասանուէր որպէս Օ՝ թէ՛ բառերուն սկիզբը եւ թէ՛ բառերուն մէջ: Ո-ով վերջացող բառ չունինք: Երզնկա-Կամախ բարբառին մէջ Ո գիրը կը հնչուի գրեթէ միշտ իրեւ Օ բառերուն առջև, եւ միշտ բառերուն մէջ: Այսպէս. ոշխար, օրբառ, օտք, օղորմիս եւ նման բառեր կ'արտասանուեն որպէս օշխար, օրբոռ, օտք, օղորմիս եւն: Բացառութիւն են մի քանի միտմանի բառեր, ինչպէս օրբ. ոռ, որ կը հնչուին վօրբ, վոռ, եւ ով ուրը, որ կ'արտասանուի վով:

Ի— Այս գիրը գրեթէ փոփոխութեան չ'ենթարկուիր: Ինծի ծանօթ են միայն երկու բառեր, որոնց մէջ Ի գիրը փոխուած է ռիի: Այդ բառերն են ինձի եւ լիզիլ, որ եղած են ընձի եւ լզիլ:

Ու— Այս ձայնաւոր մէկ երկու փոփոխութեանց ենթարկուած է հետեւեալ բառերուն մէջ: Գլուխ եղած է գլոխ. այսինքն Ու փոխուած է Ո-ի: Ումք (յոնք) բառը յոգնակիի մէջ ընձուիմեր, ուզիք բառն ալ եղած է ըզիզ, այսինքն Ու եղած է Ը: Հոլովում, ամանցման եւ բարդութեան միջոցին մեկ վանկերու, այսինքն բացառաւոր վերջացող վանկերու մէջ Ու կ'ըլլայ Ը, եւ բաց՝ այսինքն ձայնաւորով վերջացող վանկերու մէջ ալ Վ: Այսպէս, շուր-ըրիլ.

հարուստ-հարքստութիւն, բուրբ-բըրբի եւն: Աւելորդ է ըսել թէ այս բառերու մէջ ըթ դիրք թէևս կը հնչուի, բայց չի գրուիր: Օրբ-նակներ բայ փանկերու: առու-առվի, առտու-առտվանց, կտտու-կտտվներ, ան-անվանել: Այս բառերուն մէջ փոխանակ ՈՒ-ի՝ գրած ենք Վ, շնչակու համար ՈՒ-ի հանած Վ հնչիւնը:

Բ Ա Ղ Ա Ձ Ա Յ Ն Ն Ե Բ

Գրարարի հին հնչիւնական գրութեան համաձայն մտաւոր ձայն սննեղ բաղաձայնները բաժնուած են երեք խումբի, նայած իրենց հնչիւնական գրութեան ատփանակին: Այդ բաղաձայնները կը ներկայացնեն հետեւեալ պատկերը. Չայնեղ (sonore), խուլ (sourde) և շնչեղ-խուլ կամ թաւ (sourde aspirée):

Գրարարի եռատփնան ցանկին է հետեւեալը: Լեզուական օրէնքներու անձանօթ մեր ընթերցողներու գիրութեան համար սուսնց գէժ կը զենք անոնց համապատասխան բառիներէն գիրերը:

ՁԱՅՆԵՎՆԵՐ	ԽՈՒԼԵՐ	ՇՆՉԵՎ-ԽՈՒԼԵՐ
Բ - B	Պ - P	Փ - Ph, P'
Գ - G	Կ - K, C	Ք - Ch, K'
Դ - D	Տ - T	Թ - Th, T'
Ձ - Dz	Շ - Tz	Յ - Thz
Ջ - Dj	Ճ - Tj	Ղ - Thj

Արեւելահայ գրական լեզուն պահած է այս շարքը: Արեւմտահայ գրական լեզուն մէջ ան վերածուած է երկուքի: Չայնեղները նոյնպէս են շնչեղ-խուլներուն կամ թաւ գրերուն հետ և խուլներն ալ անցած են ձայնեղներու տեղը: Այսպէս, Բ, Գ, Դ, Ձ, Ջ հասարակած կամ նոյնպէս են Փ, Ք, Թ, Յ, Ձ գրերուն հետ: Իսկ Պ, Կ, Տ, Մ, Ճ ստան են ձայները Բ, Գ, Դ, Ձ, Ջ գրերուն, որով այս վերջիններս, թէևս որպէս զիր կը պահուին, բայց որպէս հնչիւն անհետացած են: Այս կերպով ներկայիս Արեւմտահայ գրական լեզուն մէջ ունինք բաղաձայններու հետեւեալ երկատփնան կարգը.

ՁԱՅՆԵՎ	ՇՆՉԵՎ-ԽՈՒԼ
Պ - B	Փ - P Ph, P'
Կ - G	Ք - Ch, K'
Տ - D	Թ - Th, T'
Շ - Dz	Յ - Thz
Ճ - Dj	Ղ - Thj

Ինչպէս վերը ակնարկեցինք, Արեւմտահայ գրական լեզուն ձայնեղ գրերու որպէս հնչիւն անհետացուած մեծապէս փոխուած է անոր, և վարժարաններու մէջ դժուարացուցած ուսանողներու ուղղագրութեան ուսուժք: Երբ նկատի առնենք որ այդ գրութեամբ կազմուած դասագիրքեր գործածական էին Ռուսաստանէն մինչև Վան, այն ստեն պիտի հասկնանք թէ որքան դժուար կացութեան կը մտնուէր ուսանողը որպէսու համար թէ բառ մը բննօ՞ղ պէտք է գրել թէ ոչ փիւրով, գիտօ՞ղ թէ Է՞տօ, դատօ՞ղ թէ քայտօ: Ես և իմ ընկերները կը գիմէինք մեր գաւառի հնչիւնին՝ զատորջելու համար այդ տարբերութիւնները:

Երզնկա-Կամախ բարբառին մէջ ձայնեղ գիրքը պահած են իրենց հարազատ հնչիւնը բառերու սկիզբը և բառերու մէջ ու վերջին ալ, մասնաւորապէս ն գիրէն յետոյ: Այսպէս, բարի կը հնչուի Bari, գարի, գարուն կը հնչուին Gari, Garun, դամակ, դմակ կը հընչուին Danag, Dmag, անի կը հնչուի՝ Dzug, ամեռ կը հնչուի Dzmer, ջուր կը հնչուի Djur, եւն:

Հետեւեալ բառերուն մէջ ձայնեղները ն գիրէն յետոյ պահած են իրենց հնչիւնը.— Տանն, խննոր, խննիկ, ջիջոց, խոնջան, անկաջ, լինդ, գունդ, հանդ, հիւանդ, հունդ, խնդալ, ժանգ ևւն: Գր-մարտը Դ գիրն ալ նոյնպէս պահած է իր ձայնը բառերուն վերջը: Այսբար, այնոր, այթը, շողգալ բառերուն մէջ ալ Բ և Գ գիրերը ձայնեղ են:

Այս յիշուած պարագաներէն զատ, ձայնեղները բառերուն մէջ և վերջ նոյնպէս են շնչեղ-խուլ կամ թաւ գիրերուն հետ: Այսպէս, դռնմ բառը կը հնչուի դրում, գալ-գէպ, կարագ-գարագ, մարագ-մարագ, երզում-էրբում, Ալամ-Աթամ, երբ-յեթ, գար-գաթ, որբ-որթ, հաջիլ-հաչիլ, ճամբայ-ճամփայ, մարդ-մարք, քագաւոր-քափաւոր, որձ-որց, բարձ-բարց ևւն:

Միւսման զիրերը երգնկա-կամախ բարբառին մէջ կարծնցուցած են իրենց հարազատ հնչիւնները և նոյնացած ձայնեղներուն հետ: Այսպէս, Պ, Կ, Տ, Ծ, Ն խուշերը հաւասարած են Բ, Գ, Դ, Ձ, Զ ձայնեղներուն: Տանք քանի մը օրինակներ. Պարսպ կը հնչուի բարբառովս: պագնիլ-բաբնիլ, կատու-գաղու, պատկեր-քաղզեր, ծիծ-ծիծ, նահն-շահն, մամուկ-մամուկ, մակատ-գագաղ և այլն:

Մինչև այժմ բառածնեղն կարակացնելով կ'ըսենք թէ երգնկա-կամախ բարբառը կազմուած է երկաստիճան բազմաձայններէ, նման Պոլսոյ, Տրապիզոնի, Եւզսիսոյ բարբառներուն: Ունենք շարք մը ձայնեղ զիրերու և շարք մըն այլ շնչեղ-խուշերու. աջ սինքն թառ զիրերու: Սույ զիրերը նոյնացած են ձայնեղներուն հետ, իսկ ձայնեղներն այլ սրտէ պարագաներու առած են շնչեղ խուշերու, աջսինքն Փ, Ք, Թ, Յ, Զ զիրերուն ձայները: Հետեւեալն է պատկերը այդ երկաստիճան բազմաձայններուն.—

ՁԱՅՆԵՂ ԳԻՐԵՐ	ՇՆՁԵՂ-ԽՈՒՄ ԳԻՐԵՐ
Բ - Պ	Փ - Բ
Գ - Կ	Ք - Գ
Դ - Տ	Թ - Դ
Ձ - Ծ	Ց - Ձ
Ջ - Ն	Չ - Ջ

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐՈՒ ԼՊՈՐԳՈՒԹԻՒՆ, ՏԵՂԱՓՈՆՈՒՄ ԵՒ ՍՂՈՒՄ

Բազմաձայններու փոփոխութեան հետեւեալ երեւոյթները նկատուին և երգնկա-կամախ բարբառին մէջ.—

Բառասկիզբի Հ-ի ձայն ունեցող Յ զիրը կ'իջնայ կամ Խ-ի կը փոխուի: Այսպէս, Յակոբ-Ակոբ, Յովհաննէս-Օհաննէս-Օհան, Յարութիւն-Արութիւն, Յովակիմ-Օվակ, յոզնիլ-օյնիլ, յարդերդ, յաբող-աբող-աբողակ, յտակ-խտակ, յխուկ-իցցուկ: Կամախի շրջանին մէջ յիշելի կ'ըլլայ իշնի և այլն:

Ջ և Ծ զիրերը կարգ մը բառերու մէջ զիրար կը փոխանակեն: Երպէս կ'ըլլայ Էրամ, Ծառգարդար-Ծաղկաբարդ-Ջարգարդար, կծկախիլ-կզկախիլ, կրծկալ-կզկալ, խածնիլ-խազնիլ, հեծնալ-հեզնալ և այլն:

ժ-ձ: Պատիւ-պատին, խոնմտանք-խոմտանք, կոնկիլ-կոմկիլ, վինակ-վմկին և այլն:

ժ-ճ: Ծարձ-եքկրաշարձ-ժամ, դժբախտ-ըշբախտ, դժգոնիլ-նշգոնիլ:

Ձ-Ձ-Ս: Թամնր-քարզ, քարնր-քարս, ամնրեւ-արգիւ, ագր-ասք, ազգ-ազգ: Այս բառերուն մէջ տեղի ունեցած է ոչ միայն հընչիւններու փոփոխում, այլ նաեւ զիրերու անկում և տեղափոխում:

ձ-ճ: Ձանք-նոշք:

Ն-Լ: Նմանիլ-լմանիլ-կրկմանի, եյնիլ-եյլիլ, բանալիլ-բալլիլք:

Ն-Ս: Նուրբ-սուրբ, շուրջատ-սուրջատ, շինուկ-սինուկ:

Ձ-Շ: Աջք-աշք, քիշ-քիշ, ամչնալ-ամշնալ, մանչնալ-մաշնալ, կանաչ-կանաշնալ: Ի՞նչ է հարցականը բազմաձայններէ առաջ կ'ըլլայ ի՞նչ: Օրբնակ. կս ի՞նչ գիտամ ինչ քսաւ:

Ձ-Շ: Մէջք-մէշք, իջնալ-իշնալ, առաջնորդ-առաշնորդ, միջնորդ-միշնորդ, ոչիլ-օշլուտ և այլն:

Ս-Յ-Ծ: Յխուկ-իցծուկ, վարսուկ-վազծուկ, ուրսուկ-ուցծուկ:

Յ-Ս: Երեկիմ-իբիսկիմ, օրոցք-օրոքք, սղացկան-սղասկան, պողունք-պողուս, հոգեհարցուկ-հոգեհարսուկ, անցուորիկ-անսուրիկ, անցնիլ-անսիլ, ջրաղաց-ջաղացք-ջաղաք: կ'ըսուի նաեւ ջաղաք:

Ինչպէս ուրիշ բարբառներում, այնպէս ալ երգնկա-կամախ բարբառին մէջ բառերու կըծասում, զիրերու տեղափոխում ուշադրաւ երեւոյթներ են: Տանք քանի մը օրինակներ. ակոսայ կ'ըլլայ առկայ կամ առդայ: Օրհարսակ կը նշանակէ կէսօր և աղաւաղամն է օր հասարակ բառին: Ջրաղաց կզմ է ջաղաք և ջաղաք: Թռնչուլ թռնիրի լրայ ձգում շուրն է կամ լաթը: Երգնկայի զուստին մէջ թռնիր բարբառէ կզմ է բռնիք և բռնտիր: Այս վերջին բռնտիր ձեւն ասով կզմ է բռնչուլ բարբ, քանի որ այս բարբառին մէջ տր կը վերածուի ու-ի: Այսպէսով թռնչուլ բարբ անցած է հետեւեալ ձեւերէն: Թռնտիր և շուլ բառերէն կազմուած է բռնորաշուլ, որմէ բռնչուլ, ուր այդ յոգեկազմ սուսած է և և զերն ալ փոխած իր տեղը: Թարգ կը նշանակէ բաննր, դարտակ-դատարիկ, հառդ-խաղդ, անկաջ-անկաջ, կարունք-կամուրք, մեռդ-մեղր, քեպուր-իեուր: Մայրամ-Մարիամ, միռայ-միպր, վլացք-լուացք, բալլիք-բանալիք, քմընալիկ-քմնգմեզալէկ, պարկըշար-պարկիկաշար, որ պարկուկի,

այսինքն ծիրանի շորն է կամ շիրը: Ասոնց եւ նման բաներու մէջ նկատուի է որ Լ, Ն, Բ նոյ կամ կակուզ ստանին են, որ կը տեղափոխուին կամ կը կորսուին արասանութեան դիրութեան համար:

Մէկ մէկ եղած է մէյ մէկ, մէկ մը՝ մէյ մը: Այ կը հնչուի ա. ինչպէս. հարս ա, մարս ա շատուց մեներ ին: Որ յարարբան կը կը հնչուի ո, օ ձայնով: Օրինակ. Ալեքսար ըսաւ ո ըսք զարք չեքամ: Երբեմն ալ Որ-ի տեղ կը գործածուի թորքերէն քի յարարբան կը: Ըսաւ քի, ընանկ ծեծ մը սաւա քի: Գէ որ կը հնչուի դէօ եւ դէվօ, միեջե որ-ի իմաստով: Այսպէս. Գէվօ էկաւ նր իմ ա հոգիս էլաւ: Երբ որ եղած է եկեղ կամ նոր սուղարութեամբ յեկեղ: Ահա հիմա եղած է այնա եւ կը գործածուի հիմա-ի իմաստով. օրինակ. Այնա ոտքի էլլամ նր գիտես քի ի՛ջ կ'ըլլայ հալոյ:

Ո՞ր հարցականը կը հնչուի նաեւ վե՞ր: Ով կ'ըլլայ վով կամ վեվ: Ինզո՞ր կ'ըլլայ ինզո. օրինակ. Ինզո՞ էղաւ ո ըս սասու հանզ չես գագեր:

Ուշագրտու երևույթ մըն է երզնկայի բարբառին մէջ, որ ՏՐ Լ և ՆՏՐ Ո-ի կը փոխուին: Օրինակ. Պետրոս կը հնչուի Պետոս, կարելի լոնի, կտորի-կոնի, կտրիկ-կոնի, պատրոյգ-պատուգ, ծանր-ծանոր-ծառ, սանոր-սառ, մանր-մանոր-մառ-մառուբ: Ընտրելի-հնտրել կըսծ է հոնի: Յայանի է թէ ՏՐ է որ կը փոխուի Ո-ի: Ն գիրը պարզապէս կ'իջնայ կամ կը կորսուի: Կամտիի շրջանին մէջ ձայնական այս երևույթը չի նշմարուիր:

Հնչիւններու կորուստ, ինչպէս այլ բարբառներում, նոյնպէս ալ հոս տեղի կ'ունենայ: Հուլովմանց եւ խոնարհմանց միջոցին վերջին կամ վերջնեթեր վանիի այլ գիրը կ'իջնայ: Այսպէս. Պառապառտի, կաւառ-կառտի, շարաք-շարքի, բերամ-բերմի, դամակ-դամկի, հաւատալ-հատալ, հաւասարիլ-հատարիլ եւն: Ինչպէս բարդութեանց եւ անոնցմանց, նոյնպէս հուլովմանց միջոցին Ի եւ Ո՞ ձայներ կը կորսուին: Օրինակ. Մոխիլ-մոխրի, մոծիլ-մոծիլ, ոջիլ-օշուտ, օգուտ-օգտի, ջուր-ջրի, սուն-սնուլ եւն:

Ձայնաւորով սկսող բաներու առջև ժխտական մի-ին ի գիրը կ'իջնայ.— Մ՛ուտեր, մ՛երգեր, մ՛աղօրեր, մ՛ամշնար եւն:

Գիրերու անկում տեղի կ'ունենայ հետեւեայ բաներուն մէջ. Ի կ'իջնայ. Գուրս-գուս, սուրբ-սուր, երբալ-էրալ, եկուր-էկու:

Տ կ'իջնայ. Պաշտպան-պաշպան, ասող-ասղ, Աստուած-Աստած եւն:

Գրի կրկնում եւ յաւելում, պատճառ-պատճառ, բանալի-բանալի-բալլիք, կուեսչ-կամանչ, մտեր-մտար, ծանր-ծանոր եւն: Երզնկայի մէջ գտնալ եւ գնաց շեն ըլլար գննալ, գննաց, թէ եւ կ'ըլլան Կամտիի մէջ:

Յատուկ անուններու կրճատում սուրբական է: Յ-ով սկսող անուններու մասին տկարեկամ ենք նախապէս: Տանք ուրիշ քանի մը անուններ Լ-ու. Մարտիէ-Մարտի, Մկրտիչ-Մկր, Մկօ, Արքատու-Արօ, Վառ-Վառաշաղախ-Վալի, Պետրոս-Պետոս, Կարապետ-Կարօ, Գրիգոր-Գիրգոր, Սարենիկ-Սարեն, Եզեկիէլ-Եզեկ, Սրբուհի-Սրբուկ, Մաքրուհի-Մաքրիկ, Նազուհի-Նարզուկ, Իզարեր-Եուրիկ, Թագուհի-Թագուկ-Թագուն, Շոգակար-Պարիկ եւն:

Ե Ր Կ Բ Ա Ր Բ Ա Ն Ե Բ

Գուստարբարաններու մէջ երկրաբարաներ գրեթէ գոյսի չունին: Երկրաբարաներ կը ներկայացուին պարզ կամ երկնային (ու) ձայնաւորներով: Մէկ քանի գուստարբարաններ ունին երկրաբարանի մտաւոր հնչիւններ: Երզնկայի բարբառն ալ երկրաբարաններ կը վերածէ ձայնաւորներու:

Այ երկրաբարաք բաներուն առջև կ'ըլլայ է: Օրինակ. Այգիլ-էգի, այրիլ-էրիլ, այրիկ-էրիկ:

Այ բաներուն առջև կ'ըլլայ Ա: Օրինակ. Այծ-ամծ, այլ-ալ, այս, այդ, այն-սա, ադ, ան:

Այ բաներուն մէջ կ'ըլլայ Ա: Օրինակ. Մայր-մար, հայր-հար, գայլ-գալ փայտ-փատ, լայն-լան, ձայն-ձան, կայծ-կած:

Իւ բաներուն մէջ կը դառնայ Ու: Այսպէս. Աղբիւր-ալբուր, հարիւր-հարուր, արիւն-արուն, մրջիւն-մրջուն, ալիւր-ալուր, հեթիւն-հեթուն, ձիւն-ձուն, ճիւղ-ճուղ:

Ոյ կը փոխուի Ու-ի: Օրինակ. Կապոյտ-կապուտ, փոյր-փուր, լոյս-լուս, բոյն-բուն, ընկոյգ-ընկուգ, ողկոյգ-ողկուգ: Գոյն բարբ կ'ըլլայ գուն: Կ'ըսեն մետիլ փոխան գունատիլ-ի: Բայց գոյն բանին տեղ յաճախ կը գործածեն պարսկերէն ընկզ բարբ: Երեսին վրայ ընկզ չէ մնացեր: Թոյն բանին տեղ ընգհանրապէս կը գործածուին գոմիր եւ ազու օտար բաները:

Եւ *կ'ըլլայ* Ե: *Օրինակ*. վառեակ-վառեկ, դայեակ-դահեկ, կորեակ-կորեկ, սարեակ-սարեկ: *Սարեակին կ'րսեն նաև* ֆահեկ, որ ծագած *ըլլալու է* մայեակ բառէն: *Մականուններու* Եանք *վերջաւորութիւնք կ'ըլլայ* Ենք, *ինչպէս*. փափագեմք, Լէփեմք, Սիւրմէմք, վարդանեմք *փոխանակ ըսելու*. փափագեանք, Լէփեանք, վարդանեանք *ևւին*: *Մականուններու վերջաւորութեան կրկնակ ձև մըն ալ կայ*: *Օրինակ*. փափագեանեմք, Գանիլչեանեմք, Ղազարսեանեմք *ևւին*:

Իւ *կը գտնայ* Ե: *Օրինակ*. Իւդ-եդ, գիւդ-գեդ, ճիւդ-ճեդ:

ՉԵԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Երգնկա-Կամախ բարբառին ձևարանական ընդհանուր կառուցքը նման է Արեւմտահայ դրական լեզուին: Այս ընդհանուր նմանութենէն դուրս կան կարգ մը մասնաշատակ ձևեր, զորս պիտի ջանանք սայ Հետեւեալ էջերուն մէջ:

ԳՈՅԱԿԱՆԻ ԹԻՒԸ

Ընդհանուր զործածական յոգնակիի մասնիկներն են դրական լեզուին յատուկ Ե՛ր և Ե՛նք, որոնք *ենթակայ են* դրական լեզուի կանոններուն: Ասոնցմէ զատ կան կարգ մը տեղական յոգնակերս մասնիկներ, զորս կուտանք *Հետեւեալ կարգով*.

Ան, անք, ւանք — Էչ-իչանք-իչանք, Գի-ձիանք-ձիանք, տեղ-տեղանք-տեղանք, գեղ-գեղանք-գեղանք, եղ-եղանք-եղանք, Բոյր-բուրանք, մայր-մարանք, հայր-հարանք, անըր-անըրանք, տագր-տագրանք *ևւին*:

Ոնք, տիք, տանք, լըտիք, լըտանք — *Ընդհանրապէս ազգական կան իմաստ ունեցող բառեր այս յոգնակերս մասնիկները կ'առնեն*: Այսպէս. Ախրար-ախրրտիք, ախրրտանք, Բուր-բուրտիք Բուրքտանք, տալ-տալքտիք, նըր-նըրտիք, կնիկ-կնիկտիք կնիկքտիք, խնամի-խնամանք, դրացի-դրացոնք, մեր-մերոնք, Գնր-Գնրոնք, մեկալ-մեկալոնք *ևւին*:

Իըներ — *Գլխաւորաբար մարմնի մասեր ցոյց տուող բառեր այս մասնիկը կ'առնեն*: Այսպէս. Աչք-աչքներ, ումք-ումքներ, մատ-մատրներ, ստք-ստրներ, ծունկ-ծնկլներ *ևւին*:

Ստան — Էգի-էգեստան, ուռի-ուռեստան, հոգի-հոգեստան *ևւին*:

Ունք — Պտուկ բառին յոգնակին է պակունք: *Կը զործածուի նաև* պակներ *ձևը*:

Ք — *Գրարարի յոգնակերս Ք պիտի ալ կը զործածուի կարգ մը բառերու վրայ*: Այսպէս — Տղայ-տղանք, գեղացի-գեղացիք, Բաղքի-Բաղքիք, Փրատիք-Փրատիքիք *կամ* Փրատցիք, Տերսիմքի-Տերսիմքիք *ևւին*:

Կարգ ժը բառեր ունին կրկնակ յոգնակի ձևեր: Այսպէս՝ Պոկուցեմ-պոկուցեմներ, էզեստամ-էզեստամներ, ձրամ-ձրամներ, ձրամեմ, տեղամեմ-տեղամեմներ և այլն:

Հ Ո Լ Ո Վ Ո Ի Մ

Երզնկայի բարբառը Արևմտահայ գրական լեզուին նման առնի վեց հոլովական ձևեր, որոնք են՝ Ուղղական, Հայցական, Սեռական, Տրական, Բացառական և Գործիական: Արևելահայ գրական լեզուն և բարբառները ունին ներգոյական ձև մըն այլ, որ կը վերջանայ ում մասնիկով՝ Բաղբաբ-Բաղբաբում, Բրոբ-Բրոբում: Արևմտահայ գրական լեզուն և բարբառները ներգոյականի իմաստը կուտան գործածելով մէջ բառը՝ այսպէս, Բաղբաբին մէջ, մտքիս մէջ: Ասկէ գտա, Երզնկայի, ինչպէս արիչ բարբառներու մէջ, բային Ուղղական-Հայցական բուն ձևեր կը գործածուի առաւ համար ներգոյականի իմաստ մը: Այսպէս, կ'ըսեն՝ Ախրարս էգիմ է, փոխանակ բուխու էգիիմ մէջ է. տղան ինկաւ գետը, փոխանակ գետին մէջ է:

Երզնկա-Կամախ բարբառին զլիստը հոլովական ձևերը կ'ամփոփենք հետևեալ հինգ տարայներով:

Ա.— Ասկէա ամէնէն սոփորական ձևն է և նման մեր գրական լեզուի հոլովման կարգին:

ԵԶԱԿԻ

Ուղղական-Հայցականը բառին բուն ձևն է. այսպէս, բամ, առու: Սեռական-Տրականը ունի Ի վերջուորութիւնը. բամի, առուի: Բացառականը հոլովը կ'առնէ է զիրը. բամէ, առուէ: Գործիականը ունի Ով վերջուորութիւնը. բամով, առուով:

Յոգնակիի մէջ սեռական-տրականն է որ միայն կը տարբերի երկու ձևէն և կ'առնէ Ու վերջուորութիւնը: Կունենանք հետևեալ պատկերը.

ՅՈՎՆԱԿԻ

Ուղղ.—Հայցական	բամեր, առուներ
Սեռ.—Տրական	բամերու, առուներու
Բացառական	բամերէ, առուներէ
Գործիական	բամերով, առուներով

Այս հոլովման տակ զացող և այ վերջացող բառերէն ոմանք հոլովման տան կը կորսնցնեն իրենց այ մասը: Օրինակ՝ Փետայ, փեսի, փեսէ, փեսով, սատամայ, սատամի, սատամէ, սատամով, տղայ, տղի կամ տղու, տղէ կամ տղայէ, տղով կամ տղայով: Առնց յոգնակիները կը հետևին վերոյիշեալ բնոյհանուր կանոնին ու կ'ըլլան սատամաներ, սատամաներով, սատամաներէ, սատամաներով: Տղայ բառին յոգնակին կ'ըլլայ. տղայ, տղոց, տղոցմէ, տղոցմով:

Բ: Այս հոլովման տակ զացող բառերը կ'ունենան հետևեալ վերջուորութիւնները, թէ՛ կղակիէ և թէ՛ յոգնակիէ մէջ: Ուղղական-Հայցական հոլովները ամէն տանն նոյնն են, այսինքն բառին հիմնական ձևը, որով յաջորդ տողերուն մէջ այս մասին պիտի չխօսինք: Բացառական և Գործիական հոլովներն այ քիչ անգամ կը փոփոխուին: Միայն Սեռական-Տրական հոլովներն են որ զլիստը փոփոխութեան կ'ենթարկուին: Արեմն այս երկրորդ հոլովման տակ զացող բառերը կ'ունենան հետևեալ վերջուորութիւնները. Սեռական-Տրական Ու, Բացառական է, Գործիական Ով: Օրինակ՝ Ինով, ծովու, ծովէ, ծովով, ծովեր, ծովերու, ծովերէ, ծովերով:

Այս հոլովման տակ կ'երթան.

1. Միտմանկ բառերէն շատեր. ինչպէս, փար, հոր, հով, պապ, մամ, կոյ, մարդ և այլն:
2. Ծոռեր այն բառերէն, որոնք զբարբառ Սեռական-Տրականի մէջ Ոյ վերջուորութիւնն ունին: Օրինակ՝ Գլուխ-գլխու, շաքար-շաքարու, ամիս-ամսու, էշ-իշու, լոյս-լոյսու, Ատամ-Ածու և այլն:
3. Տեղական անուններու մեծ մասը: Օրինակ՝ Երզնկա-երզնկու, Փրտաիշ-Փրտաշու, Ազլով-Ազլու, Թիլ-Թլու, Կամախ-Կեմախ-Կամախու-Կեմախու, Մշու, Խարիերդու և այլն:
4. Բարբ Ի վերջուորութեամբ բառերն ու կ'երթան այս հոլովման տակ, կորսնցնելով Ին Սեռական-Տրականի մէջ: Օրինակ՝ Հոգի, հոգու, հոգիէ, հոգիով կամ հոգով: Գինի, գինու, գինիէ:

գինիով, բարի, բարու, բարիէ, բարիով կամ բարով, գարի, գարու, գարիէ, գարիով-գարով:

5. Քանի մը Այ վերջուորութեամբ բառեր ալ կը հոլովուին այս կերպով: Օրինակ. Շամբայ, ցաբու, ցամբէ, ցաբով, տղայ. տղու, տղէ, տղով:

Գ. Երբորդ հոլովումը ունի հետեւեայ վերջուորութիւնները.

ԵԱԱԿԻ

- Ան.—Տրական — Ան
- Բացատական — Է
- Գործիական — Ով

ՅՈԳՆԱԿԻ

- Ան.—Տրական — Ու
- Բացատական — Է
- Գործիական — Ով

Այս հոլովման տակ կ'երթան.

1. Գլխաւորաբար այն բառերը, որոնք միապանկ են ևւ գրասրահի մէջ ունին արմատական Ն զիրը իրենց վերջը: Օրինակ. Գուռ, գաս, ծաս, թաս, նուռ, փուռ, ձուկ, մուկ եւն: Կը հոլովուին այսպէս. Գուռ, գասն, գուռնէ-դռնէ, գուռով-դռնով, գռներ, դռներաւ, դռներէ, դռներով:

2. Ում վերջուորութեամբ բառեր, օրինակ. եթում, աւետում, խաւարում, սուտմ եւն: Կը հոլովուին այսպէս. Ուտում, ուտումն, ուտումէ, ուտումով:

3. Իկ վերջացող բառեր, օրինակ. Կնիկ, էրիկ, ազջիկ, ծաղիկ եւն: Կը հոլովուին այսպէս. Կնիկ, կնկան, կնիկէ-կնկէ, կնիկով-կնկով, կնիկներ, կնիկներու, կնիկներէ, կնիկներով:

Գ. Այս չորրորդ հոլովման տակ կ'երթան ժամանակ ցոյց տուող բառեր ևւ կը հոլովուին այսպէս. Եղակի Սեռական-Տրականի վերջուորութիւնն է Ուան, Բացատականի՝ Ուրնէ, Գործիականի՝ Ուրնով ևւ մերթ ալ Ով: Ասոնց յոգնակն սովորականին պէս կ'անէ Ու, է, Ով վերջուորութիւնը:

Օրինակներ. ժամ, ժամուան, ժամուրնէ, ժամուրնով կամ ժամով, հերու, հերուան, հերուրնէ, հերուրնով, իրիկուն, իրիկ-

ւան, իրիկուրնէ, իրիկուրնով կամ իրիկունով: Այսպէս կը հոլովուին նաև տտու, տարի, օր, վաղ, գիշեր ևւ նման բառեր:

Ե. Հինգերորդ հոլովման տակ կ'երթան քանի մը տեղական անուններ, որոնք Սեռական-Տրականի մէջ թէև Ու-ով կը վերջանան, բայց մերթ ալ, համաձայն այս հոլովման, փոխանակ Ու-ի կրնան առնել նաև Այ: Այսպէս. Էրզրում-Էրզրումայ, Փքալիզ-Փքալիզայ, Բագալիզ-Բագալիզայ, Լուսաւորիչ-Լուսաւորչայ, Վան-Վանայ, Բզվան-Բզվնայ ևւն:

Ասոնցմէ զուրս գտնուած հոլովական ձևերը նայն են Աբւստոսհայ գրական լեզուի հոլովմանց հետ, հետեւեայ տարբերակներով. Տագր-տագիր-տագիրոջ, տագրէ-տագիրոջմէ, տագրով-տագիրոջմով, ներ-նիրոջ, տալ-տալոջ, կեսուր-կեսարոջ-կեսեր, կեսար-կեսարարոջ, կեսարալէ-կեսարարոջմէ, կեսարով-կեսարարոջմով ևւն:

Շուն կ'ըլլայ շան, տուն-տան:

Բացառիկ հոլովական ձևեր են նաև հետեւեայնները. Օրանց (օր մը օրանց), սրտանց, մօրուց, հինաց, թերմուց, շատուց, պրկ-սիկուց, առաջուց, հեռուանց:

Կան գրարարածև հետեւեայ հոլովները անեղական բառերու. — Բազմիւմ-բազմեց, հարսնիւմ-հարսնեց, մօրոււմ-մօրուանց, աչք-աչից, մեղք-մեղաց ևւն:

Երգիկայի բարբառը ունի Բացատականի ժամանար ձև մըն ալ: Բառին վերջը կ'աւելցնէ մնէ ժամոնիկը: Այսպէս, փոխանակ րսեյու ախօթումէ լսեցի, կ'ըսէ նաև ախօթս մնէ լսեցի: Կ'ըսեն նաև, օրինակի համար, ես բու մնէ չիմ վախմար, մարդոց մնէ ա չիմ ամբար, ամմա Ասմու մնէ կը վախմամ: Այս մնէ Բացատական շինող ժամոնիկը հաւանարս գրարարի ում ևւ ինձ գերանաներու Բացատական ձևերն եղող յումնմնէ, յիմնմնէ բառերուն վերջին վանկերն են, մնացած զուտական բարբառներէ սմանց մէջ:

Հոլովուած բառերը մ'իշտ ալ չօղ կ'առնեն խոսակցութեան բնթացքին: Սեռականի ևւ Տրականի տարբերութիւնը Ն չօղի յուրումով չի գտնապնտուիր: Օրինակի համար, կ'ըսեն. ես պատախի տունը գացի, կամ ես պատախի չի գորկի: Պարագան նայն է ասոնց յոգնակի ձևերուն մէջ ալ: Պատասմնրում թէ՛ Սեռական է ևւ թէ՛ Տրական:

Ա Մ Ա Կ Ա Ն Ն Ե Ր

Ածականներու քերականական կառուցքն ու գործածութիւնը ընդհանուր դժեբայ նման է Արեւմտահայ գրական լեզուին, սակայն կարգ մը առանձնաբարկութիւններով: Անցողակի նշենք այդ առանձնաբարկութիւնները:

Ածականներու համեմատական երեք աստիճաններն ալ գոյութիւն ունին: Գրական աստիճանը նման է գրական լեզուին: Օրբինակ, կ'ըսեն. Մեծ մարդ, խոշոր սոսի, սլոյտիկ թոյ (կարծ հասակ): Բաց-գատական աստիճանը կը շինուի Բացատականի երկու ձևերովն ալ: Օրբինակ. Ըս տունը ըն տունէն մեծ է. ու նաեւ. Խմ ախարս բու ախարսը մնէ ուժով է: Կայ նաեւ բաղդատականի ձևէ մը գրարար քան զ. ձևին մէկ փոփոխակովը, որ է քըզ: Այսպէս, Խմ քարս քըզ քուկը ոմտիկ է: Բաղդատականի համար գործածական է նաեւ թուրքերէնը դրիս բառը: Մեր գեղը Վեր գեղէն դրիս խոշոր է:

Գերազարկանի համար կը գործածուին ամէնէն, ամէնքէն նաեւ թուրքերէն մն բառերը: Այսպէս, կ'ըսեն. ամէնքէն մեծը, ամէնքէն կամ ամէնքէն կոխը, և կամ մն մեծը, մն կոխը: Կան նաեւ տեսակ մը կրկնակ անականներ, որոնք գերազարկանի իմաստ կուտան: Այսպէս. Կոփ-նոր, նեփ-ներմակ, սեփ-սեւ, կաս-կարմիր, կրս-կիր, դեփ-դեղին, կաս-կասուտ, շիփ-շիտակ, չոփ-չար, մաս-մախուր և այլն:

Քանակական թուականները հետեւեալ պատկերն ունեն կը-գրեկայի բարբառին մէջ — ՄԷզ, Էրգու, Իրեք, չարս, Էիկզ, վեց, օխըը, ուքը, ինը, դասը, գամբմեզ, գամբերցու, գամբիրեք. գամբըոս, գամբիկնզ, գամբվեց, գամբոխըը, գամբուրը, գամբիմը, քամն, քամբմեզ, և այլն. Էստու, Էքսու, վազնու, Էրսու: Կրսուի նաեւ դասվերկու, դասվիրեք: Ետեանս-սան, ու Քուսան, ինասան բառերուն տեղ կը գործածէին ասոնց թուրքերէնները. Եէք-միշ, սէք-տէն, սոխսամ: Կը գործածէին նաեւ քիւր թիւը, որ կը հնչէին քյար, չափապանց մեծ թիւ մը ցայց տարւ համար:

Գոտական թուականներու համար գրական լեզուի բարդ կամ երարդ մասնիկները կը գործածէինք մենք իմ մանկութեան օրերուս: Ասոր պատճառն ալ թերեւս այն էր, որ շաղարին մէջ գարսական կրթութիւնն ընդհանուր ըլլալով, գարսցին չմարհի այս գոտականները, ինչպէս նաեւ ուրիշ գրական բառեր, սովորական գործած էին

մեր լեզուին մէջ: Բայց թէ գիշերու մէջ, ուր գարսցին ազդեցութիւնը դեռ տկար էր, ինչ կը գործածէին գոտական թուականներու փոխարէն, որոշ բան մը շեմ կարող ըսել:

Կը գործածէին առաջին, առաջինկ-առաջինկ, Խոբքնիկ, միշ-մեկ-միքնիկ:

Բաշխական անականները կը կազմուէին ակամ մասնիկին յաւելումով. Մէկակամ, տասնակամ և կամ թիւերու կրկնութեամբ: Մէկ-մէկ, Էրկ-Էրկու, Իրեք-իրեք և այլն:

Բազմապատկութիւնը կը կազմուի հեղ բառի օգնութեամբ. — Չարս հեղ չարս, օխըը հեղ օխըը և այլն:

Գ Ե Ր Ա Ն Ո Ի Ն Ն Ե Ր

Աշխարհարար լեզուի գրեթէ բոլոր գերանուններն ալ կան կրկնակ-կամախ բարբառին մէջ հնչական և ձևական տարբերակներով: Կուտանք ստորեւ այդ գերանունները իրենց պատկան ձևերով:

ԱՆՁՆԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Եղակի. Ուղղական — Ես: Երգեկայի բարբառին մէջ սա կը հնչուի Էս: Օրբինակ. Էս քեզի ըսի քի ըսօր Էս դպրոց պի չեքամ:

Հայցական — Գրարար Հայցականի Զ գիրը ձգուած և կողմ-մըւած է իս: Օրբինակ. Գուս իս չես նաշար: Իս մի նեղացներ, չէ նր գիտես քի իշ կ'ըլլայ Խոբք:

Սեռականը նման է գրական լեզուին — Իմ:

Տրական — Ինձի: Օրբինակ. Ի՞նչ, չըսի՞՞ քեզի քի իմ գիրքս ինձի տար:

Բացատականը կը կազմուի մէկի աւելի ձևերով: Ա. Սեռականի վրայ կ'աւելցուի վերջ լեռուած մնէ բացատականակերտ մասնիկը. Իմ մնէ: Բ. Ուրիշ ձև մըն է ինէ: Գ. Իզմէ, որ ինձմէ-ե մէկ տարբերակն է: Օրբինակներ. Իմ մնէ չես վախճար նր Ասործմէ՞՞ ա չես վախճար: Ինէ քեզի գարար չի գար, ախարս: Իզմէ լաճդ դու քեզի պանէ:

Գործիականը նման է գրականին, միայն թէ Բացատականին

Նման հոս ալ ինձմալ-ին Զ զիբը կը փոխուի Զ-ի և Ն զիբը ալ կ'իջ-
նայ և կ'ըլլայ իզմալ :

Անձնական գերանուններու եզակի առաջին զէմքին յոգնակին
Արևմտահայ զբական ձևին նման է . ԼԲԵՆԲ, մեզ, մեր, մեզի .
մեզմէ, մեզմալ :

Երկրորդ զէմքը կը հարմուի գրականին գրեթէ նման . Գուճ .
Բեզ, Բու, Բեզի, Բեզմէ կամ Բեճէ, Բեզմալ : Յարկակի . ԳուԲ, ձեզ,
ձեր, ձեզի, ձեզմէ-ձեճէ, ձեզմալ :

Երրորդ զէմքը երկու ձև ունի, ամ և ինք, որոնք կը հարմ-
ւին այսպէս . եզակի . Ուզդական-Հայցական . Ան, ինք, ինքը : Աւա-
կան-Տրական . անը, իրեն : Բացառական . անկէ, իրմէ : Գործիական
անալ, իրմալ : Ասոնց յոգնակին կ'ըլլայ . Անոնք, իրենք, անոնց .
իրենց, անոնցմէ, իրենցմէ, անոնցմալ, իրենցմալ :

ՅՈՒՅԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Երկնայի բարբառին մէջ ցուցական գերանունները մէկէ ա-
ւելի ձևերով կը գործածուին : Ասոնց գործածական ձևերն են .
Աս, ադ, ան, ըս, ըդ, ըն, սը, դը, նը : Ասոնք կը հարմուին հետևե-
տալ ձևերով .

ԵԶԱԿԻ

Ուզդ —Հայցական
Սևս —Տրական
Բացառական
Գործիական

Աս, ադ, ան
Ասոր, ադոր, անոր
Ասկէ, ադկէ, անկէ
Ասալ, ադալ, անալ

ՅՈԳՆԱԿԻ

Ուզդ —Հայցական
Սևս —Տրական
Բացառական
Գործիական

Ասոնք, ադոնք, անոնք
Ասոնց, ադոնց, անոնց
Ասոնցմէ, ադոնցմէ, անոնցմէ
Ասոնցմալ, ադոնցմալ, անոնցմալ

ԵԶԱԿԻ

Ուզդ —Հայցական
Սևս —Տրական
Բացառական
Գործիական

Ըս, ըդ, ըն
Ըսոր, ըդոր, ընոր
Ըսկէ, ըդկէ, ընկէ
Ըսալ, ըդալ, ընալ

ՅՈԳՆԱԿԻ

Ուզդ —Հայցական
Սևս —Տրական
Բացառական
Գործիական

Ըսոնք, ըդոնք, ընոնք
Ըսոնց, ըդոնց, ընոնց
Ըսոնցմէ, ըդոնցմէ, ընոնցմէ
Ըսոնցմալ, ըդոնցմալ, ընոնցմալ

ԵԶԱԿԻ

Ուզդ —Հայցական
Սևս —Տրական
Բացառական
Գործիական

Սը, դը, նը
Սըւոր, դըւոր, նըւոր
Սըկէ, դըկէ, նըկէ
Սըւալ, դըւալ, նըւալ

ՅՈԳՆԱԿԻ

Ուզդ —Հայցական
Սևս —Տրական
Բացառական
Գործիական

Սըւոնք, դըւոնք, նըւոնք
Սըւոնց, դըւոնց, նըւոնց
Սըւոնցմէ, դըւոնցմէ, նըւոնցմէ
Սըւոնցմալ, դըւոնցմալ, նըւոնցմալ

Օրինակներ ցուցական գերանուններու գործածութեան : Ըս ,
Krekor Baghdikian

Բ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՇԵՐ

Մ Ո Ւ Տ Ք

Հիմա որ մեր պատմութեան մէջ անմախքնբաց փոքորիկ մը որդէն աւեր ու ամայի դարձուցած է Տանկահայաստանի հետ մահու ծննդավայրս եզոզ երգնկան, կսկիծով ձեռք կ'առնեմ գրիչս՝ հոգիով վերադառնալու համար հոն, ուր մանկութեանս արեւոտ օրերը սահեցան մեր սարերէն իջեռոզ կարկաչուն առուներուն նման:

Գիտե՛մ, հիմա մեր տան հետքն անգամ չկայ: Մեր եկեղեցու զանգակին ձայնը շատոնց լռած է: Մայրս չ'սպասեր ինձ մեր տան սեմին ու ընկերներուս կանչը չի լսուիր ծուռ ու մուռ փողոցներուն մէջ: Բայց հոն է եփրատը՝ Արշակայ կամուրջին մնացորդներով: Հոն են Ղազանզան, Մնձուրը, Սեպուհն ու Սրեգորը: Մերմանը իր յստակ ու անուշ ջրով կ'անցնի այն կանաչաւէտ ափերէն, որոնց վըրայ Չարչարանաց Լուսաւորչի վանքն էր: Հոն է այն պատշգամածու լեռնալանջը, որուն վրայ Պօղոս-Պետոսի վանքը կը հանդէշէր: Ս. Նիկողոսի վանքին վայրէն ցած Բաղնիքի Չորն է, ուրկէ գետակը կը հոսի Բաբերուն գարնուելով ազմկածայն, հասնելու համար Փրսսիի այգիներուն:

Այո, հոն են այն բալթր գեղեցկութիւնները, որոնք եկեղեցիքնական երապոյրը կազմեցին հերանոտական ժամանակներէն սկըսած: Բայց հոն չէ մարդը՝ Հա՛յ մարդը, որուն արիւն քրտինքով այդ հողերը բեղմնաւորեցան, Բաղնիքն ու գիւղերը շէնցան, և որուն երգ ու ծիծաղով հովիտներն ու լեռները կենսաւորեցան:

Բայց պէտք է երբայ, վերադառնալ ուխտաւորի մը պէս երկլիզած, աւերակներուն մէջ փնտռելու ցեղիս հոգիին հեծեծանքը, անոր վաստակին ափնիները, սարերուն և հովիտներուն մէջ հաւաքելու Հայկի սերունդներուն սիրուն, երազին, երգին ու աղօթքին արձագանցները: Յաւազին, զժուար բայց և նուիրակամ պարոպ է, այս, դոր պլտի քանակ կատարել յեցած մեր յիշողութեան և հայրենակիցներու յիշեցումներուն:

ԵՐԶՆԿԱՅԻ ԴԱՇՏՈ

Գեղեցիկ էր մեր հովիտը, Երզնկայի գաղաթը: Չեմ գիտեր թէ չի՞մ ալ գեղեցիկ է ան, երբ հեռացած է անկէ հայուն շունչը:

Արեւելքէն արեւմուտք երկարաց երկու լեռնադարեր կուգային ու գրեթէ կը միանային՝ շինելով ձաւաձև մը, որուն երկու նկղիկ ծայրերը կը կապէին երկու կիրճեր: Անոնց մէջէն մտնելով կը հոսէր Եփրատը: Արեւելեան ծայրի կիրճը կը կըշուէր Մանուսակէն: Արեւմտեանը կամախի կիրճն էր, որ կը միացնէր պատմական Եկեղեցացը Գորանաղեաց գաւառին հետ: Արեւելեան կիրճը կը բացէր Դերջան գաւառին վրայ: Հովիտին կամ գաղաթին երկայնքը, արեւելքէն արեւմուտք, չեմ կարծեր թէ երևուն մղանն աւելի էր իսկ յաջքը, հիւսիսէն հարաւ, չորով տասնհինգ մղան:

Գաղաթ պարսաւանոյց լեռնաշխիւները շարունակութիւնն են այն երկայն շղթային, որ Մասիսէն կը սկսի և՛ գանազան անուններով կ'երկարի մինչև Եփրատ՝ Մեծ Հայաստանի արեւմտեան սահմանը: Հովիտին հարաւային սահմանը կը գծէ Մեծուրը, որ կը բաժնէ Երզնկայի գաւառը լեռնոտ Տերսիմէն: Մեծուրի երկու գագաթները, Մերձանն ու Դարան Դալան (Կաթախաձև փոխ) արթուն պահակներու նման կը հսկեն հովիտին:

Հիւսիսի լեռնադարին զիտուր գագաթներն էին Քէչիչ տաղ, Պոզոս-Պետրոսի վանքին վերև, Արնոյր (Հաւանադար Սուրբ Գրիգոր), որուն վրայէն կ'անցնէր Տրապիզոնի ճանապարհը, և Չորասախին, որուն կիրճին մէջէն կը զտարուէր Անբաստիա տանոյց ձամբան: Մէկը որ կարուած են հայկական անունները այս գագաթներուն:

Երզնկայի գաղաթն արեւմուտք, կամախի կիրճին վերև, գէպի հիւսիս, կը բարձրանայ Սեպուհ լեռը, որ սահմանն է Եկեղեցաց և Գորանաղեաց գաւառներուն: Սիբիլի կը հնչէ միջ Սեպուհ անունը, զի զպրոցի մեր առաջին գաւառունէն իսկ սարգիցածը թէ ան կապուած է անուններուն երկու մեծ հայերս՝ Տրգատ Թաղաւորի և Քրիզոր Լուսաւորչի: Անոր կողերուն վրայ կը հանդէպին սրբափայլեր, որոնց յիշատակութիւնը մեր սրտերը կը լիցնէր թախիճով: Կը յիշեմ, մանկութեան օրերու անուշ յիշատակ, երբ Լուսաւորչի տանին, ամառուան մէջ, ուխտաւորներու բազմութիւններ, երգով ու ծիծաղով ձամբայ կ'ելլէին գէպի Սեպուհ՝ Լուսաւորչի

վանքը: Ես և՛ ինձ նման պատաններ հիացումով կը զիտէինք մեկնոց երիտասարդներու հոգար ու կայտառ խոսքերը և՛ կ'երազէինք այն օրը, երբ մենք ալ պիտի երթաւորաց ըլլայինք, խոսուելու համար ուխտացնոց այդ կողմններու խոսքերուն: Տոնկան օր մըն էր անոնց վերագործը, քանի մը օր յետոյ: Ամբողջ քաղաքը կը թափէր զերեզմանատան մասէն անցնող կամախի ձամբան վրայ՝ ողջանելու վերադարձոց ուխտաւորները:

Եւ, ահա՛, կուրային անձր, խոսք խոսք, երիտասարդներն հեպտան, տարեցներ և՛ կինը ձիերու վրայ: Երիտասարդներն ունէին դաւազաններ, որոնց ծայրերուն վրայ ամբողջուած էին Անդուհի կողեղէն հաւաքուած անխտամներու փունջեր: Իրենց գաւազանները բարձր բանձ, նման բուրաւու ջահեր, անձր կը յառաջանային չարքերով, աղային յեղափոխական երջերն իրենց շրջիներուն: Ազատութեան օրը էին, Մահճանադրութիւնէն յետոյ, կարձառե ու խորաւոյի ազատութիւն, աւա՛ղ...:

Գաղաթի կեղրանը, գէպի արեւմուտք, Երզնկա քաղաքն էր, հայ և թուրք բնակչութեամբ, Եփրատէն չորով երեք մղան հիւսիս: Քաղաքին չորով ամբողջ գաղաթ թանձ էին հարիւրէն աւելի դիւղեր, մեծ մասամբ թուրք կամ քիւրա: Այս դիւղերու անունները մեծ մասամբ հայկական էին, մէկ մասը ազատագրուած: Գնակներ թէ Մուղալուր Մեղրալուր էր, Գոմքօրը՝ Սուրբ Գրիգոր, Արպիհանը՝ Սուրբ Օճան, Թիչկիլը՝ Թրակ Եւն: Հայկական դիւղերուն մէջ նշանուար էին Մեղրալուր կամ Մեղրալուր, Երկան, Մթնիկ, Տաճարակ, Կարմրի, Աղբակ, Ուսեկ ևւն: Պատմական դիւղեր էին Թիլի, Խաւն, Չրմախ, որոնք յիշուած են Փաւստոսէ և՛ Ստրեւայիկ: Մէկը, որ թուրքերով էին անունը: Բարբարոսներ կամ բանութեամբ թրքացուցին անոնց ընկիները և՛ կամ խլեցին անոնց ձևքէն այդ դիւղերը: Այս դիւղերը շինուած Գայլ դեպի ափերուն, կը գտնուէին քաղաքին հիւսիս արեւմուտքը և՛ էին պարտիզապատ ու այդուէտ:

Քաղաքէն գէպի հիւսիս արեւելք լեռան ստորտան է ձիթին մեծ դիւղը: Բնակիչները հայտակաց թուրքեր էին, որոնք, կը պատմէին, զեռ ոչ շատ հեռուոր անցեալին բնութեամբ թրքացած էին: Անոնցմէ անձր զեռ կը պահէին հայկական մականունին մտայնորդներ: Այս դիւղին մէջ կային Եկեղեցիի աւերակներ: Անոնք գիտէին, որ իրենց պայպերը հայ էլած էին: Բայց ինչո՞ւ իրենք բուն թուրքէն աւելի հայտակաց էին գարձած...: Կը յիշեմ, երբ ձիթինէն հիւսիս

արեւելք գանուսդ Ս. Նիկիտոսի վանքը կ'երթայինք, Հայրս կ'արագացնէր իր ձին, որպէսզի մտիք շփտած անցնէինք ձիւքին պարտակցնէին: «Վասնզայտար շունկը են» կ'րէր, մարտկելով իր ձին:



Երզնկայի դաշար բարերէր է և ջրտուտ: Տաննակ մը վրտակներ կ'իջնեն հրեօսի և Հարաի լեռներէն և կ'ստոգեն զայն: Լեռնակոյտեր կամ անոնց սարսար գանուսդ զիւղերը պարակցնէրոյ է ալյիներով շրջապատուած էին: Դաշտամէլի զիւղերը Հայրս յարսերու և բանջարեղէնի մշակութեամբ կը զրայէին: Զբարբի էին նոյնիակ ցորենի և զարբի դաշտերը: Յարենը կը հասնէր տասնամեակ ազու մը հասակին բարձրութեան, ու կըր զամին կը փշէր, արուերը կը ծփային ծափ ալիքներուն նման:

Իրկունն ու Արքակները, Փթտաճան ու ձիւները, Յիշն ու Աօրեր կուտային մեղ իրենց համեղ խաղաղը, ծիրանն ու զեղծը, կեռանն ու սալորը, տանձն ու խնձորը: Երբ աշուկութի կը վերջանար, տեկերու մէջ լեցուած էրկնայ զինին բազաբ կուտար ձիու կամ իշու թեւերով և կը լեցուէր կարսաներու մէջ:

Արտաի ժողովուրդը էր Երզնկացին, զիւղով թէ քաղաքով: Բարեկեցականին, կըր գուտն ու գուսանն քաղաք կ'իջնէին, և փոզոցներուն մէջ ու ամառներու վրայ շարժուողը կը գտնար, կուտաներ թերաններ կը բացուէին և համեղ զինին կը հասէր առատութիւն: Մենք՝ պղտիկներս այ անտան չէինք մտար անկէ: Հայրս կը լեցնէր գուտները ճաշի տանն ու տալով մեղ կ'րէր: «Մեղեցէք, աղաթս, և անուշ արէք»: Եւ մենք այ կը խոկէինք կարմիր զինին, որ իրապէս անուշ էր: Երբեմն այ շափը կ'անցրնէինք: Մեր գուտներն այ կը տարանային և խնեթութիւններ կ'ընէինք: Հայրս կը սերէր մեր մանկական խնեթութիւնները, պարկէ կուտար մեղ և ինք այ ծափ կը գարնէր...:

Թամիկ ժողովուրդը Եկեղեցաց գուտար կը ստուգարանէր որպէս Եկեղեցիներու գուտս: Արքարեւ, Հարուստ էր Երզնկայի դաշար որբովայներով: Անտոն աննկով թաղմաթի աւերակ ուխտատեղիները, յիշենք միայն կանդուն վանքերը: Բաղաբին արեւմտեան կողմը Սեպուհի քաղաքին կը գանուէր Եօզակաթի վանքը, զոր ժողովուրդը կ'անուանէր Եսոխայի վանք: Անկէ վեր կը գանուէր Ս. Յուկորս՝ լեռնակոյցի մը վրայ մեկուսացած: Հրեօսի լեռնաշղթային

կողերուն, արեւմտեան արեւելք, կային հեռեկայ վանքերը: Ս. Կարապետ, Պօղոս-Պետրոս, զոր ժողովուրդը կը կոչէր Պօղոս-Պետոս, և Փթտաճ զիւղին մօտ՝ Ս. Նիկիտոսի վանքը: Հայրս՝ Մընձուրի կողերուն, արեւելքէն արեւմտաք, կային՝ Չարչարանաց Լուսաւորիչ, Ս. Գեորգ, Ներսէս Հայրապետ և Ս. Կիրակոս վանքերը:

Փամանակին այս վանքերը Լեզմ էին հողերը և մտար կեանքի վառարաններ: Դեռ տեղահանութիւններէն կէս մար տասջ վանահայրեր կային անոնց մէջ: Բայց կըր և աշգրես բացի, վանահայրութիւնը արդէն զրեթէ պատմութեան անցած և անոր տեղ ըրունած էր նոր բառ մը՝ վանապետութիւն: Առաջնորդարանը վարձու կուտար վանքերը վանապետներու, որոնք վանքերու մօտիկ զիւղացիներ կ'ըլլային ընդհանրապէս: Վանապետ իր ընտանիքով կը ընակէր վանքին մէջ, կը մշակէր անոր հողերը, կը տանէր անասուններ և հող կը տանէր սրբովայներուն: Եւ որովհետեւ վանքերը նաեւ առարանայներ էին քաղաքացիներուն համար, վանապետ կարեւոր եկամուտս մըն այ կ'աղահասկէր ամարանոցի համար վարձու տրուած տեղակներէն:

Մենք ամարանոց կ'երթայինք ընդհանրապէս կամ Չարչարանաց Լուսաւորիչ և կամ Ս. Նիկիտոսի վանքերը: Մէյթէկ անդամ այլ պոցեր ենք Ս. Կիրակոսի և Եսոխայի վանքերը: Ամէնէն աւելի կը սիրէինք տաղին երկուքը թէ՛ իրենց զիւրքին և թէ՛ շրջապատին համար: Չարչարանաց Լուսաւորիչը շինուած էր Մնձուրի ստորտը հարթավայրի մը վրայ, շրջապատուած բարձր պարիսպներով, որտեղ հին թրքերու նման ունէին իրենց զիտանդանին այ, քանի որ վանքը յաճախ ենթարկուած էր թերաթերու կողոպուտին: Վանքին առջեւէն կ'անցնէր Մերձանի վճիտ գետակը, որուն համեղ ջուրը մինչև քաղաք կը տանէր ծախելու: Դեռտակին և վանքին միջեւ երկու սարստութիւնը մարդպետան էր, որուն վրայ կային հակայ անկուտ թիկնիներ, որոնց համար պտուղները կը վախէին ուխտատրները, մանաւանդ անոնց տղաքը:

Ամառուան երեք ամիսներուն, կըր տաք կ'ըլլար քաղաքը՝ որ կը տառապէր մօտակայ ճահեներու պատճառով մաշարիայէն, ժողովուրդին մէկ կարեւոր մասը կը քաշուէր զէպի լեռնամերձ զիւղերն ու վանքերը: Արբերը կը մտային քաղաք իրենց զործերուն թեքումով: Եարաթի օրերը միայն անոնք, թեւաւորուած ուսելիքներով, կ'երթային ամարանոցները՝ միանալու իրենց ընտանիքներուն: Եարաթը սպասուածի օր կը մեկ՝ պղտիկներու համար: Ակրն-

դէս կը սպասէինք ճամբուն վրայ, ուրիշ մէր Հայրերը պիտի գտային: Երբ անոնք կ'երևուէին Ազգակի աշխիներու սահմանէն ասդին, կոր Լուսաւորէն էինք, կամ վեր կը բարձրանային Փիթանայն ձորէն զէպի փանջին սարահարթը, Ս. Նիկիպոսի մաս, կը սուրայինք զի՛մաստերն մեր սիրելիները: Հայրերը կը քաշէին իրենց փաթերը իրենց ձիերու գլուխներուն վրայ, ուրիշներ վար կ'իջնէին ձիերէն տեղ տայու համար իրենց ասրեց սրկներուն:

Մենք հինգ եղբայրներ էինք, եւ անոնց ամէնէն ասրեցը: Հայրս վար կ'իջնէր ձիէն եւ կ'ըսէր Սամուէլ եղբորս, որ ինք հեծնայ: Ան արդէն սեմիջապէս ձիուն կ'անտին էր՝ իր ետին ասնելոյ վահանն ու Գրիգորը, փաքը եղբայրներս: Իսկ եւ ու Յոսիան եղբայրս կը քաշէինք հօրս հետ եւ կը խօսակցէինք անոնց շարժումն մեր անցուցած կեանքին մասին: Միջանկեպոյ բոսձ թէ հայրս մեր սանտարիքը բնորոշ էր մեր պատմութեան մեծերէն եւ հերոսներէն: Սամուէլը՝ Բոֆֆինէն էր, Գոարդէն ու Մերանցին: Երբ կը ժամանայինք փանքի ճոռսասանին՝ մեր մայրերն ու քոյրերս, ինչպէս եւ ամբողջ մտղմուրդը փանապետոյ միտսին, մեկը կը սպասէին: Ի՛նչ իրարանցում, ողջպարում, քրքիջ ու կանչ: . . .

Յաջորդ ստատստուն սամափարները կը գրուէին փասկին եւ զերքը կամ ծառերուն տակ եւ նախածաշր կը փայտէինք զուարթ միջուայրսի մը մէջ: Պատյաներ կը կայմակերպուէին Լուսաւորէն Ջուզիանց՝ Մոճուրի տակ, ուրիշ Մերանոյ վար կը հասէր փրփրաղկ ու շատաշուն՝ սպասամներուն զարնուելոյ: Կամ կ'երթայինք զէպի Ազգակի զիւզը, զէպի Արնոյսը կամ Մարաջուր: Իսկ Ս. Նիկիպոսին՝ զէպի Փիթոսին, ուր սպրականներ ունէինք, կամ զէպի Բազմիքին Չարը, որ Մերանի նման ջուր մըն էր: Հոն ջուրին եղբքը, բարաններուն տակ, մայրս կրակ կը փռուէր կերակուրի պտարստութեան համար, մինչ տղասը կը մտայցէինք զկտակին հետ ձորն ի վեր, ջուրին եղբքը լիքան հատղ (մօրս) հուսաքելու, կամ յեանակոյն խարժիկ եւ գար փնտտելու:

Ս. Նիկիպոսի փանքին զիւրքը բարձր էր: Անիկ կարսիկ էր տեանէլ գաշատփայրին մեծ մասը: Առջեւէն փռակ շէր անցնէր: Բնոց քիչ վեր լիքան կողէն ջուր մը կը բլլոյր, սառ ու անոնչ ջուր, որուն մէկ մասը փանք տարած էին խմելու եւ յուսացել համար: մնացեալն կ'երթար կը հաւաքուէր ասպանի մը մէջ, որ կը ծառայէր թէ՛ որպէս յարարան մեղ՝ սպրցս համար եւ թէ՛ սրղէս ստղման ջուր փանքի թիթասանին:

Երեկոնները, ճաշէն տառջ, հայրս մեզ կ'աննէր ու կը ասնէր այդ անին մաս: Մայրս պաշտասակէն կը հանէր փոքրիկ շիշը օդիկ եւ կը դնէր գանջ ջուրին մէջ, որ պոպի: Յետոյ կը պտարստակը մէկը հայրիկիս համար, քանի մը ձիթապտուղ եւ մէկ երկու քանջարեղէն: Կը լեցնէր սառ օդին փոքրիկ գլուսթի մը մէջ եւ կուտար հօրս: Մինչ ան անոնչ կ'ընէր ու կը խօսակցէր մօրս հետ, մեծք թատած ապատաներուն վրայ՝ կը գրախէնք մեր զէմը փանքին ուղիքն եւ պիանի՞ կուտայինք կարաններս: կարկաշին՝ մայրերու մէջէն:

Երեք գլուսթէն աւելի չէր խմեր հայրս: Գոհաթեամբ կը սրբէր իր թխը, մինչ մայրս մնացորդ ասեղիքը կը զեանդէր պաշտասակին մէջ: Յետոյ ուրսիս եւ գո՛ճ կը վերադառնայինք մեր սենեակը եւ կը ճաշէինք:

Լուսնակ զիշերներուն կը սիրէինք երթոյլ եւ նստոյլ փանքի ստրտանդին ծայրը եւ զգետլ մեր սիրելի զաշատփայրը: Ամէն ինչ խաղալ էր: Հետեւ լիւնները յունի լոյսոյ սպողում, միջնաղին մէջ կարծես կ'երազէին: Եփրատը, արձաթ մայրակէնի մը նման, կ'երկարէր հոյիտին մէջէն: Կեանքը պարզ էր եւ քաղցր, եթէ ըլլար զիշատիչ զալլին ստուերը մեր վերեւ: . . .



Եփրատը, որուն թուրքերը Ծրաս կ'ըսէին, արեւելքէն Սանաս կերճէն կը աննէր Երզնկայի գաշաք, պահ մը սղեղ զէպի արեւմտաք երթալ յետոյ, կը ծուր քիչ մը զէպի հիւսիս եւ ճամբուն զբայս երկու կողմեր կը ձուսանէր, որունցմէ մէկուն մէջ երկու եւ միւսին մէջ ալ շարս զիւզեր կ'աննէր: Անպէտոյ զեար կը բանուէր երկուք, որոնք կը կուտէին մեծ ու սղթիկ զեանք, համաձայն իրենց ծառային: Բազաքին հարսար աչս երկու զեանքը կրկին կը միանային եւ Եփրատը քիչ մը հարաւ հակելոյ կ'ուղղուէր զէպի Կոմսիսի կիրճը:

Քաղաքէն շուրջ երեք մղոն հարաւէն կ'անցնէր Եփրատը, քոսիքը: Ան հոն կը կարճէր արժուկ մը՝ հին կամուրջի մը մնացորդներով: Այս մնացորդները ծանոթ էին մտղմուրդին Արշակայ Կամուրջներ անունով: Անշուշտ այդ պէտք է ըլլար վերջին Արշակը, որ, Հոյաստանի բաժանումէն յետոյ, Երզնկան քնարեց իրեն՝ սրղէս մայրաքաղաք: Արշակայ Կամուրջները քաղաքի հայ տղոց լողալու վայր

բնն էր: Ամբան տաք օրերուն հօն կը վաղէկնք մենք՝ պզտիկներս, յաճախ հակառակ մեր ծնողաց կամքին:

Փամանակի ընթացքին զեար փութամ էր իր ուղղութիւնը և կամօւրջին հիմերը կազմոց քարակոյտերը դարձամ էին զեակզերբի պահակները՝ ջուրի հասանքին դէմ: Ամէն քարակոյտ լողայու առանձին նշանակաւ մըն էր: Եւր լողալ սարձոյնները իրենց փութները կը կատարէին առաջին և Երկրորդ քարերուն միջև: Եւ սրբան յառաջանային լողայու մէջ, նոյն համեմատութեամբ կը փոխէին իրենց քարերը: Ամէնէն փարձերը իններորդ քարէն կը նետուէին ջուրը՝ երթալու համար մինչև առաջին քարը: Տղու մը լողայու փարձութիւնը շափելու սովորական հարցումն էր. «Մը քարէն կը նետուիս»: Հարա էր այն աղան, որ կրնար եօթներորդ կամ իններորդ քարէն ըսել:

Հոն ուր հայերը կը լողային, թուրքերը չէին գտր: Բայց կը պատահէր Երբեմն, որ Քիւլիանպէշի անուամբ սինյորները կուգային պաղպաղու նեղութիւն պատճառելու կամ կոխ հանելու մարտով: Երբ լողացող ազգք կը տեսնէին թուրքերուն գայր և անբառական կը համարէին իրենց ուժերը, անազմուկ կը հետանային՝ զշուններուն հետ չշափուելու համար: Բայց Երբ զեակզերը ըլլային մեր Քիւլիանպէշիմները կամ կիլիմները (կարիճ), կուր անբառափելի կ'ըլլար, բռնուցք ու փայտէ գաս Երբեմն դաշտն ալ կը խաղար: Ծառ անդամ թուրքերը դատարնին առամ տուն կ'երթային:

Ողբերգական տեսարաններու ալ տկանատես կ'ըլլային Արշակայ կամուրջները: Երբեմն անփորձներ կը նետուէին աւելի վերի քարերէն, բայց չէին յաջողեր հասնիլ մինչև առաջին քարերը: Երկ մտնար վարձ լողացողները ըլլային՝ անմիջապէս օդուժեան կը հասնէին: Բայց կը պատահէր Երբեմն ալ, թէ և շատ քիչ, որ մինչև լողորդները հասնէին, անխորձ աղայ մը Երբարտին զոճ կ'երթար: Պատահած է Երբեմն, որ վարձ լողացող մըն ալ խեղդուած է: Անտանցմէ մէկուն տկանատես եղամ եմ և երբեք չեմ մտցած:

Ամբան Կերակի մըն էր: Եւ արդէն վարձուած էի Երրորդ քարէն լուս-գէշ առաջին քարը հասնելի: Մեր ուրախութեան մէջ աչք օրը արձայանոցեց ազոց մայրը վերի քարերէն. «Ֆարզէնը, Բարզէնը, հասնէ, կը խեղդուի»: Բայրը կը վաղէին, սմանք օդներու, ուրիշներ տեսնելու թէ ի՞նչ էր եղամը: Բայց մինչև որ օդուժեան հասան, Բարզէնը արդէն կորուած էր զեակին մէջ: Բարզէն լուս լողացողի համբառ ունէր: Ինչո՞ւ և ինչպէ՞ս եղաւ որ խեղդուեցաւ...

Ծուռով զեար ամառացու: Լուրը արդէն դաշամ էր Բարզէնի ծնողաց: Մինչև հիմա ալ աչքիս առջևն է խեղդուած պատանիին մայրը, որ զեակզերին կեցած ձեւերը ծուռկերուն կը դարձեր և ապողորմ «Բարզէն, Բարզէն» կը կանչէր:

Փողոյտարդին մէջ տարածուած հետաք էր թէ Երբարտ զոճ կը պահանջէ ամէն տարի: Գանձ մէկ հօդի պէտք էր զոճ Երթար տնոր այրներուն:



Երզնկայէն շուրջ Երկու մղոն զեակի արեւելք Բզուման հայրենակ փոքր գիւղն էր: Հոն ունէինք ազգակամներ: Ասոր համար ալ ամառը Երբեմն քաղալով կ'երթայինք հօն, օր, մեր ազգականներու անդամին վրայ, կը մտայի մէկ երկու օր: Բզումանը գրեթէ կեղբունն էր դաշտին և դաշտային զիւղերէն շատերուն նման շոր էր, աշխմբն դուրի էր աշխմբու և պարակցներու զեղեցիութենէն: Ասոր համար այդ գիւղը երկուր մնայ շէր ուղեր: Բայց Բզումանն ու նման դաշտային զիւղերը Երզնկայի հացահատիկի և բանջարեղէնի շտեմարաններն էին: Յորենի և զարիի արտեր և բանջարեղէններու, մասնաւորապէս ձմերուկի և սեխի բոստաններ կը շրջապատէին գանձք:

Կը սիրէի երթալ և զիւղերն անցնել բոստանին եզերքը կամ կեղբունը շինուած անակին մէջ: Այդ անակը մողովարդը խալիսլ կը կոչէր: Բոստանին պահակը կը մնար խուկուլին մէջ և ամբան տաք օրերուն կը պահէր խուկուլի տանիքին վրայ: Միշտ հասնչալով կը յիշեմ այն մէկ երկու զիւղները, զորս անցուցի այդ խուկուլին մէջ: Գիւղերները կը պահակէինք տանիքին վրայ: Կը դիտէի ասաղիքը պայծառ երկնակամարին վրայ: Գիւղերուան խաղաղութիւնը կը խանդարէին Երբեմն պահակ շուներու հաջոցը կամ զբացի բոստաններէն հասնող հայ կամ ելէլ կուշերը: Առաւօտուն կ'արթննայի երբ արեւը կը զարնէր աչքերուս: Ծուռով Էնթարիս վրաս կը Քաշէի և վար կ'իջնէի: Ռուկուլին ծօռ, ըրճարին ջուրը մէկ քանի անգամ երեսու կը զարնէի, և լուացուած ըլլալու զոհունակութեամբ՝ զբզանէս թաշկինակս կը հանէի և կրակատար կը ցածքեցնէի երեսու թացութիւնը: Յետոյ կը նայէի, բոստանին մէջ գտնելու համար քեռուս աղան՝ Ախրը:

Հոն էր սն, բաճը ասին: Ձիւս տեսնելով նշան կ'ընէր ու կը

կանչեր իր մօտ: Զդուռութեամբ կը քայլէի ձմերուկի քէլիկներու մէջէն ու կը հասնէի անոր: Ան ձեռքը ուսիս կը դնէր, քայցրութեամբ կը հարցնէր որպէստե՞րբ ես միտսին կը քայլէիք ձմերուկներու մէջէն: Ան աչքով կը հետեւէր անցող եւ կանց կ'աննէր ձմերուկի մը մօտ, ձեռքը կը դնէր անոր վրայ: Ան նշան կ'ընէր ինձ, որ կարեմ: Շտապով կ'իջնայի ձմերուկին վրայ եւ ձեռքիս փորքիկ գտնակով կը կտրէի գտնն եւ, երկու ձեռքերսօք սեղմած կտրժքիս, կը քայլէի դէպի խուկուշ: Քետորդիս չէր փորձեր ստնեկ ինձմէ՛ ձմերուկը, որովհետեւ փորձով դիտելը թէ ստով մեծ հաճոյքէ մը պիտի դրկէր դիս: Խնկուշին մօտ կը նստէիք դեռնին վրայ: Անոր կը կրտսեր ձմերուկը շարք մտակուս, եւ երկուքս ալ տպահարս կ'ուստէիք գտնն որպէս նստածուշ: Հիմա ալ ձմերուկը կը սերեմ եւ կ'ուստեմ յոյժով, բայց այն համը չեմ ստնէր:

Բզուտան դեղոր ուրիշ հաճոյք մըն ալ ունէր ինձ համար: Անկէ շատ հետո չէր եփրատի պղտիկ ճիւղը, որ կարգուած էր անոր ետքորդ կողմում: Գիւղին եւ դեռնին միջեւ տարածութիւնը արտասանողներէ կէն, ուր նստիւրը կ'արածէր: Կ'անցնէիք արածուց օրջտաններու մէջէն եւ կը հասնէիք դեռ, երբ արդէն կէս օրի կը մօտենայ: Ամառ տանն դեռնին ջուրը կը ցածնար, իսկ պղտիկ դեռք մտակ էր կը դառնար: Ինձ նման տասնէն տասնեկուս տարեկան տղոց համար յարգանք տարածուով եւ հաճելի սեղ մըն էր պղտիկ դեռք: Զուրք սաքքուկ էր եւ ծանծաղ, այնպէս որ խեղդուելու մտանց չկար: Կը մրտնէիք ջուրին մէջ, եւ երբ ան կը հասնէր մեր ծանկերուն, կը պտակէիք, կը կանչէիքք ու կը ճշայնէք: Խնչ ուրբտաթիւն էր...:

Մեր լողնալու սեղէն քիչ վեր Աւե Զուրի գեամարանունքն էր: Աւե Զուրք բաւական խոտը մտակ մըն էր, բայց անյարմար յողալու: Անոր ջուրը մաքուր չէիք համարեր, քանի որ ան կուզար շամբուս մէջէն: Անոր ձեռնն ալ յարգի չէր: Բայց ան դամէններու սերած մայրն էր: Կէսօրուայ տաքին կը պտակէի անոր ջուրին մէջ, զյութիկն դուրս եւ իրենց սունկերը յայն բացած: Յայտնի էր թէ կը սերէին այդ ջուրը, որ դերենք կը պահէր զով եւ կը պաշտպանէր ճաններու եւ մայրու յարձակումներէն:

Աւե Զուրք կը ըզիւր Բզուանէն հիւսիս՝ Պօզոս-Պետրոս մանքին ստորաւէն: Այստեղ ջերմուկ մը կար, որ քիչ անպամ այցելուներ կ'ունենար: Այս ջերմուկին մօտէն կ'անցնէր դէպի ձիւթն, Փթապե՛ն եւ Ս. Եփրատի մտնքը սանուց ճամբան: Ամէն անպամ որ հօքը հետ այս ճամբայէն անցնէիք մանք երթալու համար, կը կենսայինք

ջերմուկին մօտ: Լեքան սակր, ճամբուն քով, քարերուն տակէն քանի մը սեղերէ ջուր կ'էլլէր: Այս ջուրէրը հեռուցեալ կը շատանային եւ աւազներուն մէջէն անցնելով յանկարժ կը վերածուէին վըրտակի մը, որ կը կորսուէր քիչ հետուն տարածուող շամբուտին մէջ: Հայրս թող կուտար մին, որ արածի պահ մը սկիբուն շուրջ առատորէն բուսած կանանչներուն մէջ: Իսկ մենք կ'իջնէիք ջուրին մօտ եւ ափերով կը խմէիք մէջիս ու սառ ջուրը:

«Ասիկա Աւե Զուրին սին է», յասու հայրս, երբ դիս տառջին անպամ այդ սեղէն կ'անցնէիք: Ու կը մտածէի թէ ինչպէս այս մէջիս ջուրէրը շամբուտին մէջէն անցնելով կը փոխուէին, վերածուելով այն անհարապըր դեռակին, որուն մէջ սամբու տաք օրբուն գոմէշները միայն կը սերէին պտակիլ եւ հանդստանայ:

Եփրատի եւ Աւե Զուրի ափերուն մօտ կը տարածուէին արտափայլեր եւ ճահիճներ: Այս արածերը նստիչներու եւ միւրու երամակներու սիրած մայրէն էին: Իսկ շամբեր բնակարաններն էին ջրային թաշուններու, ինչպէս թաղեր, սաղեր, արագիւրներ եւ կուռնիներ:

Այդ օրբուն արտոզներ քիչ էին: Ազանցմէ մէկն էր հօրեղբայրս Արամ, որ կը սերէր արսայ Եփրատի ափին: Կը յիշեմ, անպամ մը, Մեծ Պահքին, երբ տակաւին միւրը պատած էր գաշա ու լիս, ան վերապարծաւ որակն պարի մը լեցուն թաղերով: Երբ տողարկէն հանց կանաչ վիզով թաշունները, մայրս նախքաւ անսոց եւ դրուիր շարժելով բուս:

— Ձէ, օղու, չէ: Վա՛՞՞՞՞՞՞՞ մտեւր քի Տէր Վարդաննեց տունը Մեծ Պահքի օրով միս մտնայ: Ես բ՛՛՛՛՛՛ արտով բունք պի կտեմ ու գուր ա ուտէք: Առտած կը բարկանայ, օղու: Տար, ուրիշին սուր:

Եւ հօրեղբայրս ստաւ իր որսը եւ արտա մեր թաղերի Տէր Գարբէլէնց թըքացած Սահակին, որ որս: պատանապ մը ստիպում էր իսրամանալ՝ Լեռանց: Անոնք կտիցին թաղերը եւ հօրեղբայրս ալ գաղտնի դեռց մասնակցելու այդ ճաշին: Այս պարպան վերջէն խացանք:



Ծննդովայրէս հեռանալու յետոյ, երբ պատեհութիւնն ունեցայ կարգալու Դազար Փարպեցին, ամէն անպամ որ կը հանդիպէի Աբարաուտեան Դուշին իր գովաբանքով լի նկարագրութեան, աչքիս

առջև կը պատկերանար մեր դաշար: Կ'ըսէ պատմիչը թէ՛ Արշակ թողատոր, Հայաստանի բաժանումէն յետոյ, թողուց իր նախնեաց ժառանգութիւնը եղող Արարատեան Դաշար եւ կտարած սրտով գրնաց Հայաստանի յունական բաժինը եւ իրեն բնակավայր ընտրեց Եկեղեցաց գաւառի Երեկա սաւանք: Շատ մը կողմերով եւ փոքր շրջանակի մը մէջ այս գաւառը նման է Արարատեան Դաշտին իր զեղեցկութեամբ եւ բարերեւութեամբ: Անա բառեր, սրունցով կ'որակէ պատմիչը իր սիրած Արարատ գաւառը. «Ջամնեարոյնս, գամնեարուլիս, գամնեալիս ... որաւից. գլբրիս շուրջամակի զեղեցկանիսս եւ պարարտոսս, գիտնալս Էրէւլի... Ի վերուստ կատարաց ջրոց հումունի, անկարտ ռոզմամբ սրբուցանելով գղաշուս... Անպակասութիւն հացի եւ գինւոյ. գամուշանոս եւ մեղրահամ Բաղքութիւն բանջարաց», եւ յն:

Այս բառերը, շտապումս Արարատեան Դաշտին, նոյնութեամբ կարելի է կրկնել նաև Եկեղեցաց գաւառին համար:

ՄԵՐ ՏՈՒՆԸ

Այգիս առջևն է մեր փողոցը:

Ժամուն հրապարակէն, առաջնորդարանի շէնքին առջևէն, լայն փողոց մը կ'երկարէր մինչև Ե. Նշան եկեղեցւոյ առջևը, հոն, ուր ժամուն աղբիւրը իր տեսական խոխոջով կը լեցնէր շրջապատի խոպոցութիւնը: Անկէ ճամբան կ'ընթացէր: Մէկը, կարծես զրջացած, առաջնորդարանի պարտէզին ետևէն կը վերադառնար ժամուն մէյտանը (հրապարակ բառը միայն զարցնականները կը դործածէին) եւ կանոյ կ'տունէր Կեղրոնական վարժարանին կից պահականոցին առջև: Այս պահականոցը, որ դԱՂՂՈՒՍ թրքական բառով ծանօթ էր ժողովուրդին, պակուցիչ բան մ'ունէր: Մենք՝ պղտիկներս, միշտ փախով կ'անցնէինք անոր մօտէն: Ս. Նշանի աղբիւրին առջևէն միւս ճամբաներէն մինքն մը աջ կը թեքէր եւ Եկեղեցու պատին տակով կը հասնէր Սարգիս Էֆէնտիկեցի (Տէր Ստեփաննեան) ծոռաշատ փողոցը, ուր հարուստներ կը բնակէին իրենց պարտիկապատ եւ հանդրատակաւ տուներուն մէջ: Իսկ Երբորդ փողոցը աւելի կը նեղնար, աղբիւրին առջևէն ձախ կը ծռէր եւ ոչորացոյցում կը յառաջանար մինչև Ե. Փրկիչ եկեղեցին, որուն մօտ էր Ընկերական վարժարանի զեղեցիկ շէնքը, որ մեր օրերուն կորանցուցած էր իր հմայքը եւ գտրմած սակաւաթիւ աշակերտներով կ'էս լքուած նախակրթարան մը:

Այս նեղ ու ոլորուն փողոցին վրայ էր մեր տունը, Ս. Նշանէն երկու քարրնիկեց հետո: Այս տեղի աղբիւրէն էր որ կը ստանալինք մեր խմելիք եւ լուացքի ջուրը: Ամէն անգամ երբ կը յիշեմ այս աղբիւրը, միշտ խղճի խայթ մը կ'ունենամ, որ անոր պատճառով քանի՞ քանի անգամներ իմ անուշ ու բարի մօր սիրտը ցայացուցած եմ: Մենք հինգ կարայրներ էինք, որոնցմէ ամէնէն տարեցը ես էի, եւ այս յիշածս զէպքի ստեւ 13 տարեկան կայի: Ինձմէ հաջ կուզար Մամուկի կարայրս, որ ինձմէ երկու տարի փոքր էր: Յաճախ մտայր ձայն կուտար:

— Տղաս, Գուրգէն, ջուրը հասած է, գնա ջուր բեր:

Ընդհանրապէս առանց առարկութեան կ'տունէի պղնձ կիւկիւմները եւ կ'երթայի աղբիւր: Ծանր էին այդ երկու մետաղէ փարչերը: Ծամբան զէթ երկու անգամ պէտք էր հանդէլի, մինչև որ տուն հասնէի: Երբեմն, մանաւանդ լուացքի օրերուն, երբ մէկ ան-

զամոյ չէր լսնար գործը, կը յոյնէի եւ կը մերժէի կատարել մօրս հրահանգը:

— Ալ օգնեցոյ, կ'ըսէի, թող քեզ մ'ա Սամուէլը բերէ:
Սամուէլ, թէ եւ ինձմէ կրտսեր, աւելի մարմնեղ էր եւ ինձ շափ ալ գորեղ եւ յամախ կ'օղնէր ինձ: Բայց երբեմն ալ սրեւէ պրտաճառով կը յամաւէր (շատ յամաւ էր) եւ սաքը զէմ կուտար:

— Պի չ'եթամ, իշակ պի չ'եթամ, թող ինք էթայ:

Մօրս վիշտ չզատաճառելու համար գլուխս կախի՝ եւ կ'ոտնէի կիւկիւմները եւ կ'երթայի սպրիւր: Բայց երբեմն ալ կը պրտասէչը, որ իմ ալ յամառութիւնս կը բռնէր, եւ ահա կոխը կը սկսէր: Աւելի մեծ ըլլալով՝ ընդհանրապէս եւ կը յաղթէի եւ պիտի գետնին կը պրտակեցնէի: Ասիկա աւելի կը կատարեցնէր զիմք:

Ազգամ մը երբ տեսաւ որ ուժով գլուխս պիտի չկրնայ էլլել, վաղեղ ներս է խոհանոցէն զանակ մը ստնկլով վրաս խոցացաւ կուտազով ցուր մը նման: Եւ հապի կըրցայ խոց տալ ու ստնկլ մեր միակ սենեակը եւ զուտը կզպել ներսէն: Հասաւ զբան ապիւ եւ զտակար վեր բռնած կը պրտար:

— Դո՛ւս էկո, զուս էկո ս ստակցնիմ քեզ:

Մայրս վրայ հասաւ ու ձեռքերը ծունկերուն զարնելով յալսպին կանչեց:

— Զրլլայի՛ք, շրլլայի՛ք, զրոպր տանիք ձեզ, անդգամներ, հոգիս բերանս կը բերէք, զեւս կիւկիւմ մը ջուր բերէք արտարէն: Եւ կ'եթամ կը բերիմ, եւ կը բերիմ, թէքի ձանձրնիդ կոեցէք...:

Աւ կը քալէր զէպի պրտին տակ շարունակ կիւկիւմները: Իմ սիրտս չէր տաներ, որ ան երթար: Չայն աւել սենեակէն:

— Մայրի՛կ, մ'եթար, եւ կ'եթամ կը բերիմ ջուրը, մ'եթար, կեցիր...:

Մայրս սրբելով աշփերուն արցունքը, կեցաւ ու զարծաւ մեր կողմը: Եղբայրս ալ կարծես խզահարած իր քրտնէն, զանակը տարաւ զբաւ իր տեղը եւ անմայն զուրս էլուս: Եւ ալ զուրս էկայ եւ կիւկիւմները տաւ ուղղակեցայ սպրիւր:

Հիմա, երբ այս տողերը կը գրեմ, մօրս վշտացած զէմքը աշփս առնէն է: Ա՛հ, որքան կ'ուզէի որ զարմանէի իմ եւ եղբայրներուս մտնական շարութեամբ իրեն պատճառածս վիշտերը: Երբ նախակրթարարը աւարտելով Արմաշ գաղթի, ծառակներուս մէջ միշտ անտա՛ս ու զուրգուրտ տողերով կը ջանայի քաղցրացնել իր հոգին, կերպով մը զարմանած ըլլալու համար իրեն մեր պատճառած նեղու-

թիւնները: Աւ իմ մտքիս մէջ ի՞նչ ծրարիքներ կը շինէի ծնողքիս երջանակաբէան համար, երբ զարցնէ աւարտած՝ հայրենիք վերադառնալի: Բայց տա՛ղ, այդ օրը շարուեցաւ ինձ: Ահաւոր փոթորիկը եկաւ եւ իր յարձուրթն մէջ առաւ ու տարաւ նաեւ իմ բարի, իմ տնուս, իմ արտում մայրը...:

Մեր տան մասին պիտի խօսէի թայց ուրիշ յիշատակներ մէջ մտան:

Երզնկայի տուները մեծ մասամբ հօղաշէն էին, միտարի եւ իրարու փակած: Միայն սակաւաթիւ հարուստներու տուներն էին երկյարկանի, շինուած մասամբ քարով եւ ծածկուած կղմիներով: Մեր տանիքները հարթ էին եւ կը ծառայէին սրղէս խազալայք տըրգայցը, զարնան եւ ոչնան կղանկներուն, եւ ննջարան՝ ժողովուրդին, ամբան տաք օրերուն:

Մենք հարուստ չէինք, ոչ իսկ բարեկեցիկ: Հայրս քահանայ էր, ինչպէս նաեւ մեծ հայրս: Քիչ քաղաքաբնակ, ընդհանրապէս խեղճ են գլուստի քահանաները իրենց ծուխերուն նման: Մեր տունն ալ խեղճ էր մեր անտեսական վիճակին պէս: Ան կէսն էր ընդարձակ երկյարկանի բնակարանի մը, որ բաժնուած էր երկու քոյրերու միջև: Մօրս բաժին ինկած մասը ո՛չ բակ ունէր եւ ոչ ալ երկբարդ շարի: Այնպէս որ զանէն ուղղակի կը մտնէինք մեր տունը, սրուն տառջամասը վերածուած էր պրտիկ արտի մը: Պիտի բուսի թէ ի՛նչ պիտի ընէր քահանայ մը արտը իր փոքրիկ տան մէկ անկիւնը: Ճիշդ է: Բայց հայրս իր երկտասարգութեան օրերէն ձիու սերահար էր եւ ընդհանրապէս ձի մը կը պահէր տան մէջ: Մայրս ալ իր կողմ կ'ուզէր, ստաս կաթ եւ մամուն ունենալու համար: Մենք ալ գատնակ մը ունէինք անդամաճա արտին մէկ անկիւնը:

Ձիուն երեսէն բաւական նեղութիւններ ալ կ'ունենայինք: Անգամ մը մեր ձին հիւանդացաւ եւ ստակեցաւ: Հօրս զէմքը արիւնցաւ, մայրս եւ մենք ալ լացինք անոր համար: Ուրիշ անգամ մըն ալ հօրս հետ Խնձորիկի պիղնէն կը վերադառնայինք քաղաք: Ճամբան ջրհորի մատարակի պիղնէն կը շանդշելու համար: Այլուտղ կային ուրիշ ճամբորդներ ալ, ամէնքն ալ թուրք: Ատնցմէ մին մօտեցաւ ձիուն, նայեցաւ անոր սկտաներուն, զոնկ պոչն ու քամակը եւ զառնայով հօրս, բոտս թէ ասիկա իր զոյցուած ձին էր: Հայրս անարանկալի եկաւ: Ատոր հետեւանքով տեղի ունեցաւ երկար գատալարութիւն: Հայրս փառակց թէ ինք զնած էր կենդանին յայտնի ձիալսմանէ մը:

ի վերջոյ, մարդը ստացաւ իր ձին եւ Հայրս ալ իր դրամը, որուն չափ արդէն ծախսած էր դատաւարութեան ընթացքին:

Իրաւ է թէ ձի պահելը պերճանք մըն էր մեկ նման ընտանիքի մը համար: Բայց Հայրս սովոր էր կրկնել թէ բերնէս կը կտրեմ քայց ձիս չեմ գրկուիր: Եւ եկաւ մամանակ մը որ այդ ձիուն պէտք ալ ունեցաւ: Հայրս լաւ ձիավար էր: Ասոր համար առաջնորդ Արտասուտը վարդապետ, երբ թեմական այցելութեան ելաւ, գնդի Կամառ եւ Արմուտան, Հայրս ընտրեց որպէս բրնն ուղեկից: Ասիկէ դատա աստճնորդարանը զինք նշանակեց այցելու հովիւ: Երեք քրչարնակ զիւղերու, ուր կային փոքրաթիւ Հայեր: Այդ զիւղերն էին Սբբի-հան, քաղաքէն չուրջ երեք մղոն հեռու, Եփրատի ափին: Երկրորդն ու Երրորդն էին Գոմեր եւ Կամարիկ, երկուքն ալ Կամառի կերպէն ներս, յեռներու զուր:

Սխտուն յետոյ մեր տան առաջին մասը գլխուսոր ընակարանն էր: Կերպուր կար ճահճ, որ հոր մըն էր ծածկուած մէկ կամ աւելի մեթր տրամագծով մարմարէ կամ նման հարթ բարով մը: Այդ քարին մէջտեղը կար ծակ մը, ուրկէ տան գործածուած ջուրերը կը լեցնէին ներքեւի հորը: Մենք մեր ճահճը քիչ անդամ կը դործածէինք, որովհետեւ Հայրս կ'ըսէր թէ ան հակասողջապահական է: Ծահին վերեւ տանիքին վրայ կը քայտէր տան միակ յուստմուտը, զոր յետիւնէ կը կռչէինք: Ծահին ետեւ աջ անկիւնը Հայրս տախտակով գետնէն չուրջ ստք մը բարձրացուցած էր որպէս հիւրանոց եւ ամէն օրուան նստելու սեղ: Այդ տախտակամար ծածկուած էր գորգով մը, պատերուն առջեւ շարուած էին բարձեր եւ բարձրուն առջեւ ալ բարձրոցներ: Հօս էր որ կ'անցնէինք մեր Երեկոները:

Հոն Հայրս ձմրան զիւրերնէր Բաֆֆիի Վնամուէլոյքը, «Սենթ» կամ Մերկնցի «Ներկու»-քը կը կարդար մեզ: Աւազարութեամբ մտնի կ'ընէինք, եւ մայրս մերթ իր արջունքները կը օրըր յուղել զէտքի մը ասեւն: Հոս էր դարձեալ որ Մեծ Պահի օրերուն, անկողին երթալէ առաջ, ամէնքս միասին կ'ազօթէինք «Հաւատով Խոստովանիմք» կը կարգարով: Այս տախտակամար վրայ կ'ընէինք մեր գլխուսոր ճահճը:

Մայրս սարմաւ պէզի կոշուած ծածկոց մը կը փռէր զետիքը եւ անոր վրայ կը դնէր մէկ ոտք բարձրութեամբ փայտէ սեղանը: Երբ հիւր ունենայինք կամ տօնական օր ըլլար, փայտէ սեղանին սեղ պղնձէ սննին կը զետեղէր ցած նստարանի մը վրայ: Մենք կը նստակէնք սեղանին շուրջ եւ մեր ծունկերուն վրայ կը քաշէինք ծածկու-

ցը, որպէսզի հացի փշրանքները կամ կերակուրի թափթփուքները մեր հագուստներուն եւ զորդին վրայ չիշնային: Ծաշի սկոնէլ առաջ մեզմէ ամէնէն փոքրը, որ կարող էր, ստքի կը կենար եւ «Հայր մեր»ն ու «Ճաշակեցուք»ը կ'ըսէր:

Պատասխանող չէինք զօրծածէր, թէ եւ անոնցմէ ունէինք քանի մը հատ: Մայրս զանոք վերապահած էր մասնուսոր ստիճներու: Անէինք փայտէ դռաներ սեղանին վրայ, որոնցմով կ'ուտէինք սպորտ եւ ջրոտ կերակուրներ եւ, Եթէ ուղեկնք, նսեւ փխրաք: Ես միշտ զգալ կը դործածէի, ուր որ կարելի էր: Բայց մայրս եւ Հայրս հին սովորութեամբ պատուա մը հայ կ'ունէին իրենց երեք մասնակերն (փթմասա, ցուցամաս եւ միջնամաս) միջեւ: Եւ անով ճարտարօրէն կերակուրը կը բռնէին ու բերաններն կը տանէին: Երբ ես զպրօցին մէջ բաւական յառաջացայ եւ սարկեցայ թէ մարդիկ ինչպէս կ'ուտեն Պրոսոյ կամ Եւրոպայի մէջ, ալ չէի սիրեր մեր ուտելի կերպը, քանի որ ուսուցիչս բռնած էր թէ այդ կերպը առողջապահական չէ: Երբեմն մօրս կ'ըսէր թէ Երբ մեծնամ, ես ալ Եւրոպական ձեւով սեղան պիտի դործածեմ, որ ամէն ոք ունենայ իր սեփական սընակը, պատասխանողն ու զգայր: Մայրս քաղցրութեամբ ինձի կը նայէր ու կ'ըսէր:

— Զագս, դուրպան բլլայ մարդ բեղի, դուն մեծցիր, ուսում առ, մարդ եղիր, ուղարկող պէս կ'անէինք:

Մեր տան հիւրանոցի ձախ կողմը, մեր նստած սեղին դիմացը, Բալլաքն էր, ուր պատը բաժնուցմ էր վերէն վար գարակներու, արոնց մէջ շարուած էին մեր պղինձէ ամանները: Թարաքին ստորին մասը աւելի լայն էր եւ յատկացուած էր կուռ եւ պղնձէ աւելի խոշոր ամաններու, ծածոթ՝ պղինձ, ծափ, կ'հաւ, պատուի անուններով, արոնց մէջ մայրս կը պահէր հայած կարագը եւ դժակի իւղերը, ինչպէս նսեւ զառարմա, պլուր, կարկոտ, աղջուրի մէջ զբուած պանիր եւն:

Թարաքին աջ կողմը պատին մէջ ծալքն էր, որ պատին մէջ շինուած խոշոր պահարան մըն էր, ուր կը զետեղէին ցրեկի ստեն մեր անկողինները: Գիշերը պատկելէ առաջ մայրս զետեղին վրայ կը փռէր փսխաթ մը եւ անոր վրայ ալ կարպետ մը: Այս կարպետին վրայ կը բռնար եւ կը կարգաւորէր մեր անկողինները: Երկերեւո կտրայր կը պատէինք մէկ անկողնի մէջ, յաճախ ոտք ստքի, որ մեր նախորդորուն էր, զի երբ պատահութեամբ պանէինք՝ սանակուի կը մղէինք իրարու դէմ, մինչեւ որ հօրս ստաք հասնէր եւ խաղաղ-

ցընէր մեզ: Առաւօտուն մայրս կը հուաքէր մեր անկողինները եւ կը զեւեղէր զանոնք ծաղիքին մէջ:

Մեր տան երկրորդ մասը աշխման էր, խոհանոցը: Ասոր մէջ-տեղն էր թոնիրը, զոր կը կոչէինք րուսիք: Թոնիրին ճիւղը վերեւ, տանիքին վրայ բացուածք մը կար, ուրիշ մուտք զուր կ'էլլէր: Այս բացուածքը կը կոչուէր դալպազ, որ կը բարձրանար տանիքին վրայ խոշոր, քտանկիւն սնդուկի մը ձեւով և վերեւն ալ ունէր հովանոցաձեւ պահպանակ մը հովին դէմ: Երբ թոնիրը կը վառէին, խոհանոցը ծախտով կը լեցուէր, եւ մենք պղտկեկներս, օշերերնիս պոցած զուրս կը փախչէինք:

Գործածուած վառելանիւթն էր քիչ մը փայտ եւ մաս մըն ալ զշգուր, որ ուրիշ բան չէր բայց կէթ աղբուածեւ կարուած եւ չորցած թրեք:

Թոնիրը ամէն առնէ շէնք գործածէր, այլ միայն էրը հաց պէտք էր կոխէին, ինչ որ կը պատահէր երկու երեք շաբաթն անգամ մը, կամ երբ դառնումս պիտի պտարտակէին աշնան:

Ես կը սիրէի հացեփի եւ դառնումս օրերը: Հացեփին խոոր մայրս կը շաղուէր փայտէ տաշտի մը մէջ՝ երեկոյցին՝ թթխոտով, վրան խոշ մը կը ձեւացնէր եւ կը ծածկէր, որ մինչև ատուտ թթխուտերը կը շարէին վաղ կոշուած խոշոր լաթի մը կամ սուսանի մը վրայ և կը ծածկէին, մինչև որ թոնիրն ալ պատրաստ ըլլար: Երբ թոնիրը պատրաստ էր, մայրս կը նստէր անոր վերեւ, իր օգնականը՝ սուրեւը պրտած ցած սեղանի մը վրայ գնդակներ կը բանար զնոյա-կով եւ կուտար մօրս: Մայրս ալ գալն մէկ երկու անգամ ձեռքերուն վրայ ձգծղելէ յետոյ, կը գնէր բարձի ձեւ ունեցող ռախարայի մը վրայ և շանուն Հօրք ըսելով կը փակցնէր թոնիրի կողին:

Մենք պղտկեկներս ալ կ'օգնէինք՝ գոնտերը բերելով թոնիրին մօտ: Ու իրբև փարձատրութիւն մեր աշխատանքին մայրս պիշի կը պատրաստէր մեզ համար: Պիշին կուր բացուած խոորն էր, զոր կը տակէր հուսկիթով: Հացեփի վերջաւորութեան մայրս տաշտն կոզերուն փակած խոոր թաթկելով կը քերէր եւ անով կը պատրաստէր անձուր կաթն մը, որ սաշարքի կը կոչուէր:

Հայրս մեր խոհանոցին մէկ մասը կտրել սուսու օր մը եւ չի-նել սուսու բաւական կոխիկ սենեակ մը, որ կղատ մեր հիւանդոցը՝ մանուսնոց ձեւուած եղանակին: Այդ սենեակին մէջ ունէինք Ներ-մոց մը, որ սպա կը կոչուէր:

Սոհանոցին մէկ անկիւնը ունէինք փոքր վերնայտակ մասն մը, զոր քիլար կը կոչէինք: Այդ քիլարին մէջ մայրս կը պահէր մմեռուան համար միւրեք, ինչպէս բնիւոյց, չամիչ, շոր ծիրան, զոր թուրքերէն բառով կառմա կը կոչէին, շոր սայլ, կախան կղատ խն-ձոր, տանձ, խնձոր, խաղող եւ նուս: Երբեմն մօրս բացակայութե-նէն օգտուելով կը բարձրանայի մեր մասանը եւ կը զողնայի շոր պը-սուպներ եւ բնիւոյց: Տանձին, խնձորին եւ միւս կախաններուն ձեռք չէի տար, քանի որ անոնցմէ մէկ հատ իսկ վերցնելը յարմիր պիտի չտանար:

Այս էր մեր սուրը ծննդավայրիս՝ Երզնկայի մէջ:

Մայր մեր սուրը սակաւաթիւ բացառութիւններէն էր: Միւս սուրերը ունէին իրենց բակերը՝ զլխուտը գտնէն ներս: Այդ բակե-րուն մէկ կողմը ախոս կ'ունենային անոնք՝ որոնք կով կամ ձի կը պահէին: Այդ բակերուն մէջ կային ջրհորներ, որոնց ջուրը կը զոր-ծածկէին լուացքի, ծառ ու ծաղիկ ջրելու, ամբան կղանակին խմելու: Գորք զով պահելու, բայց քիչ անգամ խմելու համար, վասնզի ան շրպաղ, այսինքն քիչ մը աղի կը համարէին: Բակէն ներս տունն էր իր ստորբաժանումներով, համաձայն տան տիրոջ անտեսական վի-ճակին:

Բարեկեցիկ կամ հարուստ ընտանիքներ ունէին աւելի խոշոր սուրեր, իրենց բակերով եւ պարտէպներով: Այդ աներէն նշանուոր էին Գանիկեաններս, Մշիկեաններս, Տէր Ստեփանեաններս, Ղա-պարտեաններս եւ այլոց սուրեր: Ասանք Երկայրիանի էին եւ ու-նէին շատ մը սենեակներ, որոնց մէջ կը բնակէին ընտանիքի ամուրի եւ մերթ ամուսնացեալ անդամները իրենց սեփական յարկաբաժնե-ներով, բայց նահապետական ստորութեամբ ենթակայ հօր կամ մեծ կ'որոք իշխանութեան:



Գիւղերու սուրերն ալ իրենց կարծով նման էին քաղաքի սու-րերուն, աղքատ սուրերը աւելի անշուք եւ հարուստները աւելի կամ պակաս շքեղ: Բուն դաշտին մէջի գիւղերուն սուրերը ամէնքն ալ հօ-պաղէն էին: Լեռնաձօս գիւղերու սուրերը մասամբ կամ ամբողջու-թեամբ քարաշէն կ'ըլլային, զարծեալ համաձայն մարդոց ներթա-կան կարողութեան: Փթտաիճ գիւղի մեր աղպղաններուն սուրը խեղճ էր: Գուրսի գտնէն ուղղակի կը մանէինք սուրը, որուն կեղծունը

Թոնիրն էր : Տան մէկ կողմը ախոսն էր : Տան մէկ մասը վերնատան նման բաժնուած էր եւ կը ծառայէր որպէս ննջարան : Տունէն ներս կար ուրիշ բաժանում մըն ալ, որ թէ՛ մասուն էր, թէ՛ շտեմարան եւ թէ՛ ի հարկին հիւրանոց : Իսկ Աղբակի գիւղի մեր ազգականներն տունը աւելի քարաշէն էր, ունէր բակ մը, ուր կար խոշոր թիթեռի մը, իր համեղ անկուս թուփերով : Խնձորեկի գիւղը, ուր անցուցած եմ մասնկութեանս երկու տարիները, հաստատուած էր ձորի մը երկու կողմերուն : Կային ամբողջութեամբ եւ մասամբ քարաշէն տուներ : Ձորի կողմերուն շինուած տուները մասամբ փորուած էին հողին մէջ եւ մէկ տանին արտաքին դուռ կը բացուէր ուրիշի մը տանիքին վրայ : Ձորին մէկ բարձրութեան վրայ հաստատուած էր գիւղի քիւրս ըկկին ղոնաղը, որ աշքի կը կարենէր իր երկու յարկով եւ քարաշէն կազմով :

ՏՈՒՆԵՐԸ ԿԱՄԱԽԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԼՁ

Կամախի կամ Դարանազեաց դուռի տուննուր կառուցքը երգրնկայի դուռուի տուններէն շատ չի տարբերի, համաձայն Գ. Պագախիկանի տաւած լուսարանութեանց : Այս տեղ ալ քաղաքի տունները բնականաբար աւելի բարեձեւ են : Հասարակ ժողովուրդին տունները միայնակ են եւ տանիքները հողածածկ : Խնձորեկն կաթի սոսիւն ստնելու համար տանիքներու վրայ կուտային շորաղ կոչուած հողը կը գործածուի : Ասոր վրայէն ալ լող քարով կ'ամրացուի : Հարուստներու տունները կ'ըլլան երկյարեանի եւ կղմինարէ տանիքներով : Բոլոր տուններն ալ արտաքուս ձեփուած կ'ըլլան տեղական կաւի մը լուծոյթով, որ անոնց կուտայ սպիտակ ներկուած բլլայու երկւտայթը :

Դարանազեաց դուռուր ըլլալով լեռնային շրջան մը, հոն քարքն ստատ է եւ տուննուր մեծ մասը շինուած կ'ըլլան քարէ, թէեւ ազիւսն ալ գործածական է :

Թէ՛ քաղաքի եւ թէ՛ գիւղերու տունները կ'ունենան գլխաւոր հետեւեալ բաժանումները. Թոնրատուն, ախոս, մարագ եւ հիւրանոց : Թոնրատունը տան գլխաւոր մասն է, որ կը բացուի ուղղակի փողոցին կամ բակին վրայ : Թոնրատան մէջ են անկողնի ծաբբ, սմաններու, կարաններու եւ նմանեաց դարակները : Այստեղ են նաև ամբարները : Թոնիքին շուրջը, զետե՛ն աւելի բարձր, սէքու կը կոչուի : Մասուեղ է որ բնտանիքը կ'անցնէ իր մասնակը, մասուանոց ձմրան եղանակին : Թոնիքին վրայ կը դեակուի իսկէմի կոչուած քառասանի սեղան մը, որ երգնկայի եւ այլ շրջաններու մէջ ծածոթ է՝ նոյնպէս թուրքերէն քիւրսի կամ քուրսի անունով : Իսկէմին զեւտեղէն ստաջ՝ Թոնիքին վրայ կը գրուէր դումը, աշխնը. Թոնիքի հողաշէն կափարիչը, Թոնիքին դորուսը հուրքը կամ ջերմութիւնը շափաւորելու համար : Իսկէմինն շուրջ կը գրուէին քաղմոցներ եւ բարձր, որ հանգստաւէս կերպով «ձեր թէ՛ փոքր թէ՛ կը տաքանային եւ թէ՛ իրենց աշխատանքը կ'ընէին» : Թոնրատունը տան սակե՛ն բնդարձակ մասն է, շուրջ քառասունով յիսուն սոր ծաւալով : Ատեկա տեսակ մը տան հաւարտեղին է, որ տեղի կ'ունենան նաև հարստնական ուրախութիւնները : Թէ՛ դուրսէն եւ թէ՛ ներսէն անոնք ներկուած կ'ըլլան վերայիշեալ սպիտակ կուսով : Թոնրատան յատակն ալ երկար ու բծախնդիր աշխատանքով կարմիր կուսով կը ձեփուի :

և կոկան բարոյ, նախ ջուրոյ և յետոյ հակիթոյ կը կոկանուի ու կը փայլեցաւ: Աէֆուլ Ո՞ վրայ, գլխաւոր պատին մէջ հաստատուած կ'ըլլայ օճախը, ինչպէս նաև թոնիքին ծինելոյցը կը բարձրանայ տանիքին վրայ երեք և աւելի սոր բարձրութեամբ:

Հիւրանոցը թոնրատան կամ կողմակի շէնքի մը վրան կը շինուի: Թոնրատան պատերը երկուքէն երեք սոր թանձրութեամբ կ'ըլլան: Հիւրատանակներու պատերը կ'ըլլան աւելի բարակ և շինուած են հում աղիւս: Մինչ թոնրատան առատագր շինուած է գերաններոյ և մարգակներոյ, որոնք ծուխէն կը սեւնան, հիւրանոցի առատագր գերանները ծածկուած կ'ըլլան յղկուած տախտակներոյ:

Ախտները կ'ըլլային տուներու մօտ, կողմելոյ տնոց մօտ և քիչ մը հեռու, բայց միշտ մարդոց հասողութեան սահմանին մէջ: Մարտիներ յաճախ շինուած կ'ըլլային կալերու մօտ, անչուտ յարդր ամբարեկու գերութեան համար: Բայց տխտներու մօտ ալ կային աւելի փոքր շարքանոցներ, սր կը հասարակին ամէնօրեայ դարձածութեան համար անհրաժեշտ գործանք կենդանեաց: Ախտներն ու մարտիները ընդհանրապէս շինուած կ'ըլլային հում աղիւս:

Բնական է բակ թէ գիւղական տաները այս ընդհանուր նկարագրէն դուրս կ'ունենային փոփոխութիւններ, համաձայն տիրոջ նիւթական կարողութեան և նաչակին: Հարուստ գիւղացին կ'ունենար աւելի գեղեցիկ և ընդարձակ ընտարան: Փրիպր Պողոտիկեան իր յուսարանութիւնները կը վերջացնէ հետեւեայ հաստատումով. «Մեր գիւղերու ընդհանուր աեսքը շատ աւելի ներկայանալի էր, իրենց բարաշէն տաներոյ, ուղից և լայն փողոցներոյ ու ճամբաներոյ, քան ներսի գաւառներու»: Սեբաստիայէն մինչև Անգարա, պրս ևս նմանալու առիթն ունեցայք:

Կ Ա Ղ Ա Ն Գ

Նոր տարին կամ Ամանորը ծածօթ է եկեղեաց գաւառին մէջ կաղանդ օտարածին անունով: Կուրաց ցրատչունչ՝ ճմբան մէջ, կըր դաշտ ու յունի կը հանդիսն ձիւնի սպիտակ անդորրին տակ, կըր ցեղեկները մերթ քամին կը սուլէ փողոցներուն մէջ, մերթ ջննջ ու ամպոյն տրև մը կը սարսուռ համապարձ սպիտակին վրայ, կըր գիւղերները լուս ևն ամպերոյ մուգլած, կամ խոր ու աստեղայից երկինքոյ մը լուսադարչուած:

Կաղանդի նախօրեակին արդէն ետուցև է քաղաքին և գիւղերուն մէջ: Կեանքն իր պարտադրանքն ունի և օդին աննպաստ ըլլալը չի կրնար խափանել օրուան պահանջը: Անուիթները լի են մրցել-գէններոյ, շաբարեղէններոյ և տնին յատուկ դանաղան ստարիաներոյ: Այինչ խնայուած է ակնարկները յայցելու և ակտրտակները հրապուրու համար: Պահարաններէն հանուած են անուշաբուր խնձորը, տանձը, սերկիւիլը և նուոր: Նայիտի կախան կամ հասանք եղած խաղող կըրգակներու առատագներէն տակախ՝ ալլեկութի ջերմութիւնը կը բերէ պահիկ մը տուներու փակ դռներէն ներս: Նարինջը, արմուս և չոր թուղը, ատրաշխարհիկ պտուղներ, հեռուոր ու բազմալի բազցրութեանց գիւթանքոյ կը կանչեն գնորդները:

Ամէն սք, համաձայն իր կարողութեան, կ'աշխատի չորիկ իր տունն ու անցիները տանին բարիքներէն: Հէյպէ և խուրջին շաղկած պատաններ ու երիտասարդներ, յաճախ ընկերակցութեամբ աւելի տարեցներու, տուն կը կրեն կաղանդի շաբարեղէնն ու կաղինը, ընկոյն և լէպլէպուն, արմուսն ու չոր թուղը, նարինջն ու խնձորը: Աւելի բարեկեցիկներ շեն սոսնոր նաև խաղալիքներ և մանուսոր նուէրներ:

Մայրիկները կը բանն մատանները և դուրս կը հանեն շաբաճի տղայ հասողութեան խնամով պահուած թութամիշը, պարկըճըրը, ընկոյցը, կախան եղած պտուղները, շաբոցը, պատեղը, պէքէզը՝ աղքատը քիչ, հարուստը շատ, բայց ամէնքն ալ գոհ և ուրախ ճիւղձ պարգևածով:

Տուներէն ներս ետուն աշխատանք կայ տանակիներուն համար: Թէ և Մնունդի պահքի շարաթն է, բայց տնին յատուկ շատ աւտիքներ կան պատրաստուելիք: Ամէնէն կարևորն է կալուլի

պատրաստութիւնը: Կալուլը անիւզ եւ անհուկիթ կաթն է: Վրան շուշմա միտն կը ցանեն եւ կ'ըլլայ զանազան ձևերով — քառակուսի, բառկի, միկրոսի, լուսնի, մասնիկի եւ այլ ձևերով: Ասոնց մէջ կարեւորն է Կազանդի Հացը, որ կ'ըլլայ կտր եւ խոշոր բաղաբլի մը ձևով: Ասոր մէջ կը գետեզեն փոքր դրամ մը: Պատրաստութիւք ուսակիքներն են սխևոսով լոսիկիը, անուշ ապուրը՝ շինուած կարկուսով, սխևոսով եւ շամիւով, զամբասան՝ բնկոյիք խորիզով (խորիւսի) լեցուած եւ քառանկիւն կտորներու բաժնուած խմորեզէն մը, զոր կ'ուտեն պէ՛մէզի (բուս) մէջ թաթիխով:

Իրիկունը կուզայ խորհուրդով եւ ցնծութեամբ լի: Ամէն ու՛իւր տան մէջ է, ամէն տուն ամփոփուած ինքն իր մէջ: Սեղաններ կը յարգարտին եւ միջկերու եւ նուէրներու բաժնումը տեղի կ'ունենայ: Տղաք ուրախ են: Կանուխէն պատրաստուած տորպակները (տապակի) կը լեցունեն սառցուած նուէրներով, որոնք բանի մը օրերու համար պիտի բուեն խնայակիքներուն: Բայց պաշտանական սեղանը յաջնորդ ասուստուն է որ պիտի բացուի:

Կազանդի նախորդ երեկոյին կանուխ կ'երթան պատկելու, զի զէս զիշերէն ետք եկեղեցի պէտք է երթան: Պատկել առաջ, խոհանոցին մէջ, ալիւրի ամբարին առջև կամ այլուր, մասնաւոր պնտկով կամ տեփուրով նուէրներու բաժինը կը գնեն Հրեշտակներուն եւ ոգիներուն համար: Զի հաստապիք կայ թէ զիշերուան խորհրդաւոր մէջ պահուն անտես ոգիներն ալ կ'իջնեն վարձ, մասնակցելու համար տօնին եւ ստանալու իրենց բաժինը օրուան բարիքերէն: Թեբեա այս հաստապիքին մէջ կայ ծածկուած նախահարց ուղիներու պաշտամունքին մնացորդը: Կարելի է խորհիլ թէ Հրեշտակներու, քրտմաղիկներու եւ այլ անուններու տակ նախնեաց ուղիներն են, որ կուզան մասնակցելու իրենց օճախներուն ցնծութեան եւ ստանալու նուէրներու իրենց բաժինը:

Կէս զիշերին արդէն ետուզեաը կը սկսի տուններուն մէջ: Մեբունները սաքի են՝ ազօթթի մթնունջներ իրենց շրթներուն: Ազջիկները պտորաստած են սափորները կամ կիւկիւսները՝ աղբիւր երթալու համար: Անոնք կը շտապեն հասնելու սփիջուրին, զի կը հաստան թէ Կազանդի զիշերուան խորհրդաւոր մէջ պահին, կէս զիշերը անց, հայրենի սկեբն ու աղբիւրները յատկ ջուրի տեղ սուկի կը հոսին: Ամէն աղջկայ կամ հարսի փայտալոյս իրան է համարի սուկի աղբիւրին: Ամէն աղբիւր պացոզ իր հետ կը տանի նաեւ կորկուս, լուրիւս, սխևա եւ այլ բնորեզներ, զորս կը նետէ գուտին մէջ եւ

չուրջը, կազանդելու համար աղբիւրը եւ ձեռուան ջուրին անսրապ մնացած ձնգուկները: Աղբիւր հասնելով անսրք կը լուան իրենց երեսները սառ ջուրով, կը խառնեցնեն եւ սափորները լեցուցած տուն կը րեբեն օրհնեալ ջուրը, աղբիւրին քերթէքըն ալ միտնին բերած ըլլալու հաւատքով:

Քիչ յետոյ եկեղեցիներու զանազակները ձեռնածածուկ ջաղաքին ու զիշերուն վրայ կը տարածեն իրենց կոշը: Դուսները մէկիկ մէկիկ կը բացուին եւ օրհնամթունջ ձերուները եւ պատուներ, շափահաններ եւ պատանիներ ժամ կը շտապեն: Մոգորութիւն է որ մնունդի եւ Զատիկ նման Կազանդի զիշերն ալ ժամերգութիւն տեղի կ'ունենայ եւ լուսածալին հետ ժամ-պատարայ լրացած կ'ըլլալ:

Սրտագնոզ ցուրտին մէջ, սառած գետիներու վրայէն, ժամաւորները կը վերադառնան տուն՝ ճամբուն վրայ իւրաք կրկնելով օրուան աւտարը. «Ճնարխաւոր նոր Տարի եւ բարի կազանդ»:

Մոսիմուլուսուն եկեղեցիէն վերադառնող տուն մեծ տիկիներ աղբիւր կը տանի նոր Տարուան կտր Հացը ու կուլուրներ, կը թրջէ զանոնք օրուան նուիրական ջրով, կը վերադառնայ տուն, կը ժանկ ախա եւ թրջուած կուլուրին մասնակց կ'ընէ նաեւ անասունները, որոնք տուն անդամները կը համարուին:

Աստուն կանուխ, տաներու մէջ ամէնքն ալ պատրաստ են՝ հագած իրենց տօնական զգեստները՝ մաշուր, կոկիկ եւ ուրախ: Տան մեծը կը նստի սենեակին մէջ բազմոցին կամ սէտիլիմ վրայ, զիշերուն մէջ օճախին ծօռ, եւ ամէնքը՝ դասակներ, հարեր ու թոսներ, կուզան, կը համբուրեն անոր աջը, կ'տանեն օրհնութիւնը ու կը հեռանան: Հարսերը, համբուրելով կեարայքին ձեռքը, կեարսին միջնորդութեամբ արտօնութիւն կը ստանան Երթալու իրենց մարանցը, ալիւրն օրհնական տանը, շնորհաւորելու համար իրենց ծնոզաց Կազանդը:

Կը գրուի նոր Տարուան սեղանը, գետինն հաստար կամ քի: բարձրութեամբ, որուն շուրջ ծալապատիկ կը նստին անեցիները: նախ կը կարուի նոր Տարուան կամ Կազանդի Հացը, բաժնելով անեցիներու թիւին հաստար կտորներու: Չեն մոռցուիր բացակաները եւ տունը, որուն բաժինն ալ խնամքով մէկ կողմ կը գրուի: Յետոյ ամէն ոք ուշադրութեամբ կը պրդուէ իր բաժինը տեսնելու. համար թէ արդեօք իրեն կայ՞ մէ հացին մէջ պահուած դրամը: Եւ որո՞ւ օր էլլէ այդ դրամը (տասէն քառասուն փարս), ան ինքզինք բախտաւոր կը համարէ: Եթէ այդ բախտաւորը փոքրիկ մըն է, մայրը կը

պահէ զայն անոր համար : Իսկ եթէ մեծ մըն է , կը կարէ այլ գրամբ իր քսակին տակը , անկէ բերեւէրը անպակաս բնկու : հաստաբոյ : Կը պատահի որ գրամբ տանը ելլէ . առկա նշան է , որ այլ տարուան ընթացքին ըլբեւէրը առեւէն պակաս պետի շրլլայ : Կրնայ ըլլայ որ գրամբ զանակին տակ դայ , այն ստեն ան կը պատկանի զանակին :

Կաղանդի հացի բաժանումէն յետոյ կը սկսի ճաշը : Կուտեն նախ ապուր մը , որ կ'ըլլայ սոպապուր , սալորսապուր , ձիթաբլիթով կորկոտապուր կամ էրիչտասապուր : Ասոր կը շարքէ շոր լարբալով պահոց ետինի ձիթաբլիթով կամ անծոր , անուշապուր , զածպոսա եւ միրգեր :

Այս արարողութիւններէն ետք մեծերը օրուան մնացած մասը կ'անցընեն փոխադարձ շորհասարական այցելութիւններով : Իսկ փոքրերը , զահ եւ ուրախ իրենց նուէրներով , կ'ուտեն ու կը խաղան տունը կամ գուրսը ձիւնին վրայ , եթէ օդը նպաստուոր է : Տան տեկինը , իր զուտարերը եւ հարսերն այ իրենց սնական գործերը աւարտելէ ետք , հարսերը կ'երթան այցելութեան իրենց ծնողաց , իսկ մնացածներն այ կ'անցընեն իրենց ժամանակը հաճելի գրոյցով իրենց կամ գրացիներու հետ :

Կաղանդի աթիւ սովորութիւն է տողբակ կամ գօտի կախել տանիքներու վրայ բացուած լուսանցքներէն , որոնք խեփեմ կը կոչուին : Տղաք տանիքէ տանիք կը շրջին (զի տանիքները հարթ են եւ միացած իրարու) եւ առանց իրենց զէմբերը ցոյց տալու , տողբակները կը կախեն խեփեմներէն՝ կրկնելով . «Մօրբուր , մօրբուր , կաղնիլ իս» : Ամէն տուն անպատճառ շաքարօգէն կամ միրգ կը դնէ տողբակին մէջ : Փեսաներն այ իրենց անխանց խեփեմներէն կը կախեն գօտիներ եւ կը ստանան պատշաճ նուէրներ :

Մ Ն Ո Ւ Ն Գ

Նոր Տարին կամ Կաղանդը կը սանուի Ընունդի շարաթապահի ընթացքին :

Խթումը կամ Ճրպայույցը Ընունդի կամ Զատիկ նախորդ օրն է : Տուններու մէջ մթաջան տեկիներ եւ օրկորդներ գործի վրայ են : Կը մարեն , կը յարպարեն , կ'եփեն ու կը թափեն : Թոնիրները վառ են եւ անուշահամ կաթային եւ թթամ հացին հոտը բռնած է փողոցները : Այդ օր շատեր ծած կը պահեն՝ երեկոյեան արժանանալու համար Ս . Հաղորդութեան :

Խթման օր մտաբացկանները կը շրջին զանէ զուս եւ կը ստանան իրենց բաժինը : Ժամկոչ աղբորն այ մահակը ձեռքը կ'անցնի եկեղեցւոյ ճուխերուն գոնիքէն , թակելով խաբանչիւր զուս : Օրուան բարիքներէն իր ասանպական բաժինն է որ կ'ուզէ : Կը բացուին զաները եւ ամէն ոք ստախաթեւոր իր տուբը կը դնէ եկեղեցւոյ սպասաւորին պարկին մէջ : Մէկը հաց կ'ուտայ , ուրիշ մը կաթա , ուսմաք երկուքն այ , եւ աւելի ունեւորներ նաեւ զրամական նուէր մը : Ու ժամկոչը իր պարկը կը լեցնէ հետզհետէ , կրկնելով իր շնորհակալութեան հնաւանդ մաղթանքը . «Մեմ մմաբ» :

Խթումի երեկոյեան եկեղեցական արարողութիւնները կ'ըլլան հանդիսաւոր , զղբաքներու ընթերցմամբ եւ Ս . Պատարալի մատուցմամբ : Գիրք կարգացող տղաք արդէն օրեր ստաջ աշխատանքի մէջ են : Ամէն մէկը կը ջանայ պատրաստել իր կարգալիք գիրքը , բոս հնաւանդ սովորութեան , երկար մաղապստաձեւ թուղթէ գլաններու վրայ գեղեցիկ ու զունաւոր զերթով ընդօրինակելով իր կարգալիք մարդաբանութիւնը կամ Ս . Գրական այլ կտոր : Գրադուլները մասնաւորապէս զարգարուած կ'ըլլան հրէշտակներու , հին գրչադիրներ ստնուած թռչուններու եւ զարգապրերու բազմազունեան նկարներով : Օրուան հերոսն է այն տղան , որ բախար պետի ունեւոյ կարգալու Դանիէլի Գիրքը : Այս գրքի ընթերցման համար կը դատուին անոնք , որոնք ունին գեղեցիկ ու զիւլ ձայն : Հպարտ է զայն կարգացողը եւ հպարտ եւ ուրախ նաեւ անոր ծնողքը , որ այդ աթիւ անպատճառ զրամական նուէր մըն այ կուտայ եկեղեցիին :

Եկեղեցւոյ աւարտումէն յետոյ ամէն ոք տուն կը շտապէ վաչելու : Համար նուակառքի սեպանը , օրուն վրայ միտը կը բացակայի , բայց անպակաս կ'ըլլան Եփրատի անուշահամ եւ փշոտ ձուկը ,

փիլաֆթը, շորքած կանաչեղէններէ պատրաստուած տապկոցը, թանապուրը եւն:

Այդ երեկոյ ամէնքն ալ կանուխ անկողին կ'երթան, զի Նոր Տարուան նման Մնունդի եկեղեցին ալ զիւրանց կը սկսի: Արարողութիւնք կը տեսնն երկար, աւելի քան շորս ժամ եւ Հաւատացեալները կանուխէն կը շտապեն տեղ դրաւելու համար: Ինչպէս ուրիշ տեղերում, նոյնպէս Երզնկայի մէջ ալ Զորահանքի արարողութիւնը տեղի կ'ունենայ Հանգիստարարդէս եւ Պաշի կնքահայրութիւնը կը արտի աւաւելագոյն նուէր տուողին:

Ժամէն դառնալով, անեցիները կը շնորհաւորեն զիրար՝ ըսելով. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»: «—Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»: Նոր Տարուան նման, այսօր ալ տան անդամները կ'երթան կը համբուրեն ձեռքերը տան մեծերուն՝ հօր եւ մօր, կամ մեծ հօր եւ մեծ մօր՝ եթէ կան, ու կը շնորհաւորեն անոնց Մնունդը: Ասկէ ետք կը դրուի սեղանը, որուն վրայ անպակաս կ'ըլլան օրուան կերակուրները — Էրիշտապուր, տոսիկ (խաչ, փաշա) քէշիկի (հարխա) փիլաֆ, կանաչեղէնով կերակուր մը, անուշեղէն մը: Ընչէն յետոյ մեծերուն համար կը սկսի շարանը շնորհաւորական այցելութեանց: Միտակը քահանաներ իրենց ծովերուն տուները օրհնելու կ'երթան: Փոխադարձ շնորհաւորութեանց եւ տուները օրհնելու այս սովորոյթը պարտաւորիչ է, այնպէս որ ամէն տուն կանուխէն կը տեսնէ իր պատրաստութիւնները: Այս առթիւ հիւրասիրութեան ընդունուած ձեւն է հետեւեալը: Նախ կը հրացոյցի սուրճ, յետոյ քոնեակ կամ օղի, շաքարեղէնով եւ պղանուշով կամ վարդանուշով: Բայց եւ սերկելիչ պատրաստուած անուշները սովորական են: Մատուցումը կ'ըլլայ արհեստով: Բերաքանչիւր հիւր մասուցում խմելքը կը պարզէ՝ տօնին յատուկ մաղթանքով մը. «Շնորհաւոր Մնունդ, ամէն տարի բարով հասնիք բո օրուան», որուն կը պատասխանէ հիւրընկալը՝ «Շնորհաւոր ամէնուս», «Ամէն» եւ այլ ձեւերով: Իսկ հրացում անուշը կ'աննէ հիւրը մատուար այլ նպատակին համար զրուած թէյի զգալով մը եւ վայելիչ յետոյ դայն՝ զգալը կը դնէ ջրալից դաւաթի մը մէջ, որ այդ նպատակով զրուած է արհեստի վրայ: Կան ջրալից այլ դաւաթներ, որոնցմէ փափաքող կ'ըմպէ անուշը ճաշակելէ ետք: Հիւրերու թիւին համաձայն անուշի զգալներ զրուած կ'ըլլան արհեստի վրայ:

Մնունդը պաշտօնապէս կը տեսնէ երեք օր, եւ այդ երեք օրերու ընթացքին ալ եկեղեցիներու մէջ պատարագ կը մատուցուի: Բայց

տափին օրէն յետոյ Հանգիստութիւնն ու ետանդը հետզհետէ կը տկարանան, այնպէս որ երրորդ օրը թէ՛ եկեղեցին եւ թէ՛ դուրսը Մնունդը իր ջերմութիւնը կորսնցուցած կ'ըլլայ, եւ շատեր իրենց խանութները կը բանան: Քահանաներու համար, սակայն, ութ օր Մնունդ է եւ անոնք այդ օրերուն կը շարունակեն տնօրհնէքը:

Բ Ա Ր Ե Կ Ե Ն Գ Ա Ն

Մեծնոցին կը յաջորդէ Բարեկենդանը, զոր հասարակ ժողովուրդը կը ճանչնայ Բարեկենդանի անունով: Ամենէն ուրախ և ժողովրդական տօներէն մին է: Մեծ Պահօքի եօթը շարքիներու, զրկանքին և ազաշխարութեան ենթարկուելէ առաջ՝ մարդիկ սովոր են քանի մը օրերու ուրախութեամբ և կերտխումով պատրաստուիլ դայիք պահօքին:

Հինգշաբթին՝ Վարդանանց տօնը՝ կուտայ ազգանշանը Բարեկենդանի խրատութեանց, որ իրականին մէջ կրօնական ուշիւշ ունի: Գարոցները կը փակուին և հայրենեաց ու հուսալքի համար ինկոզ քաջերու յիշատակը կը տօնուի եկեղեցական և զոյրացական հանդէսներով:

Բարեկենդանի յատկանշական երևույթներն են առաջ կերտխում՝ անուշեղէններով և խորտիկներով: Քուրթի աղին և էրկնայ կարմիր ու համեղ գինին կը հասին՝ որպէս խման հիւնն անուն հաւանաճ Երզնկացիներու կոկորդներէն վար: Քաղաքին բացառիկ ու հաճելի երևույթ է դաւաւր-գունանային երևումը: Տանիքներուն վրայ կը լուսին անոնց ձայները, և ամէն ոք, մանաւանդ աղաք, կը մտնեն շրջապատելու դաւաւրին և գունաճին: Ոտը ու պարը կը սկսի, և այլ ու կին ձեռք ձեռք կը զանան շուրջուր: Գիւղերու մէջ ուրախութեանց վայրերը գիւղամէջերը կամ կալերն են: Հոս մարդիկ աւելի սպաս են, երգերը աւելի առաջ և առճմիկ, զի քաղաքին մէջ հայրերէնէն աւելի թուրքերէնէն է որ կը վարէ պարերը:

Բարեկենդանի ուրիշ մէկ յատկանշական երևույթն է գիտա-կատարումը, որ անկասկած արեւմտաքէն եկած է: Մարդիկ և աղաք գանազան գիտակներով և տարազներով կը շրջին փողոցէ փողոց և ստուէ սուն: Կը յիշեմ մէկը, որ հազամ էր ստանայի մը տարազը, կոտորուար գիտակով մը և երկար պոչով մը: Մենք, աղաքս, կէս վախով և կէս գարմանքով կը հետեւէինք իրեն, ու ամէն անգամ որ ան կը դառնար մեր կողմը աւտակ մը սպառնական գիբրով, ահաղին ձիւ ու կանչով խոյս կուտայինք:

Բարեկենդանի վերջին օրը, Կիրակին, խրատճանութիւնները կը հասնին իրենց ծայրակէտին: Մարդիկ կ'ուտեն, կը խմեն ու կը

զուարճանան մինչև կէս գիշեր, երբ ամէն բան կը վերջնանայ և Մեծ Պահօքը իր ծանր շուքը կը ձգէ ամէն տեղ: Այս ուրախութեանց անբաժան մասն են վէճն ու կոխը: Երբ ստամոքսները կը պարարին և դուստները կը տաքան՝ բարբարսը կ'արթննայ ոմանց մէջ, կը կուտին երբեմն հայ հայու և մերթ ալ հայ՝ թուրքի հետ: Բայց սանթր պատահական երևույթներ են և շին կրնար սուսերածել տօնին բարատական զուարթութիւնը:

Բարեկենդանի Շարաթ երեկոն կոչուած է երզնկացիներէն Տէլաւի փաստիլու օր: Այդ երեկոյ եկեղեցւոյ վարդապետները կը բաշտին, որպէս նշան համեղ Մեծ Պահօքին: Այդ երեկոյ շատեր, մանաւանդ առք դուստներ, մանաւարապէս ժամ կ'երթան ականաւտա ըլլալու և մանուկցելու ախտէր փոստելու այդ արտասոց սովորութեան:

Արարդուրեան աւարտէն յետոյ ժողովուրդէն ոմանք, կատակի համար, կ'առնեն եկեղեցւոյ յատակին վրայ գետեղուած մարթներն ու բարձրոցները և կը նստեն քահանաներուն, պատժելու համար գաննք, որ Մեծ Պահօքը բերած են: Այս զուարճախան սովորութեան կը միանայ երբեմն նաև սխալալուծութիւնը: Չի ով որ որեւէ քահանայի հանդէպ սխալ կամ ցու մը անի, այդ ախթիւն կ'օգտուի՝ «Վրէժը տանելու համար»: Ասոր համար ալ քահանաներէն անոնք որ կը խորհին թէ հակասակորդներ ունին, այդ երեկոյ կը խուսափին իրենց պաշտօնէն՝ ապատելու համար փոստուելու վտանգէն:

ՄԵՄ ՊԱԶԻՐ

Մեծ Պահճը կը պահուի խտտորէն: Առաջին օրը կը կոչուի բակլիախորամ — բայլիախորամ կամ օխըր բայիի օր: Բակլիախորամ լսողը հեթանոսական հնութիւն մ'ունի եւ հաւանարար կը նշանակէ բակլիալ ուտելու օր: Այդ օրը մարդիկ կ'աչջեղեն իրարու հնորհաւորելու համար Պահճը, ըսելով. «Բարով հասնի՞ք Ջատկի՞ն»: Աչջելողները կը հիւրասիրուին մասնաւոր սեղանով մը, որուն վրայ զըլխաւոր ուտելիքն է խաչած յուրիան իր գանապան ձեւերով, նաեւ բակլիալ եւ ալլ ուտելիքներ: Օխըր բայիի օր կոչուած է, զի այդ օր սովորութիւն եղած է որ Պահճը հնորհաւորելու գացողները առնուադրն եօթը գումաթ օգի խմելու են:

Պահճի այս առաջին օրուան մէջ տանտիկիները կատարելիք շատ զործ ունին: Կ'աւելն, կը սրբեն ստն զլաւն ու պոճախը: Կը լուան ամանները եփ կամ մօխի ջրով, որպէսզի «Յնննի» հոտը կոխ տունէն: Տղաք սոխին վրայ եօթը փետուրներ կը դետեղեն եւ կը կախեն խէփէնքէն, որպէս նշան Պահճի եօթը շարաքներուն: Այս փետրազարդ սոխն ալ կը կոչուէր մեծ պահի: Ամէնքս ալ անհամբեր կը սպասէինք, որ անցնի շարաք մը եւ այդ սոխերէն մին պակսի, զի իւրաշնչիւր անցնող շարաքի հետ մէկ փետուր կը ցաչուի սոխէն: Բայց Մեծ Պահճի ընթացքին օրերը շարաքները կը թուին եւ շարաքներն ալ կարծես ամբասներու շափ կ'երկարին:

Պահճոց գլխաւոր կերակուրներն են անժուր խաչած յուրիան, որուն վրայ բարեկեցիկներ ձիթախղ կը լեցնեն ու կ'ուտեն փիպզով (մանրած սոխ՝ ազատեղող): Սովորական կերակուր մըն է պազապուրը, որ կը պատրաստուի միտան լաւ մը եփուած եւ հարխայի պէս ծեծուած կարկոտէ եւ շոր յուրիայէ (ներմակ լոյլվազ): Ասիկա կ'ուտեն սաք ու նաեւ պոչ, ուրկէ եկած է իր պազապուր անուր: Իրբեւ անժուր եւ յաճախ զործածուած կերակուր շատ յարգ չի վաչելեր: Փողոյուրդը պազապուր բոտը փոխարեւարար կը զործածէ պոչ ու անհամբոյր մարդոց համար: Ուրիշ ուտելիք մըն է մախոխապուրը, որ կը պատրաստուի խիստաջած թիւու խմորէ եւ նաեւ կանաչեղէններէ՝ համամայն ճաշակին: Սպվորապուրը կը պատրաստուի թիւու սալորի շիբով եւ կորկոտով, զոր ակորժակով կ'ուտեն փոքրերը: Սովորական են նաեւ սպապուրը, սիւնապուրը,

ֆիլուապուրը (ֆիլուա = ոլոս, մաշ), սիւնալ բոփ կամ բոփիկը: Ունեւորներ կ'եփեն ձիթախղով գանապան կերակուրներ:

Ամբողջ Մեծ Պահճի ընթացքին օրական երեք անգամ ժամերգութիւն կը կատարուէր. առաւ, կէսօր եւ իրիկուն: Ազաշխորութեան օրեր ըլլալով՝ բարեպաշտները, բնօրհանրապէս ծերեր եւ պատաններ, կանոնաւորապէս ներկայ կ'ըլլային այդ ժամերգութեան: Գործի մարդիկ առտուն կանուխ կամ իրիկունը կը հանդիպէին եկեղեցի «խաչ մը հանելու եւ ծուկի մը աղօթք անելու համար»:

Տ Է Ը Ե Տ Ա Ս

Ընօհանրապէս Մեծ Պահճի մէջ պատահող առաջին տօնն է Տետանըգասաջը, որ ժողովուրդի բարբառով կը կոչուի Տէրբնտա: Տօնին նախօրը երկուշին, բոտ կարգի, կը կատարուի նախատօնակ, եւ ժամօրներ վառ ձեղքածօրերով կը վերադառնային տուն, եկեղեցիէն բերուած լոյսով վառելու համար Տէրբնտաի խորոյններն ու տուներու յամպանը: Քաղաքի եկեղեցիներու հրապարակներուն վրայ, փողոցներու մէջ յարմար տեղեր, պիղերու մէջ կարտակերը՝ խորոյններ կը պատրաստուէին երիտասարդներու կողմէ, զորս կը վառէին եկեղեցւոյ աւարտին բերուած մտերով: Տէրբնտաի խորոյններուն շուրջ կը հաւաքուէին ամէնքը, մասնաւոր երիտասարդներն ու պատանիները, կ'երգէին ու կը պարէին: Երբ բոցերը կ'իջնէին, կը ցատկէին կրակին վրայէն՝ կանչելով.

Տէրբնտա, Մարտն ինձի տաս,
ես պագմիմ, դուն խնդաս:

ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊ

Մեծ Պահճի Գալտուան կիրակիին նախօրը Շարաթ օրը Լուսաւորչի Մուսն ի Վիբրապի տօնն է: Այդ օրը Երզնկացիներու, մասնաւոր կիներու համար, ուխտի օր է: Առատտուն կանուխ, երբ օրը նպատատու է, շարաքներ պիղըր տանող ճամբան լեցուած կ'ըլլայ կիներով եւ մանուկներով: Ամէնքն ալ իրենց հետ ունին ծրարներ, որոնց մէջ գրուած կ'ըլլան իրենց օրուան պաշարը — պազա-

պուր, սխեռէ թոփիկ, ձիթապտուղ, կանաչեղէններ, թուրջի, թահին հայրա եւն:

Հարսպետի զիւրը կը դանտի Երզնկայի արեւմտեան կողմը, շուրջ Երեք միլան հեռու: Այս զիւղին մէջ կը դանուէր կիտաւեր մատուռ մը յանուն Ս. Գրիգոր Լուսաւորի: Ըստ աւանդութեան Արքեպիսկոպոս Հայրապետ Նիկիոյ ժողովէն վերադարձին այստեղ է որ կարգացած է «Հաւատամք»ը եւ Լուսաւորիչ ալ անոր վրայ աւելցուցած Վեպ Մեք Փառաւորեցութեան:

Մ Ա Ղ Կ Ա Ջ Ա Ր Գ

ժողովուրդը այս տուն կը կոչէ Ծաղկաբլուր, բայց մը, որ կուտայ լիտայ Երզնկայի ալ բնութեան պատկերը: Արգարեւ, Ծաղկաբլուրը իրական ծաղկաբլուրի տուն մըն է Երզնկացոց համար: Զիւնը արդէն հայրա կ'ըլլայ զաշտին մէջ՝ կամ իր գոյտի թիւեր կը պահէ թուարկու խորը, ստուերտ փայլերու, ծմակներու մէջ: Բնութիւնը ամբողջ ձմրան խոր քունէն արթնցած, անզուտ կեանքի մը սուշուով կը յորդի: Հայաստանի սքանչելի եւ անմոռանդ գարունն է, որ կենսախաղ եւ կարմրաթուշ պատանիի մը նման կեցած ձմրաններու եղերքին՝ ծափ կը գարնէ, կ'երգէ եւ ծիծաղ ու ծաղիկ կը սփռէ ամէն դի: Անուշ ու հզոր յորը մը կը լեցնէ միմուրբար: Հողին հոտն է, որ խոտնուած նորածնի կանաչութեանց եւ ծաղիկներու շունչին, սունդերին ներս կը խոսէ ու կեանքի երանութեան կազմարիչ զգայութեամբ կը լեցնէ մարդուն էութիւնը: Արևուր, մեր նախնեաց ժողովուրդը աստուածը, հրեղէն կտորով կ'անցնի մեր դաշտերուն ու սոցիալներէն՝ ամէն կողմ կեանք եւ ժպիտ քաշխար: Հիմա որ այս տղերք կը գրեմ՝ մանկութեան օրերուս վերաշնորհմամբ սիրտս հրճանքն կը թրթռայ եւ սկիւրակ կը յուսաւորուի մեր Ծաղկաբլուրին զիւրական պատկերէն, աւաղ...:

Ծաղկաբլուրի տունին յատկանշական ծառ ուռին է, որ առատօրէն կ'անձի գաշտին մէջ՝ առուններու, գետակներու եւ եփրատի ափերուն: Նորարդորջ ուռիներու հիւղերը՝ իրենց կենդանի ու մպտուն սերունդներով կը խորհրդանշեն տունը: Երկեղեյիներու մէջ, փոխան ձիթիներին, ուռենիի ստերն են, որ կը զարգարեն դռները, խորանները եւ զպիւրներու ու ժողովուրդին ձեռքերը: Եւ հարկ է խոտափանդի թէ նորագարթ ուռենին իր կենսախորը կանաչով շատ

աւելի կը պատշաճի տունին կրկնակ իմաստին, բայց անճրգի Պապատունի ըլլակողերուն կտուած յորջ ու զորջ ձիթիներն:

Օրուան տունին կրանական կողմը մասնաւոր ոչինչ ունի: Պատարալի սկզբնաւորութեան թափօրը կը շրջի ուռենիի ստերով եւ յատարա պատարալի ժամերներ տուն կը դանտան ուռիի կանաչ ստեր իրենց ձեռքերը:

Ծաղկաբլուրին՝ տարուան նոր հարսերը առաջին անգամ յայտնով կը վերագտնան մարմնը, այսինքն հօրենական տունը: Ասիկա բացատիկ եւ ուրախաթիվ զէպք մըն է թէ՛ հարսին եւ թէ՛ իր ծնողաց համար: Հարսին մարմնաց տունէն մասնաւոր պատուհարակութիւն մը, կայմուած հարսին մօտաւոր հարսպատուհներէն, կ'երթար հարսին տունը, որ պատշաճ կերպով հիւրասիրուելէ ետք, ստանձին Հանդիսաւորութեան հօրենական տունը կ'առաջնորդէր հարսը, որ պէտի անցընէր հան իր Զատիկը: Այս փոքր թափօրի անցած ձամբուն վրայ կիներ ու աղջիկներ զարս կը թափէին տեսնելու համար հարսին վերադարձը: Այս վերջինը պարտաւոր էր համարուելու ձեռքերը տուններու առջև իր անցքը ողջունող տարեկ կիներու՝ ստանալով անոնց մազթանքներն ու օրհնութիւնները:

Ջ Ա Տ Ի Կ

Աւաղ Ծառաթիւ կրանարտը խորհրդաւորութեամբ կը մտնէ գտներէն ու սրտերէն ներս: Հողեւոր եւ մարմնաւոր պատրաստութիւնը փութով առաջ կը տարուին: Տուներէն ներս ետուրն է: «ՏԱՆ ու տեղ, ծախ ու պուճախ» կը մաքրուին, ամաններ կը փայլեցունին, կապերաներն ու զորքերը կը յուսացունին, որ ամբողջ տունը Զատիկին շինկայ ճայտղին երեսին:

Ծառաթիւներու պահեցողութեան յետոյ մարդիկ կը պատրաստուին՝ արժանի ըլլալու համար Ս. Հաղորդութեան: Պակաս չեն նաեւ ծով պահողները: Բաճանակը զրոյցած են խոտափանդութեամբ: Քէնտներն ու ցաւածները կը հաշտուին իրարու հետ, եւ ամէն ոք կ'աշխատի մաքուր սրտով եւ մարմնով ընդունել տրուանական խորհուրդը: Մեղքի դիտակցութիւնը զորտար է եւ հուսաբք ուսեղ՝ բարոյական սրբութիւններն ու սոսճանները յորդի: Խոյտ առախան: Ճամբիտ քրիստոնէական ոգին օրեւ առեւ արեւան զորտար չէ որքան այս շարժումն ընթացքին:

Արդէն Երկու շաբթիէն սկսած զպրոցները զոյց են:

Աւայ Հինգշաբթի ցերեկին կը մտաուցուի ընթերցաց պատարագը, որու ընթացքին շատեր կը հարգուին: Կէսօրէն ետք կը կատարուի Սոմալուի արարողութիւնը և զիշերն ալ՝ Պատարածք, միշտ խուն բազմութեան մը ներկայութեան: Պատարման զիշերը շարածնի պատանիներ Եկեղեցի կ'երթան և մտիքն սպառելով հաստացեալներու փղանցքները իրարու կը կտրեն: Երբեմն չափահասներն ալ կ'իջնան այս փորձութեան մէջ:

Աւայ Ուրբաթը խաչելութեան և թագման օրն է: Մտածուոր շուքով կը պատրաստուի Քրիստոսի զերեզմանը: Ծուկայի խունութներն ալ կը զոցուին և աչքերն ալ կուզան հանդիսատես ըլլալու թագման թափօրին, որ մեծ շուքով կը կատարուի Եկեղեցիներու մէջ, Քրիստոսի զերեզմանին շքեղապիւրջամով:

Աւայ Ծարաթը, Զատիկ Պիտումը, Մեծ Փահլէի զերջին օրն է: Տուններուն մէջ օճախներն և բնիկները բուն և և կաթնային և գասեական կերակուրներու հօտը աշխարհ րոնք է: Ժամկոչ ու տրնտես (զպրոցին սպասուորը) և մուրացիկներ զոնէ զուս իրենց բաժինը կ'ուզեն և կը ստանան աստուութեամբ: Ծուկային մէջ ալ բազմութիւնը խնուած կ'ըլլայ զիւրջին զուսներու համար:

Եկեղեցիները ցոյցի դրած են իրենց հարստութիւնը: Պարանները պարզաբուած են թանկագին խաչերով, Աւետարաններով, սզանիներով և աշունակներով: Այդ երեկոյ կը կարգացուին զիւրջները՝ զպրոցի աշակերտներու կողմէ: Մնուցնը կը փութան հանգիստես ըլլալու իրենց զուսներու ընթերցումին և լսելու անոնց ձայները ընթերցման ստեն և զպրոց զուսն մէջ: Զի, պէտք է շեշտել, զպրոց զուսը կազմուած կ'ըլլան զպրոցական պատանիները և մտաուոր ալ երիտասարդներէ, որոնց երթալուսեան կըթութիւնը զպրոցական դասացանկի կարեւոր մէկ մասն է: Անէն զոյր այդ օր հազած կ'ըլլայ Եկեղեցոյ լուսալոյսն շարիկը: Աղջիկներ շեն մտանակցի զպրոց խոսքերուն: Այսօր, բարեպաշտներ, ընդհանրապէս իզական սեռէ, մինչև երեկոյ ծով կը պահեն հարգուելու համար:

Եկեղեցիէն յետոյ ամէն օր ստան կը շտապէ և զբարդասաններ կը հասարութի նուակատեսաց սեղաններուն շուքով, որոնց միտ, Մտուցի Պիտումէն աւելի ըլլալով, կան կարմիր հասկիթի և զորման կանաչեղջններ՝ սինձ, Ժողկեկ, օպին և ժախ, ինչպէս նաև սոսորական կանաչ սոխը, պատրեղը և բոզկը:

Զատիկ Եկեղեցին, նման Մտուցին, կանուսի զիշերանց կը

սկսի և կը տեւէ մինչև առաւօտ: Զեն մոցուոր նաև մեակները: Եկեղեցի երթալէ առաջ շատեր կ'ուզուին զէպի զերեզմանոց, պրպրազոց մտերու լոյսով ուրախացնելու համար անարձ մեռնողներու հողիները: Ամբողջ զերեզմանաուելը, բազմաթիւ մամերու լոյսով, զլիսահակ ուռնիներու և զերաւոյց բարբոսներու ստուերներուն տակ, կը ստանայ խորհրդուոր երեսիթ մը: Ու մարդ ըրնազարար կ'ունենայ այն տպաւորութիւնը թէ այդ պահուն մեակներն ալ կը մտանակցին օրուն վայելքին:

Եկեղեցիներու կոշնակներուն հետ մամուն մեծ հրապարակն ալ կը սկսի կենդանանալ: Կը հաստատուին առժամեայ կրպակներ՝ թէյ, սառչոյ, հակիթ, անուշեղջններ և խաղալիքներ ծախելու համար: Մանաւանց կարմիր հակիթն է որ կ'իջնէ հրապարակին: Առաւուն կանուխ, զեռ Եկեղեցին շուարտած, հրապարակը կը լեցուի պատանիներով և երիտասարդներով: Աղմուկն ու մտրոց կը պատկընտրեն հակիթները մի առ մի կամ երիտասանակ շարքերով: Զգաք մէյ մէկ հակիթ բոնած իրենց ձեռքերը, ձայն կուտան իրարու. «Գաւ-գաւաւ», դաւ-դաւաւ»: Ատիկա կուսի հրաւերն է: Մանուկ որրտեր կը խաչան կամ կը տիրին տարած մտրուած հակիթին համար: Մէկը զամբիւղ մը յէ հակիթ զրած հօտը և ստանկուս հատ ալ շարած զետիր՝ ձայն կուտայ, հրաւիրելով իր յանձնարարները թուրքերէնով. «Սրալալա-սրալալալա»: Միւս կողմը արդէն իրմբըւած են ուրիշի մը ժօտ, ուր շարքային հակիթախաղը ետանդով առաջ կը տարուի: Փոքրիկներ ալ ունին իրենց հակիթները, զորս կանուխէն զտտած ու պատրաստած են օպուսիթամբ իրենց մեծ եղբայրներուն կամ հօրեղբայրներուն կամ որեւէ բարեկամին: Հակիթի զարմելով սկսաներուն՝ հետոյ ձայնէն հասկնալ սնոր զօրութիւնը: Զօրաւոր հակիթ մը հնչեղ ձայն մը ունի, մինչ թոյլ հակիթին ձայնը աւելի սկալ ու թոյլ կ'ըլլայ: Ատր համար սովորութիւն կը ստանձին հակիթներ կուսեցնել առաջ փոխել հակիթներ և փորձել անոնց մտքը զարմելով սկսաններուն: Այս փորձէն ետք, եթէ փտաւ՝ ըլլային իրենց հակիթներու ուսին, հակիթամարտը տեղի կ'ունենար: Պարզախոսութիւններ ալ պակաս շեն ըլլալը: Ոմանք շատ կանուխէն հակիթներու ծայրէն սակեղով ծակ մը կը բանան և ձեռնով կը պարպեն զուս և յետոյ մեծ վարդետութեամբ այդ պարտայ հակիթը կը լեցնեն սեւ ձուրթով (կուլոր): Այդ տեսակ խորշախ-

ամած հասկիթները թուրքերէն բռնով հիլլիլի կը կոչուէին: Տղա շատ գգոյշ էին ևւ միշտ կը ջանային շեռու մնայ նման հասկիթներով և յամարս դիրքս կը զգուշացնէին: «Մօ, Եարամին հետ հասկիթ չի խաղաս, քնոր հասկիթը հիլլիլի է»:

Այս սարսափականց ևւ մտքին մէջ ընտկան ևւ նաեւ մէճերն ու կոխները, յամարս նոյնիսկ մէկ հասկիթի համար: Երբեմն կոխը կը ստանար յամարկան երեւոյթ ևւ երբեմն ալ ցեղային, զի թուրքերն ալ կուզային ժամանկելու հակիթախղին: Երբեմն ալ հայ սինդրսրները մէն ու կոխ կը հանէին, ևւ անվայել դէպքերու տեղի կուտային: Առոնցմէ մէկուն ևւ տկանատես եղած ևւ ու մինչեւ հիտա ալ չեմ մտայած: Ս. Սարգիս Եկեղեցւոյ պարտէզի պատին տակ կը որ զետեղուած կ'ըլլային զատկական ասժամեայ կրօնականներ: Այնուց կուզային նաեւ հայ ու թուրք անուշամանուներ՝ իրենց ետտանտեքանու մրտա զետեղած ասիւններով, որոնք թուրքերէն բռնով բնապա կը կոչուէին: Թուրք մը եկած էր ևւ իր թաղային մրտա զորած խոշոր կտոր մը քոշ հազվա կոչուած անուշեղէնէն ևւ կը ջանար պայն մամուտելով որտպա՛նի մը ապահովել: Մէկ երկու հայ անուշաման տպօք պարտէզի ցած պատէն անցնելով Եկեղեցւոյ կողմը, անկէ խոշոր ցոր մը նետեցին ևւ կործանեցին թուրքին թնայլան: Թուրքը յաւաստա շորոյին նայիցաւ ևւ սկսաւ արտասուել: Բոյրք ներկաներն ալ զէջ ազգուեցան: Երիտասարդներ հաւաքուեցան ևւ սկսան միթխարէլ թուրքը: Քանի մը հոգի անցան պարտէզին կողմը բրտնելու համար շարպարծները: Իսկ մնացողները իրարու մէջ զրամ հաւաքեցին ևւ զոհացուցին հարկանին լիւտի, որմէ մարդը զո՛ւ մնայ ևւ որ՛նեց զերենք:

Չտարկական հասկիթը ասներու մէջ կը ներկուէր ստորարար ստիի կեղեւով: Այս ստիի կեղեւով ներկուած հասկիթներուն մրտա մամով զանապան զարդեր, ծաղիկներ կը նաշխէին ևւ յետոյ այլ հասկիթները քանի մը ժամ կը թողային թնտի մէջ: Քանզ կը ասներ թայ ծնայած զոչոյր, իսկ մամին տակ ծածկուած զոչոյր կը մնար, ու երբ մամը մերցնէին՝ կ'ունենային նաշխան հասկիթներ: Ժաման հարպարակին մրտա հակիթամամները իրենց հասկիթները կը դանտարէին զանապան ներկերով, աւելի հրապարել: Ենծայելու համար զանոնք:

Եկեղեցւոյ աւարտէն ետք ամէն ոք կը կը վերապանայ տուն: Կը կուտարին շորհաւորութիւններ ընտանեկան շարիւրէն ներս: Փոքրիկները կը համարեն մեծերուն ձեռքեր ևւ կը ստանան անոնց

որհնութիւնը: Յետոյ կը զրտի զատկական սեղան, որան մրտա անպատանա սկտք է ըլլան տանգական հարխան, էրիչտասպարն ու կարմիր հասկիթը ևւ ին:

Ճաշէն յետոյ ամէն ոք ազատ է: Տղաք կը մտան հրապարակը կամ փողոցը հակիթախղին մամանկելու: Այրերը կ'այցելեն թարեկամներու տաները շորհաւորութեան համար: Կոր հարերը արզէն իրենց մայրերուն տաներն են: Ազգիկներն ալ ասներենքու մրտայ, բակերու մէջ կամ ասները կը ստեղծեն իրենց ընտանեկան մտերմիկ ժամանցներն ու հակիթախղերը, սեւին յատուկ ասուխներով համեմուած: Տուները կը մնան տան տիկիներն ու ասն երկց անդամներ՝ ընդունելու համար շորհաւորութեան Եկոյ բարեկամները:

Չատիկը կը տեւէ երեք օր: Երկրօրը օրը Մեակուց է, այցելույթեան ևւ օրհնութեան օր զերկրամաներու: Այս երեք օրերու ընթացքին ալ պատարազ կը մատուցուի Եկեղեցիներուն մէջ: Հրապարակներուն մրտա ալ հակիթախղար կը շարուանկուի, թէ Եւ երրօր օր նուազ ետանդով, զի տօնը ա՛յլ կը կրանցնէ իր թափը:

Տնորհնէքը, ինչպէս Մեանդին, նոյնպէս ալ Չատիկ անհրատեւա մասն է: Քահանաներ տաղին օրէն սկսած, ընկանկույթեամբ ժամկուշին կամ պատանիի մը, կ'այցելին իրենց ծախերուն, անշուտ սեւելով հարուստներէն, կ'օրհնեն աղբ, ալիւրը, թթիւսրը, ջուրը ևւ մերթ ալ զինին, ու կը մեկնին ստանալով զրամական նուէր մը՝ մէկէն մինչեւ տասը ևւ աւելի զոյրուշ: Տնորհնէքի տան ամէն սեղանի մրտա քահանան իր կողմէն կը զնէ նշխար մը: Այս անպամ ալ, երբեմն խարութիւն կը զրտի հարուստին ևւ աղքատին միջեւ, խոշոր նշխարները վերապանելով միտին հարուստներուն: Քահանաներ թնտակ չեն ստանար: Առոնց ապրուստի միակ միջոցն է ժողովուրդին նուէրները, որոնց մէջ ալ զխաւորն է անօրհնէքէն զոյացած զուամբը:

Չատիկն ամէն ոք իր կարողութեան շախով կը ջանայ մարար ու նոր հաղուիլ: Մանուկներ Չատիկուն կը սպասեն ունենալու համար նոր զղեստ ևւ նոր կոշիկ, զորս հպարտութեամբ ցոյց կուտան իրարու: Զրկուածները աչօր աւելի ծանօրելն կը զղան իրենց ջրքարութեան բնոր: Զրկանքի այս զտտեղեցութենէն ծնած է այն աւսալուածքը, զոր նոր զղեստ յունեցողները կը նետեն ունեցողներու

երևոյն. «Չատիկը վրան ծրանք է»: խօսք մը, որուն տակ ծածկուած է անգիրտակից նախանձը:

Այսպէս թէ այնպէս, Չատիկը հայրենի երկրին ամէնէն ժողովրդական եւ բերկրալի տանն էր: Պատճառն այ այն է, որ ան իր մէջ կը բովանդակէ կրկնակ խորհուրդներ՝ ամփոփուած միեւնոյն բառին մէջ: Յարութիւն: Այո, ան տանն է Քրիստոսի յարութեան ու նաեւ տան իր գերեզմանէն այնպէս սքանչելի կերպով յանող Հայաստանի բնութեան, որը մեր նախնիք քրիստոնէութենէն ալ առաջ ստփար էին տանել նոյն եռանդով եւ նոյն հրճուանքով:

Եւ շնորհաւորական մայրամբներ կը թռչէին շրթունքէ շրթունք:

- Քրիստոս յարեալ ի մեռելոց:
- Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ — ՎԻՃԱԿ

Համբարձման տանք ամբողջ հայաշխարհին մէջ գեղեցկացած է բնագաւառական երանգով մը: Ժողովուրդը վիճակ անունով կը ճանչնայ զայն, զի օրուան յատկանշական երևոյթը վիճակախաղն է, բնիկերացած դաշտային գուարճութեանց:

Երգնկայի քաղաքին մէջ՝ Համբարձման կիրակին, եկեղեցւոյ աւարտէն ետք, ժողովուրդը խուճրեով կը դիմէր դէպի դաշտերը, մանաւորապէս եփրտտի ափերը, ուր տեղի կ'ունենային կերութեամբ, երգ ու պար եւ գուարճութիւններ: Հայկական բնգհանուր սովորութեան համաձայն, ազնիւներ ծաղիկներ կը հաւաքէին եւ վիճակախաղ աւելի կ'ունենայր: Դժբախտարար կարելի չեղաւ իմանալ թէ ի՞նչ երգեր եւ վիճակի գուշակութիւններ տեղի կ'ունենային: Ամէն պարագայի տակ, քաղաքը կէս ենթարկուած բլլայով Պոլսէն եկող շունչին, շեմ կարծեր թէ կային հոն վիճակի այն գեղեցիկ երգերը, որոնց կը հանդիպինք այլ գաւառներու մէջ: Անկասկած դիպերու մէջ հայկական հարպաս ուղին աւելի լաւ պահպանուած բլլայով, հոն կարելի պիտի բլլար հանդիպել աւելի ինքնայատուկ րանահասական նմոյշներու: Դժբախտարար այս ուղղութեամբ մեր ջանքերը ի դուր անցան, զի գիւղերէ վերապրողներէն շատեր մանկական տարիքին մէջ բլլայով տեղահանութեանց ատեն՝ շատ բան չեն յիշեր, իսկ սակաւաթիւ շափահասներն ալ, որոնք վերապրեցան կամ եղանի օրերուն արդէն հետացած էին, մեր հասողութենէն հեռու մնացին:

Վ Ա Ր Գ Ա Վ Ա Ռ

Ժողովրդական բառով Վարդիվոր կը կոչուի Այլակերպութեան սօնը: Եկեղեցական արարողութեանց մասին խօսելն աւելորդ է, զի ամէն տեղ անոնք նոյնն են: Ազգային հեթանոսական սովորոյթի մը մնացորդն է ջուրի սրկումը, որ պահուած է նոյնպէս Եկեղեցաց եւ Գարնաղեաց դաւաններուն մէջ: Վարդապետն քաղաքին եւ գիւղերուն մէջ ծաւարուն սովորոյթ է իրարու վրայ ջուր սրսկելը: Մանաւանդ գիւղերուն եւ վանքերուն մէջ, ուր այս միջոցին օգտփոխութեան կամ ուխտի դացած կ'ըլլան շատ մը քաղաքացիներ ալ, մարդիկ շեն քաշուիք զիրար առուններու եւ վտակներու մէջ պտտկեցնել: Երկու սեռէ պատաններ, երիտասարդներ եւ շափահաններ պաշտօններով, զսյլերով իրարու զլխին ջուր կը թափեն փողոցներուն մէջ, պատահաններէ եւ տանիքներէ: Փոքրիկ աղոց համար իմ մանկութեան օրերուս կային ջուր սրսկոց խաղալիքներ, որոնք թորքերէն բառով Արլը կը կոչուէին: Մեծ հաճոյք էր մեզ համար այդ խաղալիքներով իրարու վրայ ջուր սրսկել: Վարդապետին ամէն ուր կը ջանար հազնիլ հին հարուստներ: Վա՞յ անոր, որ նոր հազած էր:

Վ Ե Ր Ա Փ Ո Ն Ո Ի Մ

Այս սօնը տեղական բարբառով կը կոչուէր Ասուածած: Այսօր է որ կ'որհնուի խաղաղը, որ ամէն հայ գրիտոսնեայի համար պահք կը համարուէր մինչեւ այդ օրը:

«Վո՞վ է տեսնիք քի Ասուածածէն է՞նէջ մարդ հաւոց տանի իր բերանը, մեղք է»:

Ընդունուած բանածեն էր այս եւ քիչեր կը համարձակէին անոր հակառակ երթալ: Այս օրը մասնաւորապէս ուխտադնացութեան օրն է զէպի Շոխայի (Շողակաթ Ս. Աստուածածին) վանքը, որ կը պահուէր քաղաքէն արեւմուտք, Սեւոս լեռան քղանցքին:

Խ Ա Չ Վ Ե Ր Ա Յ

Այս տանք կապուած է այդիներու կուսիին եւ բանջարանոցներու (բոստաններու) քաղին: Գիւղերէն իշարեաներոյ կամ սայլերոյ քաղաք կը կրեն վերջին թերթերը — խաղաղ, սանձ, խնձոր, րնկոյց, ձմերուկ, սեխ, պղպեղ, լոլիկ, բալուկ, սակաղին, չաղգամ, բոզի եւ յն: Տանտիկիները կը գնեն այս թերթերը՝ պատրաստելու համար իրենց ձմրան պաշարը շարացի եւ զանազան խուրչիններու:

Աչուն է, պայծաս ու մեղմ արեւոյ: Ձմրան նշանները հետքահետէ կ'երևին լեռնազագաթներուն վրայ եւ գիւղերները:

Քաղաքին մէջ Սաշի Կիրակիի երեկոյին, տեղւոյն Ս. Նշան եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենայ սրտան յատուկ անդաստանը եւ ծագիկներոյ ու ուհանոյ գարգարուած խաչը հանդիսաւոր թափօրոյ կը պարտադրի եկեղեցւոյ բակին մէջ՝ խուն բոցմութեան մը ներկայութեան:

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐ ԵՒ ՍՈՎՈՐՈՅԹՆԵՐ
ԿԱՄԱԽԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ

Կ Ա Ղ Ա Ն Գ

Կաղանդը կամ Նոր Տարին մեծ շարժում եւ խանդավառութիւն առաջացնող սան մըն էր մեր շրջանին մէջ: Տուն տեղ կը մաքրուէին, վրայ դուռնի կը նորոգուէին: Մրդեղէններ մառաններէն դուրս կը բերուէին եւ շաքարեղէն ու այլ ուտելիքներ քաղաքէն դիզ կը կրուէին:

Մտեցող Մնունդի տանին ակնդէտ, տէն ոք կը ջանար մաքուր ու հաշտ սրտով ընդունել Նոր Տարին եւ արժանանալ սնոր յաջորդող Մնունդի Ս. Հաղորդութեան: Ասոր համար քէն ու ցառ ունեցողները կը հաշտուէին եւ սէրն ու խաղաղութիւնը կ'իջնէր սրտերէն ներս ու կը փայլէր զէմքերուն վրայ: Յոյսի, ակնկալութեան, արախութեան եւ սիրոյ զգացումներով լի խանդավառութիւնը կը համակէր մողովուրդը, որքան կը մտանար Կաղանդի օրը:

Կաղանդի նախորդ երեկոյին, աղջիկ ու տղայ գուլպաներ առած տանիք կը բարձրանային եւ զանոնք կը կախէին լուսամտաներէ վար: Տանտիկիների պարսպանութիւնն էր լեցնել այդ գուլպաները եւ զոհացնել զանոնք կախողները: Տանիք բարձրացած խումբ խումբ տղայ եւ աղջիկներու երգախառն խօսքերը, խնկն ու խնձրկը կը լեցընէր միմնորտը: Այդ երեկոյ պատկել տառջ հարս ու աղջիկ, անգամ մանուկ ու պատանի հինա կը գնէին իրենց ձեռքերուն: Կէս գիշերին հարս ու աղջիկ կ'արթնան իրենց խոր քուններէն եւ զեղեցկօրէն զլեռաստարուած կը փութան նախապէս սրտչուած սուրը կամ ախոռը, հոն երգ ու պարով գիծատրելու համար Կաղանդը: Այդ պարերը կը վերջանային երբ կը հնչէր եկեղեցւոյ զանգակը:

Եկեղեցւոյ զանգի զօգանջին հետ տան երէց տիկիներ ու բիշ պարտականութիւն մըն ալ սնին: Ան իր բրդէ խառուտիկ զողնոցը կը լեցնէ միբրոյով եւ պաքսիմաթով^(*) ու կը փութայ աղբուր: Հոն

(*) Ինչ որ երգիկայի շրջանին մէջ ծանօթ էր կուտու անուամբ, կոմտիի շրջանին մէջ կը կոչուէր պաքսիմաթ, Չարս մատնիկով խմորեղէն մըն է, սրուն վրայ կանփահատով խառն մուլդ կը բռնի եփելէ առաջ:

են նաև իր նման ուրիշ կիներ: Աղբրբր սուս ջուրով ան կը լուսյ իր երեսը, պուս մը կը իմէ, յետոյ բերած միրզերով ու հացահատակներով կը կազանդէ աղբրբր, բամբին հանելով նաև ստատուան անկէ ջուր խմելու եկող թուշուններուն, կը թըջէ հետը բերած պաքսիմաթը ու կը վերադառնայ տուն: Նախ կը մտնէ արտու, ուր բերած պաքսիմաթի շերտերով կը կազանդէ նաև արտուի կենդանիները, յետոյ իր պարտականութիւնը կատարողի պահանջներով կը շտապէ եկեղեցի:

Եկեղեցիէն յետոյ ամէն ոք տուն կը փութայ: Նախ կարգով կ'երթան շնորհատրելու ասն աէրն ու տիկինը, համբուրելով սոնոց մեռելքը եւ ստանալով անոնց օրհնութիւնները: Փոխադարձ շնորհատրութիւններէն ետք կը գրտի Կաղանդի սեղանը, որ լեցուած կ'ըլլայ օրտան յատուկ կերակուրներով եւ մրդեղէններով, սրտոնք բաշտն ալ պահուց են, քանի որ Նոր Տարին կուգայ Մնունդի պահճի շրջանին: Անոնքին վրայ են պաքսիմաթը, Նոր Տարուայ յատուկ նիսանաքը, որ Նոր Տարի անունով ծանօթ է, լուրիան, բակլան, աւալաք, մանդակը, թաթիկ բողկը, խոս բողկը, աեսակ աեսակ մրդեղէններ, ծիրանք, թուփի շորք, սանձի ու խնձորի զախերը, խոս շամիչն ու լէպլէպուն, աղիաէ շաքարներն զօնդոցն, պատուական թուփէ օղին եւ այլ ազանդերներ: Նոր Տարուայ նիսանաք կը բամբուէր ճաշի վերջաւորութեան: Նիսանաքին մէջ պահուած արծաթէ գրամին տերացողը կ'ըլլար արտուան յախտուոր անձը:

Փոխադարձ շնորհատրութիւններ կը շարունակուէին ամբողջ ուր, փոխադարձ այցելութիւններով, խրախճանքներով եւ մաղթանքներով: Մանուկներու համար երջանիկ օր էր Կաղանդը, քանի որ անոնք կը ստանային նուէրներ եւ իրենց տողակները լեցուցած պանազան մրդեղէններով եւ շաքարեղէններով՝ քանի մը օրերու վաշխըր ապահոված կ'ըլլային իրենց համար:

Նոր Տարուան երկրորդ օրը կը բաժանուէրն ու կը բաժանուէրն մտածուար նուէրներով կ'այցելէին իրենց սաներուն եւ կ'ընդունէին փոխադարձ շնորհատրական այցելութիւններ անոնց կողմէ:

Կաղանդի գիշերը տան մայրը ուսէր ձի բրած կը շրջէր տան անկիւնները ու կ'ըսէր. «Տայիկս, բախտիկս, ուր ես, ուր շնս, գասս սս գիշիւր իս գտնաս»: Նոյն գիշերը եթէ երազին մէջ երիտասարդ մը տեսնէր, կը հուսատար թէ երկար պիտի ապրէր, իսկ եթէ ծեր տեսնէր, կործ պիտի ապրէր:

Կամախի շրջանին մէջ ալ կար այն հուսատայէքը թէ կէս պիշերին, երբ հին ու նոր տարին իրար կը խառնուէին, ապրիւնները սակի կը հասէին:

Ե Ն Ո Ւ Ն Դ

Մնունդը զուտ կրօնական տան էր եւ կամախի շրջանին մէջ ան տարբերութիւն մը չունէր երզնկայի եւ այլ գաւառներու մէջ կատարուածէն:

Խիթան երեկոյին պահքը կը լուծուէր միայն մկնեղէնով, հուկիթով ու կաթնեղէնով: Մննդեան յատուկ կերակուրներ էին համով հոտով հարխան ու խաչը, զէթմէլն ու քաթան, փիւրափն ու տապկոցները, արկի պանիրն ու դասբաման, սենն ու մանր եւ մածուր, դաշն ու կաթնապօքը, խառէլիֆն ու բախիւղան, հրուշակն ու խալիճը, պիշին ու ձուածեղը: Տնական օրերու խրախճանքները կազմուրիշ վաշխներ էին զիւղի շաքարէ ու պարզ կեանքով ապրող մողթուրդին համար: Ատոնք էին որ նոր ուժ եւ աւելն կուտային քնդհանրապէս խեղճ կեանքով, հոպ ու ցաւով հաղիւ իր ապրուստին հասնող հայ գիւղացիին:

ՏԵՐՆՏԱՍ ԿԱՄ ՏԵԱՌՆԸՆԴՈՒՄԸ

Տէրնտալը իր հեթանոսական վերադարձով նայն է միայն գաւառներու մէջ կատարուածին հետ: Հոս ալ խորոյներ կը վրտուին երեկոյին եկեղեցիէն բերուած ամբի բողով եւ մեծ ու փոքր, այլ թէ կին կը պարեն անոնց շուրջ ու կը ցտակեն կրակին վրայէն: Խորոյներու շուրջ կարծող եւ անոնց վրայէն ցտակող պատանիներու եւ երիտասարդներու սովորական յանկերդն է. «Տէրնտաս, տէրտէր, Մարքամ իմի տաս»: Այս խօսքին մէջ յիշուած անունը ամէն ոք կը փոխէր համաձայն իր սիրածին:

ԲԱՐԵԿԵՆՎԱՆ — ԶԱՏԻԿ

Կամախցին Բարեկեցումը կը կուէ ուրախութեան ուս կրտաւորաթը: Ուրիշ վաշխերու նման վարդանանց Հինդարթիէն սկսեալ

Բարեկենդան է: Նախ կրօնական և աշխարհիկ հանդիսութեամբ կը տօնուի Աւարայրի հերոսներու յիշատակը: Անկէ յետոյ մինչև Կիրակի զիշեր կերտութեամբ և ուրախութեան ժամանակ է, զուռույ գունախոյ, երգ ու պարով:

Բարեկենդանն ստալ կուզայ Ս. Սարգիսի անունով ծանօթ Աւարայրացի Պահօր, որուն յանդերձ Շարաթ օրը տանն է Ս. Սարգիսի: Այս շարաթապահօրը նուիրական էր մասնաւորապէս շահաւաս ազջիլիներու համար: Անոնք մասնաւոր ուխտով պահօր և ծով կը պահէին և Շարաթ օրն ալ այցի կ'երթային Ս. Սարգիսի մատուցին: Այս առթիւ իրենց ձեռքերով հիւսուած արտաշէի դասիներ կը տանէին որպէս նուէր սուրբ գործարքին, ու նաև զարի՛ անոր արագագոյց նժուրին որպէսզի սուրբը կատարէ իրենց ուխտը և հասցնէ զիրենք իրենց մուրազին:

Մեծ Պահօր իր ծանր շուքով կը մտնէր տուններն ներս, ուրիշ ճենճին հօտը արդէն հեռացած կ'ըլլար մեր մօքքասէր մայրերու և քոյրերու ժրգնան ձեռքերով: Ազգաշխարսիկան և ազօթքի շարաթներ էին սասնք Զատիկէն ստալ: Պայծառ գոյններով հագուստները տեղի կուտային մտիթ ու սեւ գոյն հանդերձանքին և խառտուակ յաշակները՝ սեւ կապճաներուն: Ամէն տուն պահօրի նշաններ կ'ունենար: Ամանք ստիկ մը գունդին վրայ եօթը փետուրներ կը միտէին, որպէս նշան Մեծ Պահօրի եօթը շարաթներուն ու կը կախէին գանձնք տանիքի յուսամուտէն կամ պատէն: ուրիշներ ալ ամբարի տարտակներ վրայ կը գծէին եօթը գունդեր, որոնց մօտ կը կանդնեցնէին պահապան դիմուորի մը նկարը:

Մարտ մասան մուտքին տանտիկինը ձեռքի աւելը հօտ ու հուն թուփ տալով կ'ընէր. «Մարտը մնա, զէրար զուս»:

Մազկապարդին նոր հարս ու փեսաները կկեղեցի կը տանէին և անոնց ձեռքը ուրիշ զուար ճիւղեր տալով կը կեցնէին: Անոնց ազգական ու բարեկամները մէյլիկ մեղրամոծ ստած կը բերէին և անոնց բանձն ճիւղերու ոտակուն կը փակցնէին, աղպէս յուսուգարգելով անոնց ճիւղերը: Հարսերը կկեղեցիէն ուղղակի իրենց մարանց տունները կ'երթային, ուր կ'անցընէին Զատիկը:

Մազկապարդին Զատիկ, Աւայ Շարաթը, հոգեւոր արթնութեան և ուրախութեան շրջան է ամէն տեղի նման: Զատիկը կը տօնուի շատ մեծ ցնծութեամբ ամբողջ երեք օր: Գառնոց արանշիլի քնութեան հետ Քրիստոսի շարութեանն ալ կը փառարանուի կկեղեցական հոգեկապարտ հանդիսութեամբ: Նոր հագուստ, կերտութեամբ,

չորհուրտութիւններ, հակթախաղ, անօրհնէք, սասնք ամէնքն ալ Զատիկ յարակից մասերն են, որոնց վրայ ծանրանալ աւելորդ կը համարենք, քանի որ ալ ժողովն արդէն խօսուած է:

Զատիկ Երկուշաբթին Մեակոյց է: Ամէն ոք կը շտապէ զերեկմանն, օրհնել տալու իր մեռելները: Քերպմաններու շուրջ տեղի կ'ունենան ճաշկերպիթ, հակթախաղ: Այսպէսով մեռնող սիրելիներն ալ մասնակից կը զատան օրուան հոգեւոր և մարմնաւոր խրախուսանքին:

Նոր Կիրակիին Վանատուր կոչուած ուխտակցին կ'երթային մեծ բազմութեամբ: Ըստ հաւանոց սովորութեան՝ տեղի կ'ունենային մատուղներ, հաւարական ճաշերով, երգ ու պարով:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՄ ՎԻՃԱԿ

Համարձման նոխար Շարաթ օրը հարս ու ազջիլի հանդերք կ'իլլին կամ պարակցները ոտքի տակ կ'առնեն եօթ տեսակ ծաղկի հաւաքելու և եօթ աղբիւրներէ ջուր առնելու համար: Կոզմոներու մէջ ինձամով հաւաքուած ծաղկեղները, ասհանի և այլ հոտուէտ բուսերու հետ, կկեղեցի կը տանին և օրհնել կուտան քահանային: Յետոյ ալ ծաղկեղները եօթն աղբիւրներէ հաւաքուած ջուրին մէջ զետեղելով զիշերը դուրսը գաղտնապէս կը պահեն, տաղեւու խորհուրդին տակ:

Մաս մը ազջիլիներ, որպէս խոմբի մը ներկայացուցիչներ, կը շրջին տունէ տուն, և կը հաւաքեն իւր, պլլուր, հակիթ և հայ:

Կիրակի տառաօտուն պարմանահիններ խոմբերով զիւղէն զուրս կուզան, և ուրախ կանչելով, ճիլլուն պոսթկուսմանքով կը քայլեն զկպի կանխորոշ զաւառայալը մը կամ պարտեղ մը: Երկու քաղերով օճախ մը կը շինեն, տեղւոյն վրայ ձուռուած վոխով և զանգով կ'առկ կը վտան և կը սկսին կերակուորի պատրաստութեան: Երբ կերակուրները պատրաստ կ'ըլլան, բոլորակ կապճան սեղան կը նստին մի քանի խոմբերով և կուտ ու կուտ կը ճաշեն, սեղանին մասնակից ընելով նաև իրենց ընկերացող փաքրիկները:

Կերտութի աւարտին զեղնական խաղերու կը սկսին, պար կը քաշեն և ամէնէն վերջն ալ վճիկ խաղ ու ձանդախութեանք բռնկով վիճակ կը քաշեն: Ուրիշ զատաններու մէջ կ'առ սովորութեանց համաձայն՝ փաքրիկ ազջիլայ մը ձեռքով վճիկ ամանէն զուրս կը հան-

ին ցանապաններու կողմէ կարող զօրութիւն ծաղկայից ջուրին մէջ ձողում ասարկաները: Ամէն ասարկայի հանում ատեն մէկը դիմակախողի մէկ տուն կ'արտասանէ կամ կ'երգէ: Այդ տուն գուշակութեան համաձայն ասարկային տէր կ'արտասանայ կամ կը տօբի: Այսպէս բախտաւորները կ'արտօրանան ևս ոմանք այ կը տրամին:

Երեկոյեան մայրամուտին ազջիկներու այս խումբերը կը վերադառնան զիւզ: Գիւղին մօտ բարձր զիւրբերու վրայ խմբուած, անոնք կը սկսին երգել իրենց զիւրջին երգերը, զիւղին լսիկ ձայնով:

Որքան հանելի էր անանկ այդ ձաշիւ-ճիւսն ազջիկներուն ուղևորութիւնը: Պննուած խառտուակի հանդերձանքով, նման թևեր ստան հրեշտակներու, անոնք մեծ ոպևորութիւն կը ստեղծէին իրենց շուրջը: Արտ ու արօտ, պարտէզ ու հանդ թոյր ու բոյս կը բուսանային այս քաղցրիկ հօգիներու ներկայութեամբ:

Աստ՛ղ, ամայացան այդ հարգալու ու հրապուրելի հօգերը: Գուցէ անգամ մըն ալ շշտութիւն հայ ազջիկներու քաղցր ու սիրալիկ երգերն ու տաղերը այդ պատմական վայրերուն մէջ...:

Համբարձման կամ Վիճակի երգերը կ'ըլլային իմ' հայերէն և իմ' թուրքերէն: Մե՛ղք որ անոնցմէ տուն մըն անգամ չեմ յիշեր:

Վ Ա Ր Գ Ա Վ Ա Թ

Դարանագեաց դաւառին մէջ երկու ժողովրդական ուխտատեղիներ կային: Ասոնցմէ մին Մարեկ և միւսն ալ Հորսփիլ զիւղին մօտ: Մարեկինը կը կոչուէր Սուրբ Արծաթ, իսկ Հորսփիլինը՝ Յրեմոսի վանք: Երկուքն ալ բարձր զիւրջով և տառաջուր: Երկուքն ալ տակաւ կէն:

Կամախի գրեթէ բոլոր զիւղերէն ուխտաւորներ կուգային այդ օր այս վանքերէն մին: Արզէն կանուխէն ամէն բնտանիք որ պիտի երթար, իր մտապոզուն պատրաստ կ'ընէր. դառ մը, ուլ մը, խոյ մը կամ դուստակ մը: Իսկ շքուորն ալ կ'ունենար իր հուն ու աքաղաղը: Այս ուխտաւայրերը և անոնց շրջապատը այդ օր կը լեցուէին ուխտաւորներու մեծ քաղմութեամբ: Այդ օր այդ փրատակ սրբավայրերը կենտր կը ստանային: Ժամ, պատարաղ բոս կարգին, խոշ ու խոշվառով, խունկ ու մոմով: Միամիտ ու հաւատաւոր հայ զիւղացիին իր հօգիին ամբողջ հօրն ու հաւատքը կը բանար հայրենի երկրի այդ սրբօրան նշխարներուն առջև: Ժամ-պատարաղէն ետք օճակ-

ներու վրայ եռացող կաթսաներուն մէջ արշէն պատրաստ կ'ըլլար մատաղը: Սեղանները կը պատրաստուէին, մատաղին հետ պղզուր փիլաֆը և այլ ուտելիքներ կը շարուէին, իրենց մօտ պատրաստ ունենալով թուփի պատուական օգին կամ խաղողի կարմիր գինին: Ահա՛ անք բաց էր ամէնուն առջև, քանի որ մատաղ էր: Կ'ըլլային բարեմաղթութիւններ իւրաքանչիւրին, բնտանիքին, զիւղին, աղջին ու եկեղեցիին համար: Ծաշերէն ետք կը սկսէր ուրախութիւնը մարդոց, երիտասարդներու և ձերերու հաւատարաղէս, երգով ու պարով, զաւուրով և գունալով: Տեղի կ'ունենար զինտխաղութիւն, հայրենասիրական այգառ պրոթիվածներ այս հեռուօր վայրերուն մէջ, ուր շէն հասնէր բնակալին ակնարկն ու մեռքը:

Հուսկ յետոյ, կըր հաւաքած են սեղանները, երկն ու պարք վերջացած, կը սկսի ընթացուածքի խաղը: Սու՛մբ խումբ ակնու և ստուններու մօտենալով կը սկսին իրարու վրայ ջուր սրտիկ: Ոմանք ալ լեցուն ամաններ մեղքերին զերար կը հայտնէ: Երբ օրը արշէն իր վախճանին կը մօտենայ՝ խաղալութիւնը կ'ընէ նորալուրերուն շուրջ և ամէն ոք կը պատրաստուի իր զիւրջին հրամեշար սուլ նախնիքներէն ժառանգ թողուած նուիրական նշխարներուն:

ԱՍՏՈՒԱԽՆՆԵՑ ՏՕՆԸ

Այս ամօր ժողովուրդը կը ճանչնայ Աստուած սցուած մեռով: Աւելորդ կը համարենք ծանրանալ անոր հեթանոսական-ամանորէն-նաւասարդեան ծագումին վրայ: Այս մասին յո՛ճան անդրադարձում չէ:

Այս օրուան կուպում չէ յոխարներու յուսուածք զեւերու և լիններու մէջ, արտ ու արօտի վրայ կատարուած խրախճանքները սրպէս հունձրի և քաղի վերջարան:

Աստուածամայն ամօրին յառուկ է պարտէզներու մօտերը դրանրոց մասուաներու սյցիլութիւնը՝ բնտանեկան սահմանափակ կերուստով:

Կարնշէնի(*) կոչուած սրբատեղիները այս ամօրին կը յուս-

(*) Կարնշէնք ուխտաւայրերը շատ կիճեմ մնացած տնեւան վայրի կիմ, ուր շէնէրու մնացորդներ շկային, այլ ճանի մը բարեք, բայց ուխտատեղի շատ էին: Թերեւս կերպանական մնացակ:

գարգուին նորածին մայրերու ժառանգ մտերնոյ։ մայրեր, որանք նեղութիւն ունին ստիւնքի եւ այլ մայրական չիւանդութեանց։ Յշի կիներն ալ ուխտի կ'երթան նոյն սրբախոյրներուն, որ աստա կամ ունենան եւ մնան գերմ շար աչքէ ու փորձանքէ։

Այսոքա Աստուածածնի նուիրում կանգնել կամ աւերակ ուխտակցիներ կ'ունենային իրենց ուխտաւորները, յարակից մասաղներով եւ իրախնամներով։

Համապայլին սովորութիւնն էր այս ասին հետ կատարել խաղաղի օրհնութիւնը եկեղեցիներու մէջ հանդիսաւոր պատարագով։ Ասորոց օրհնուելէ ետք մասին հետ կը բաժնուէր ժողովուրդին։ Ամէն ժամուր անկէ կուզ ժր կամ ձուխ ժր կը տանէր տուն ու կը խառնէր սեղանին վրայ դուռն խաղաղի կոտին, այդ կերպով օրհնութեամբ համարելով ամբողջ խաղաղի բերքը, որ խորհրդանշանն է հողի միւս բերքերուն։ Մինչեւ Աստուած խաղաղը պահ էր հաստարուէր։ Ամէն օր օրհնութեամբ խաղաղով կը յաճէր իր պահքը։

Գարանապետը դուռնու հարուստ էր պատմական յուշարձաններով։ Ըլլալով աստուկապէս ասաններ է պիտի կազմուած իրարման մը, գրեթէ հարապատ կերպով պահած էր սպային հին սովորութիւնները, աստուկութիւնները, բանահիւսութիւնը — երգեր, հէրեաթիւն, աստուկապէս եւն։ Գործախորհրդը եկեղեցւոյ պատարին հետ Գարանապետն ալ գրեթէ անուսուած է մեր բանասերներին, հնարաչներին եւ այցելուներին։ Այսօր այլեւս ալ ուշ է եւ յոյս ալ չունինք թէ հայուն ստոր անգամ մըն ալ պիտի կոխէ այդ նուիրական հողերուն վրայ։ Մե՛ղք, հարցր անգամ մեղք, որ մեր հայրենակ այս երկու նուիրական վայրերը այսպէս անուսուած պիտի մոռացութեան արուին իրենց յուշարձաններով եւ աստուկութիւններով։ Ինչ որ գրի ասնութեամբ պատմութիւն է չի մոռցուր, կը հասարակ ու հասարակ մը կամ հասարակ մէջ կ'ամփոփուի, ինչպէս ըրած է Յ. Քիւրտան։ Ինչ որ կը վերաբերի ժողովուրդի կրօնականին, քնկերային կազմին, տեղահանութեան սարսափներուն, գրի աստուած է երգիկայի համար Գ. Սիրաբէնեան, իր երգերով հասարակ մէջ, եւ ասորոց գրողը՝ իր կարողութեան շարժով՝ ՏԱՐԱՐԻՒՄ ԵՒ ՃԱՄԻՒՄ ԲԱՆ հասարակին մէջ՝ Գամախի համար։ Ծնորհակալը ըլլալով մեր հայրենակից Գուրգէն Տէր Վարդանեանին, որ այս հասարակ ջանասիրիկ ինչ որ կարելի էր երգիկա-կամախ պատարարներուն եւ սովորութիւններուն։

Գրիկոս Պապական

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՑՔՆԵՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՔԱՂԱՓԻՆ ՄԵՋ

Երգիկա քաղաքը երթակայ ըլլալով պուրական աղբեղութեան, սկսած էր հետզհետէ կորսնցնել հնաւանդ սովորութիւնները։ Բայց, սակայն իմ ասեմն ալ սովորութիւնները մեծ մասամբ կը պահուէին։ Առաջին փոփոխութիւնն այն էր որ աղբը եւ աղջիկները դիւրաբ տեսնելու եւ իրարու հանելու պատահութիւններ կ'ունենային, այնպէս որ ասանց նախապէս իրարու հանձնած ըլլալու ամուսնութիւն գոյութիւնն չունէր։

Երբ աղայ մը կը հանէր աղջկան մը եւ փոխադարձ համարութիւն մը կը ստեղծուէր, այն ասեմն իր ամուսնանալու բաղձանքը կը յայտնէր իր ծնողաց։ Երբ հայրն ու մայրը հարկ եղած քննութեանցիկ ետք համաձայնէին իր ընտանութեան, այն ասեմն տեղի կ'ունենար աղջիկտեղ կամ ուղիւն արարութիւններ։ Տղան ծնողքը, կնոջ հայրն ու կնքամայրը եւ մասաւոր հարապատները պաշտօնապէս կ'երթային աղջկան ծնողաց տունը՝ աղջիկ ուղիւն համար։ Անշուշտ մէկ անգամէն համաձայնութիւն չէր գոյանար։ Թէ իսկ աղջկան ծրուարը ներքնապէս համաձայն ըլլային, արտաքինապէս պատարհանուցութիւն զոյց կուտային, իրենց դուռնու սուղ ծախիսու հնաւանդ սովորութիւն յարգած ըլլալու համար։ Փամանակ կ'ուզէին որ խորհին եւ մասաւոր հարապատներու համաձայնութիւնն ալ տանէ։ Կերպապէս կըր համաձայնութիւնը գոյանար, տեղի կ'ունենար խօսակցար՝ նուէրներու փոխանակութեամբ եւ հիւրասիրութեամբ աղջկան ծնողաց կողմէ։ Այս խօսակցապէս կարճ ժամանակ ետք տեղի կ'ունենար նշանաւոր, որ կը կատարուէր երկու կողմի ինամիներու, կնքահայրերու եւ անանց մասաւոր աղապատներու ներկայութեան, կըր քահանան կ'օրհնէր նշանի մասանին, վզնոցը կամ աղապատները եւ փեսայուն կը յանձնէր դստնէր իր նշանածին։ Յետոյ կ'ըլլային բարեմաղթութիւններ եւ հիւրասիրութիւն։ Նշանաւորները կըրեմն կ'ըլլային իրական խնջոյքներ, նայած ծնողաց նիւթական կարողութեան։

Նշանաւորն էր փեսայուն իրաւունք ունէր մերթ ընդ մերթ այցելելու իր նշանածին։ կը յիւժ, կըր Փեկրոնէ հօրաբարս նշանաւոր, իր նշանածը կուզար մեր տունը անոր այցելութեան։ Գի-

տէինք թէ ամէն գալուն կը բերէր իր նշանածին համեց շարքերգէններ եւ խորթոյժմ կազին: Իր մեկնելէն անմիջապէս ետք կը վազէինք հորաբընձ սօս՝ ստանալու համար իր նուերներէն մեր բաժինը: Այր բերու՝ իրենց նշանածները միասին դուրս տանելու սովորութիւնը սակաւին ընդունուած չէր: Կը յիշեմ սակայն, Պոլսէն վերադարձող երիտասարդ մը իր նշանածը հետն աւած կը պարտէր քաղաքին մէջ, պատճառ գտանալով հիներու գայթակհութեան եւ նորերու այ հետարբերութեան:

Հարսանիքը կը սկսէր Եարաթ օրուրնէ: Այդ օր հարսն ու փեսան իրենց կնքամայրերուն եւ կնքահայրերուն կողմէ մասնաւոր հանդիսաւորութեամբ բաղնիք կը աւարտէին: Կար նաև հարսին ձեռներուն հինա դնելու սովորութիւնը: Կիրակի ցերեկ տեղի կ'ուսանալու հայուներու փոխանակութիւնը: Յուրիշ էր փեսայի հայուի որհնութիւնը: Կ'երգուէր «Սորհուրդ Սարիմ»-ը, որու ընթացքին փեսային հայրը, մայրը, եղբայրներն ու քոյրը կարգաւ կը հաղցնէին անոր բաժնիքը, կը կախէին ժամացոյցը, դիւին կը գնէին Փէսը, կը կտային գոտին եւն, միշտ որհնութիւնով, մաղթանքով եւ համբուրով:

Հարսնուոր տեղի կ'ունենար երեկոյցին ընդհանրապէս: Փեսան իր հետեւորդներով, բացալատ ջահերով, յազաններով ու մոմերով կ'առաջնորդուէր հարսին տունը: Ըստ հին սովորութեան հարսին տան գլուխ փակ կը մնար եւ շէր բացուէր մինչեւ որ փեսային ընկերացոյց ազատները նուէր մը, որ ընդհանրապէս խնջոյք մը կ'ըլլար, շխտատանային: Երբ գլուխ բացուէր, փեսան իր հետեւորդներով ներս կը մտնէր: Հարսը կը համբուրէր իր հօրն ու մօր ձեռքերը լացով ու հեկեկանքով եւ կը թողար մօրենական տունը՝ երթալ միտնալու համար իր ազազայ կեանքի ընկերին: Փեսային կողմի հառուներսին, բոս հնաւանդ սովորութեան, կը բռնէին յայտնուած հարսնամայրը եւ կը նստեցնէին տան թոնիրին վրայ, թերեւս անոր յանձնելով տան օճախի պահպանութեան հօլը: Երգերով (կրօնական թէ աշխարհիկ) թափօրը կը հասնէր եկեղեցի, ուր կը կատարուէր պատիի խորհուրդը: Արարդութեան աւարտէն ետք հարսնեւորներու բացմութիւնը ծափ ու ծնծղայով, ուրախ երգերով կը վերադառնար փեսային տունը: Ծամբան երկու կողմի ազգայնաներ, ի պատեն նորագասակներու, իրենց դուռներուն առջև խոնջա կը հանէին, աքինքն կը գնէին խիշքներով, պատուներով, աղանդներով լի եւ մամերով գորգարուած սեղաններ: Հարսնեւորներէն փոփաքողներ

կը կենային, գաւաթ մը երկու օգի կամ գինի կը կոնձէին, ազանգեր մը կ'առնէին եւ բարեմաղթութիւն մ'ընելով կը հետանային:

Հասնելով փեսայի հօրենական տան դրան առջև, թափօրը կանց կ'առնէր: Ի վիճակի եղզոյնն ասն շնմի վրայ մտնելով լուսազարդուած խոյ մը կը գորհէին հարսին ու փեսին ստորերուն առջև, որդէպի անոնց մուտքը ուղարկիլ, աշխինքն բարեբաւտիկ ըլլար: Յետոյ փեսային հայրն ու մայրը իրենց թեւերով կամար մը կը կազմէին գրան ներքի կողմը, որուն առկէն կ'անցնէին հարսն ու փեսան:

Ստանուութեան միջոցին հարսին երեսը գոցուած կ'ըլլար քոյով մը: Իրկցնո ընտղող հայրենակիցս Մանուկ Սեւանեան կը գրէ. «Հին օրերուն քողին թանձրութիւնը յստ բաւականին թանձր էր: Մեր օրերուն բարակ քող (թիւլ) մը կը դորձածէին եւ պատկի արարդութիւնէն ետք կը բանային»: Տուն մտնելէ յետոյ հարսնաբոլբերը կը շրջապատէին հարսը եւ կ'առաջնորդէին զայն իրեն յատկացուած սենեակը կամ տան որդ մէկ մասը: Իսկ փեսան այ իր ընկերներով կ'երթնար իր պատուոյ տեղը: Արդէն սեղանները պատրաստ կ'ըլլային եւ հարսնեւորները ուրախ արամաղութեամբ կը բոլորակէին սեղաններու շուրջ՝ վաշխելու օրուն խորախկները, էրկնայ կարմիր գինին, թուրի օգին, միշտ ընկերացած բարեմաղթութիւններով. «Ալէքերնիդ լուս, առմերնիդ շէն, մէկ բարձի ծիրանն, ցառ ու տէրո շի տեսնա՛մ, հօրեմակալմ օճախը վատ պահեմ» եւն: Ընդհանրապէս այր եւ կին առանձին սեղաններու շուրջ կը բոլորուէին, կամ ալբերէն յետոյ կ'ընէր կը նստէին անոնց սեղաններուն շուրջ: Այս ալ կ'ընէին ո՛չ թէ սեւերու անհասարակութեան գողտցորով, այլ անէլի գործնական նկատումներով: Ծաշխ աւարտումէն ետք նուագածուները կ'անցնէին իրենց դորձին գլուխը եւ հարսնեւորները շրջան կազմած կը դարձնէին շուրջպարը եւ մերթ այ կը կատարէին մենագրով: Անկուսկած առաջին պարողները կ'ըլլային հարսն ու փեսան:

Քաղաքին մէջ հարսնիքներու ստեղ գաւառ-գուռնա չէին դորձաներ: Կային մի քանի նուագախումբեր, թուրքերէն իննէ սագ տնունով, բաղկացած հետեւեալ նուագարաններէն. զուր-ալ-էւէւէնէ, ուս, սաթ-ուր եւ դոմբ, որ է դափ: Այս նուագարանները գործածող խումբերը ամբողջն այլ հայեր էին, որոնք կը նուագէին թէ՛ հայկական եւ թէ՛ թրքական խնջոյքներու միջոցին: Այս պատճառով այ իրենց նուագած եղանակները, բացի մէկ երկուքէն, բոլորն այլ թուրքերէն էին: Այս էր պատճառը նաև, որ Երզնկայի հայութիւնը հա-

յերկնով ուրախութեան երգեր գրեթէ չունէր: Գիւղերու մէջ սահայն, կացութիւնը տարբեր էր: Հոն ի սրտուի էին դաւուշն ու զուռնան եւ անոնց հետ ալ շատ մը հայերէն երգեր, զորս, զմբախտարար, հուտարող մը չէզու: Երբ կը խօսեմ հայերէն երգերու մասին, միշտ ի մտի ունիմ սեղակաւմ-մոզովիլղակամ բանասիրութեան նմաշնէրը, եւ ոչ թէ այն ազգային-յեզպիտական երգերը, որոնք մուտք գտած էին դուրսէն եւ ոչ մէկ կայ ունէին երգնկայի բարբառին հետ:

Ընդհանրապէս ազգային սովորոյթ էր, որ նոր հարսերը իրենց կեարարներուն, կեսուրներուն, ասպրերուն եւ սան տարեց անդամներուն հետ երկար ստեն շէին խօսեր: Երգնկայի մէջ ասոր կ'ըսէին Խարնուարիւմ անել: Այս մասին հայրենակիցս Մ. Սեւանեան կը գրէ ինձ. «Հարսնութիւն ընելու պարագան կախում ունէր ազուն ծնողքէն: Իմ հայրս եւ մայրս մէկ շարքովն թոյլ տուին, որ իրենց հետ խօսի կրնա: Սակայն մեծ մայրս, Երգնկայի յայտնի Զերեթ մասուն, հակառակ էր, վստայի ամուկ է: Կ'ըսէր»: Ասիկ յայտնի է թէ քաղաքին մէջ հարսնութիւն ընելու սովորոյթն ալ սկսած էր տեղի առաքեմտաբէն եկող հոյին առջեւ:

Հարսանիքի յաջորդ երկուշարթի օրը հարսին մարանց ընտկարանէն ննկը (օժիտ) կը գրկուէր փեսային տունը: Գեղեցիկ փայտէ կամ մետաղէ սնտուկի մը մէջ դնակուած հարսանեկան օժիտը բնանակրի մը շալակը կը դրուէր եւ հարսին մօտաւոր հարապտեղան (մայր, քոյր, կնքամայր) ընկերակցութեամբ կը տարէր փեսային տունը: Այնտեղ խնամներու (ընդհանրապէս իրական սեռ) ներկայութեան կը բացուէր սնտուկը եւ մէկիկ մէկիկ կը ցուցադրուէին օժիտին տարկանները: Ճճեղին մաս կը կարգէին տարիներու ընթացքին հարսին կողմէ պարագասուած ձեռագործներ, անձեռացներ, հարստակցիներ, եւ ծնողաց ու ազգականներու կողմէ նուիրուած զարդեղէններ, հանդերձանք, սնային տարկաններ եւն: Ամէն տուն իր կարողութեան շախոյ կը ջանար պատասով ներկայացնել իր աղջիկը, լաւագոյն օժիտը պատրաստելով անոր համար:

Հարսանիքի օրուան, այսինքն կիրակիի ուրախութեանց փոխանին, կնքահայրը իր քնակարանը կ'առաջնորդէր փեսան, որ հոն պէտք էր մտար երեք օր, մինչեւ Զորեքշարթի երեկոյ, երբ, զարժեալ կնքահայր ընկերակցութեամբ փեսան կը վերադառնար իր հօր տունը, առապաստ մանելու համար: Այս սովորոյթն ալ, ինչպէս կը

հաստատ է Սեւանեան, խոսութեամբ չէր պահուեր: Անոնք միայն մէկ օրով ալ կը գոհանային:

Ինչպէս ակնարկած ենք այլուր, ամուսնութեան յաջորդող Զատիկին հարսը, մասնաւոր պատուիրակութեան մը ուղեկցութեամբ, Մայիկապարդին կը փերսդատնար իր մարտնչքը, հոն անցնելու համար Զատիկը: Այս առթիւ փեսան ալ կ'այցելէր իր աներանց տունը, շնորհատրելու համար տոնը: Այս այցելութեան միջոցին զարանք իր փեսային գրգանք կը գնէր մետաքսէ թաշկինակ մը, կտուե կտթայի մը հետ:

ՀԱՐՍԱՆԻՔԸ ԳԻՒՂԵՐՈՒ ՄԷՅ

Որքան հետանանք քաղաքէն, այնքան աւելի հին, նահապետական սովորոյթները պահուած կը գտնենք գիւղերուն մէջ: Այս նրբարարականը, որ պիտի տանք յաջորդող տղերքով, իր ընդհանուր գեծերուն մէջ նոյնն է ոչ միայն երգնկայի զաւտի հետախոյ գիւղերուն, այլ նաեւ Գերջանի գուտարի գիւղերուն համար ալ: Զի այս նրբարարականը եկեղեցաց գուտարի արեւելեան ծայրը, Գերջանի սահմանամերձ Ռնձարեկ գիւղինն է: Այստեղ անցուցած եմ մանկութեան երկու տարիները եւ անիկ հետանալ ետքն ալ ապակցական կապերով միշտ մօտ եղած ենք անոր:

Գիւղերու մէջ, ինչպէս քաղաքում, ամուսնութիւնը կախում ունի ծնողաց հաւանութեանն: Քաղաքին մէջ ծնողաց հեղինակութիւնը, ինչպէս ակնարկ, այնքան խիտ, բնական չէր, որքան էր գիւղերուն մէջ: Մտնէ թէ աղջիկ ազատ չեն իրենց ընտրութեանը մէջ: Մտնողաց, մտնանաց հօր կամքը տիրական է: Անշուշտ գիւղերու մէջ ալ դերուր տեսնելու, իրարու հաւանելու պատեհութիւններ պակաս չեն: Երբ ազգայ մը կը հաւան աղջկայ մը, իր ամենամօտեկ մէկ ընկերոջ կը յայտնէ իր միտքը: Աս ալ իր կարգին կ'իմացնէ իրուցութիւնը աղուն քրոջ կամ օրքը եւ ստանց միջոցով ալ հայրը տեղեակ կ'ըլլայ կացութեան: Եթէ ընտանեկան վէճ կամ հակառակութիւն գոյութիւն չունի աղուն եւ աղջկան ընտանիքներուն միջեւ, այն ստեն զլիտուր մէկ արգելք կը վերնայ: Իսկ եթէ գոյութիւն ունի այդ հակառակութիւնը, այն ստեն հայրը բացելիքաց կը մերժէ աղուն փախաբը: Այս սեռակ պարագայի մը, եթէ աղան յանդուզն է եւ վճարական եւ ունի նուիրուած ընկերներ, որոչ ծրարել մը ետք,

իր ընկերներու օգնութեամբ կը փութցնէ իր սիրածը, նախ անշուշտ ասնելով անոր ալ հասանութիւնը: Այսպէս փախցուած ազջիւր կը տանին մտասկայ դիւղ մը, ուր տեղի կ'ունենայ ամուսնութիւնը, կատարուած իրողութեան մ'առջեւ զննելով տղուն ծնողքը, որոնք կ'առնախ ինչ ոչ տեղի պիտի տան կացութեան առջեւ:

Եթէ որեւէ հակառակութիւն չկայ երկու ընտանիքներու միջեւ, բուն մը որ սովորականն է, աղուն հայրը իր հետ ասնելով դիւղին երեւելիներէն մէկ քանին՝ կ'երթնայ ազջկան ծնողաց կամ խնամակալին տունը, ուր երկար բարակ, աստակալից խօսքերով կը յայտնեն իրենց միտքը: Անշուշտ առաջին զիմուսին հասանութիւն չ'ըստացուիր: Հնարանց սովորութիւն է, որ ծնողք մը իր զուտարք պէտք է սուշ ծանէ: Ասոր համար զանազան պատրաստելներ կը ստեղծուին: Նախ կ'ընեն թէ ազջիւր պարիկ է, մասնակ տուէր: Երկրորդ զիմուսին հետաւոր հարապաններու՝ եղբոր կամ քրոջ կամքը պէտք է ասնուի, եւն: Վերջապէս երրորդ զիմուսին երբ ազջկան ծնողքը հասանութիւն կը յայտնեն, աղուն հայրը եւ իր ընկերակիցները որպէս խօսքեպայ ձերբակ լաշակ մը եւ մասունք մը կուտան, եւ պտուղած հիւրասիրութեան կտք կը մեկնին:

Արշուած օր մը տղուն բոլոր սղպականները, ընկերակցութեամբ կնքահօր եւ կնքածօր, կ'երթան հարսնցուին տունը պաշտօնական նշանաւորի: Ասոնցմէ իւրաքանչիւրը տասնմին նուէր մը կը տանի հարսնցուին: Նուիրատուութեան այս արարողութիւնը կը կուշի կարգը երես համեղ կամ կարմնուես: Վասնզի մինչեւ այս պահը հարսնցուն միշտ կը խուսափի տղուն սղպականներէն: Հարսնատեսի այս արարողութեան ընթացքին հարսնցուն կը ներկայանայ իր սպազայ տունունչն հարապաններուն օգոսածամուկ երեսով ու կը համբուրէ անոնց ձեռքերը եւ յարգալից կը կենայ մէկ կողմ՝ մինչեւ որ աւարտի նուիրատուութեան այլ արարողութիւնը: Աղկէ կտք ան կը հետանայ իր առաջնորդին ընկերակցութեամբ: Ասորքան հիւրասիրութեան կտք կը սկսի բուն նուիրատուութեան սակարկութիւնը երկու խնամիներու միջեւ: Այս ընծայարկերու մի սովորոյթը ծանօթ է արարելէն խալէք կամ խալաք բառով: Տեղի կ'ունենայ իրական սակարկութիւն մը եւ ի վերջոյ կը համաձայնին ընծաներու որոշ քանակի մը վրայ: Օրինակի համար, տղուն ծնողքը յանձն կ'առնեն տարւ հետեւեալ նուէրները. ձի մը ազջկան հօր, Սարգիսով սահաթ մը աղբորը, լաշուի շալ մը օրքը, ջուխտ մը զուսնուտա հօրքորդը, ջուխտ մը օղ մեծ քրոջը, ջուխտ մը պիւլգիկ պղտիկ օր-

քոջը, սովկ մը պղտիկ աղբորը, թօփ մը մանուսա քեռուն, թէպակ՝ մը պապուն, Քէս մը քեռուն աղուն եւն: Ասոնցմէ զոս հարսին համար ալ յանձն կ'առնեն առլ երկու դաթ խոս լաթ, ջուխտ մը ոսկի օղ, ջուխտ մը ոսկի պիւլգիկ, քեմեր մը, արծաթէ թփփէլիկ մը, Քիւմանի շալ մը եւն: Ստաթիկ հարքը կարգադրելէ կտք կ'որոշուի հարսանիքի օրը:

Հարսանիքի համար պէտք է կոտմ պատրաստութիւնները կը տեսնուին: Հարսանեց նախորդ Աւրրաթ օրը կնքածայրը կուզայ հրաւիրելու իր սանը: Նախ՝ իր ձեռքով կը մաղէ հարսանեաց զաթային ախրը, յետոյ կարմիր շարք կը կապէ իր սանին վիզը եւ կ'առաջնորդէ զինք կնքահօր տունը: Կնքահայրն իր կարգին նոյն երեկոյին իր սանը կը հրաւիրէ զիւզին ազապ (ամուսին) ազաքը, որ բնիկն իր սանը կը հրաւիրէ զիւզին ազապ (ամուսին) ազաքը, որ բնիկն կնքահայրն ալ իր սանը կը տանի իր սանը եւ անոր ընկերակցելու կը հրաւիրէ զիւզին ազապ ազջիկները: Այսպէս հարսանիքի առաջին խրախճանքները տեղի կ'ունենան կնքահայրերու տուները մինչեւ Եարաթ լոյս: Եարաթ կէսօրին փեսան աղապներու և առաջնորդութեամբ եւ ազապ պաշի ընկերակցութեամբ կ'ամուսնուի եւ լոզանք կ'առնէ: Եարաթ զիշեր փեսայ եւ հարս իրենց կնքահայրերու տուներուն մէջ կը հինաւորին:

Կիրակի առտու ամէնքն ալ պատրաստ են մեծ արարողութեան համար: Հարսնիքը կը սկսի փեսային տան մէջ: Դաւույ զրուանան զոնէ զուս կը շըջի եւ կանց ասնելով ամէն հրաւիրելուի դրան առջեւ իր հրաւերի եղանակը կը հնչեցնէ եւ ամէն տան կը բաժնէ մեկըրամ մը, որ հրաւերատուի տեղ պիտի բռնէ: Գիւզերու մէջ, ուր ընտելութիւնը հաղի հարիւր տուն է, ամբողջ զիւզը գրեթէ հրաւեր կը ստանայ, սասնց սղկի խարսթեան: Խնձորկի ընտելութիւնը, շուրջ 150 տուն, բազկացած էր հայերէ եւ քիւրտերէ:

Հարսնուորները նախ կ'առաջնորդուին հարսին տունը, ուր կ'ընեն իրենց կէսօրուն հաշը: Ասկէ անոնք կ'երթան փեսային տունը: Իրիկուան մօտ կնքահայրն ու աղապները փեսան կը տանին իր հօր տունը: Իսկ հարսին կնքածայրն ալ ազապ ազջիկներու ընկերակցութեամբ կ'առաջնորդէ հարսը իր հօր տունը: Եւ տեղի կ'ունենայ հայաւներու օրհնութիւնը: Յուզիչ է մասնաւորապէս փեսային հալաւօրհնէքը: Փեսան կը կենայ հպամ լալիսը ու վերնաշաղիկը: Մնացեալ հաղուսանները փակէի մը մէջ՝ դրուած են սեղանի մը վրայ: Քահանան հանդուարապէս ոտքի կը կանգնի սուրջառով եւ

կ'օրօնէ հարաւ: Դերկայ են ըստը հարապանները, փեսային ծընողքէն սկսած: Խոր լուսիկան մէջ տիրացուն կը ձգէ իր թրթուռն ձայնը՝ երգելով ծանր ձայնաւոր ձայնով: Դա ինչ կը ժողովնայ փեսային հայրը, կը համբուրէ քահանային աջը, յետոյ արտասուալից աշքերով (սուրբութեան արցունքներ) կը ծոսենայ ու կը համբուրէ իր փեսացու դուստրին ճակատը: Սա ալ կը ծոսի եւ իրենց հարաւ կը համբուրէ իր հօր ձեռքը: Յետոյ հայրը կը հազցնէ անոր լոճիկները, որուն զրգանքը կը դեռնուի ժամացոյցը: Դոյն ձեռով կը ծոսենայ մայրը եւ կը կոճկէ լոճիկներն կոճակները: Քոյրը կը դեռնուի թաշկենակ մը անոր զրգանքը: Ազգայ պաշին կը կապէ կարմիր շարք անոր վրէժն եւ վերջապէս կը քահայրն ալ կը դնէ Փէրքը անոր գլխուն:

Հայուօրհնէքէն ետքը ա'լ պատրաստ են հարսնութի կրթին: Կնքահայրը կը կանգնի փեսային աջ կողմը եւ ազգայ պաշին ձախ կողմը, շրջապատուած ազգայներու խումբով: Դուռնոյ դուռնան տասով կ'անցնի, որուն կը հետեւին փեսան իր շքախումբով եւ հարսնուհիները անոնց հետեւին: Ծամբան փոխն ի փոխ կ'երգուին՝ երգել ու շարքակները: Երբ կը հասնին հարսին տունը, զուար զոց կը գանձեն: Ընդունուած սոփորոյթ է սա: Մինչեւ որ նուէր մը շխտացուի (սոփորաբար խնձոր մը), զուար չի բացուիր: Այս խոստումէն ետք զուար կը բացուի: Հարսը իր ծնողքին հրամեւտի ողջոյնը կուտայ: Կը համբուրէ հօր եւ մօր ձեռքերը եւ կը խնդրէ մօրմէն, որ հալալ ընէ իր տունը կաթը: Մայրը արտասուալից աշքերով կ'ողջապարէ իր դուստրը եւ անոր կը շտայի մայրական սրտէն ըխած ամէն բարեմաղթութիւն: Ասկէ ետք, հարսը շրջապատուած կնքամայրով եւ հարսնուհիներով, սրտց կը հետեւին իր հարապանները, կը հարսնի անն զուար ուր կը սպասէ փեսան իր շքախումբով: Այստեղ կը կապուի հարսանեկան թափօրը: Առաջին կ'երթան դուռն ու դուռնան, աստոց հետեւին կուգայ փեսան իր կնքահայրով եւ ազգայ պաշիով, որուն ամեթնապէս կը հետեւի հարսը իր շքախումբով: Աստոց հետեւն կը քայլեն հարսնուհիները:

Եկեղեցւոյ մէջ պատկի կատարուէն ետք հարսանեկան թափօրը կը կապուի, առջեւն ունենալով դուռնն ու դուռնան, որու կը հետեւին հարսն ու փեսան կողք կողքի, աջ ու ձախ ունենալով կնքահայրն ու կնքամայրը, ազգայ պաշին եւ ազգայները, հարսնուհիներն ու ազգայ աղջիկները: Աւելորդ է լսել թէ հարսը քողարկուած է ծանր քօղով մը, հակառակ քաղաքի սոփորութեան, ուր քօղը բարակ ու

թափանցիկ է: Փէսայի ծնողայ անն առջեւ թափօրը կանց կ'աննէ պահ մը: Դրան շեմին արարածուած է մտապղտու խոյրը, որու վրէժն վրայ կ'ախելով նախ ներս կը մտնէ հարսը եւ ապա նոյն ձեռով փեսան: Հարսը կը արտուի իրեն համար պատրաստուած անկիւնը, որ անն մնացեալ մասէն լամպուած կ'ըլլայ վարպուլայով մը: Այդ վարպուլային հոխն կը հասարտին հարսին ընկերուհիները եւ կը ջանան միտարարի գինը: Իսկ անդին անն մէջ հարսանեկան սեղանը արդէն պատրաստ է: Փէսան կը նստի պատուի տեղը, քովն ունենալով կնքահայրն ու ազգայ պաշին: Ազգայները կ'առաջարկեն փեսային, որ սկսի ճաշը, բայց ազգայ պաշին կը պատասխանէ. «Մեր փեսային ստակները զոց ին, շին բացուիր»: Իոյսրը լուս հարսին եղբոր կը նստին: Սա ալ իր կարգին կը պատասխանէ. «Յն փեսային ստակները կը բանամ», ու նուէր մը կը խոստանայ կրտսերայիններուն: Ետէրը մէջտեղ կը բերուի եւ ճաշը կը սկսի: Ծաշէն ետք ազգայները կնքահօր առաջնորդութեամբ կը ներկայանան հարսնուհիներուն եւ կ'առաջարկեն պարէլ: Դուռնոյ դուռնան կ'ողջուրէ հանդիսականները: Կը սկսի դիւղական մեծ պար մը: Պարէն յետոյ կնքահայրը կարգաւ կը շարէ փեսան եւ ազգայները եւ կը սպասէ որ հարսին կին ազգականները գան եւ շէէրեն փեսան: Հարսին մայրը, քոյրերն ու այլ ազգականուհիները կարգաւ կուգան ու փեսային եւ ազգայներուն շարքը կը հրամայեն: Ասկէ ետք կնքահայրը իր խումբով կը մեկնի, հետն աննելով նաև փեսան:

Երկուշաբթի ըստը ազգայները մէյմէկ հաւ կը տանին կնքահօր տունը եւ վրդերը կարելով կ'արձակեն: Ատր կ'ըսեն ԽԱՐԱՅԱՄ: Այս հաւերով ճաշ կը պատրաստուի եւ մեծ խնջոյք մը կը սարքուի: Չորեքշաբթի, փեսային ծնողքը նուէրներով լի տփակ մը կը զրկեն կնքահօր՝ խնդրելով, որ արձակի իր անը: Կնքահօր ուղեկցութեամբ փեսան կ'առաջնորդուի տուն եւ ազգայէնով վերջ կը գանէ հարսանեկը:

Հարսանիքէն յետոյ կայ խնամտեքի մեծ խնջոյք, որով իր-նամիները կը պատուեն փոխազարմարը:

ԹՐՔԵՐԷՆ ԲԱՌԵՐ

Խալար-խալեր - ծաղուժով արարերէն, հաւանարար փոխա-
 սուժին թուրքերէնէ: Հարսին եւ անոր պարագաներուն՝ փեսայի
 ընտանիքին կողմէ արուած ընծայ կամ նուէր: Սահար - ժամացոյց:
 Ղնխուուա - հաստատուն ներբանով եւ կրունկով կիսակոշիկ՝
 թէ՛ այրերու եւ թէ՛ կիներու: Պիլեզիկ - ապարանջան: Ռուվիլ - ա-
 արքճանակ: Աղաւաղուժ Ֆրանսերէն Revolver բառին: Քէմէր - կա-
 մար, դօտի կանանց: Թէփէլիկ - արծաթով շինուած զլեանոց
 կանանց, զօրծածական մասնաւորապէս Դերջանի զիւղերում:



ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
 ԿԱՄԱՅԻ ԾՐՋԱՆԻՆ ԱԷՁ

Մեր շրջանի մոզոմուրը շատ կարեւորութիւն կուտար խնա-
 միութեան կապին: Երկու զերգաստաններ Էրր ուզէին սերտացնել
 բարեկամական կապը, յաւարտն միջոցը կը նկատէին խնամխոթի-
 նը՝ իբարու դասակ տալ անելով: Յաճախ այդ կապը կը սկսէր օ-
 բորոցէն: Այս սովորութիւնը որ բուսական ընդհանրացած էր, ծա-
 նօթ էր թուրքերէն պէշիկի քէրքմէ անունով, որ կը նշանակէ օրօ-
 յոցը խազել, այսինքն սուր մետաղով մը կամ դանակով մը օբորոցին
 վրայ խոպեր քաշել փոխադարձաբար, որպէս նշան խօսքկապի:

Օբորոցի նշումէն դատ կար նաև պատանութեան խօսքկապի
 սովորութիւնը, որ բազմաամամբ անկասկած աւելի լաւ էր: Ըլլայ
 պատանութեան, ըլլայ նաև շափահասութեան ընթացքին կտտար-
 ւած խօսքկապի եւ ամուսնութեանց մէջ ամուսնացողներու կամքը չէր
 հարցուեր: Ամէն ինչ տեղի կ'ունենար ծնողաց կամ երէցնիրու հա-
 ճութեամբ եւ հաւանութեամբ: Շատ քիչ ամուսնութիւններ կային,
 որ մանչ աւ աղջկայ հաւանութեամբ կտտարուած ըլլային:

Նշանաւոր էր կու զերգաստաններու անմիջական պարագա-
 ներու ներկայութեամբ չէր որ կը կտտարուէր: Նշանաւոր էր համար
 յարմար էր որ յարգի եւ խօսքը անցուի մէկը խտանուէր աղուն ներ-
 կայացուցիչներուն մէջ եւ անոր բերնով ներկայացուէր խնդրանքը:
 Մի քանի հոգի չիւ մը օգի իրենց հետ սուսմ կ'երթային աղջկան ծը-
 նողքին տունը եւ հոն, յարմար պահու մը, մէջտեղ գնելով շիշը՝ կը
 յայտնէին իրենց այցելութեան նպատակը: Աղջկան աչքը եթէ լիցու-
 րեան ունէր, ինք կը պատասխանէր կզամ խնդրանքին: Հսկասակ
 պարագային կը հրախիբէր արժանաւոր մօտակայ բարեկամ մը կամ
 դրացի մը՝ պատշաճ պատասխան մը տալու համար:

Միշէւ մեր օրերը, աղջիկներ նիւթական մեծ գիներով կը
 հարմացուէին, նայած անոնց շնորհներուն, գեղեցկութեան եւ ի-
 բրենց պատկանած ընտանեաց արժանիքին եւ կարողութեան: Այս սո-
 վորութիւնը ծանօթ էր թուրքերէն պաշլըք անունով, որ կը նշանակէ
 տեսակ մը զլխահարկ: Տղուն կողմը իր կարողութեան շափով կը վը-
 ճարէր հինգէն մինչև քսան օսկի եւ աւելի: Ատր փոխարէն այ

աղջկան տունէն համապատասխան օժիտ կը գրկուէր փետուն տունը: Այս օժիտը ծածօթ էր միևեդ անունով:

Եթէ աղջկան աչքը ընդունէր խնամախօսին ներկայացուցած աղուն եւ գերգաստանին յարձարութիւնը, խօսքիայրը կը վերջանար մէկ այցելութեամբ եւ օգիին շէրը կը պարպուէր նոյն իրիկուան մէջ իսկ: Իսկ եթէ թեկնածուն անընդունելի մէկն էր, շատ վարպետ առացուածքներով ճամբու կը գնէին խնամախօսները, տանոց օգիին շէրը քանալու եւ ոչ ալ մէկուն սիրտը կտարելու:

Խնամախօսութեան դացոց անձերը շատ պատկերասր տաշչւածքներ կը լսէին եւ շատ ալ բանավեւաւած հակաճատութեանց միջամուխ կ'ըլլային: Կատարուած խօսքիայր անմիջապէս գիւղին սեփականութիւնը կը դասնար եւ երկու բնասնէքները կ'ըլլային հոշակուած խնամիներ:

Առաջնապէն ետք պաշտօնական նշանաւոր տեղի կ'ունենար Քեճ հանդիսութեամբ, կերութեամբով եւ նշանի որհնէրով՝ քանանային կողմէ: Ասով՝ խօսքիայրով սկսուած խնամութիւնը կ'ըլլար պաշտօնական: Փիւղացուն աչքը կը դասնար նշանուած գոյգերուն եւ տխրմանները կը սրուէին մտալուստ հարսանիքին սկիզբէս:

Հարսանիքի մը առաջին նշանը աղուն տան պատարասութիւններն են, որոնք շատ կանուխէն կը սկսին եւ հետզհետէ կը հասնին այն շարքուն, երբ տեղի պիտի ունենայ հարսանիքը: Հինդշաբթի օր աղուն տան կողմէ պսիտ եւ գէտմէր կը բանուի զիւզի եւրաքանչիւր տան: Ասիկա հարսանիքի հրաւիրողներն է: Մի քանի աղջիկներ, ծրարներ ձեռքերնին, տունէ տուն կ'ալցնէին եւ մէկ կամ երկու պսիտ առջով հարսանիքի կը հրաւիրեն ցանոնք: Փոխան այս հրաւիրին՝ ամէն տուն, համաձայն իր կարողութեան եւ բարեկամական կողմից, հարսանիքի մէջ գործածուելիք կերակուրներու յարձար ծրար մը կը գրկէ հարսնասիրով: Կը գրկուին, օրնակ, ստն, զանախններ, իւզ, գտանուկ, մը, աղանդերներ, օգի, գինի եւիւն: Դրամական նուէրներ տուպներ ալ կ'ըլլան:

Ուրբաթ օր գաւույն ու զուռնան մէջտեղ կուգան ե թուրքերու հացը կը տրուի, եթէ զիւզը թրքախօսն է: Հալը թուրքին ե թուրքը հայուն հարսանիքի ճաշ առջի հինն մնացած սովորութիւն մըն էր, որ անշեղ կը կատարուէր մինչեւ տեղահանութիւն: Դիւղին մէջ գանձուած յալու թուրք բնասնէքները ճաշի հրաւերուած կ'ըլլային եւ իրենց ճաշը կը տրուէր Ուրբաթի կէս օրուն անտաղէն անմիջապէս յետոյ:

Այդ օրը թուրքին ըլլալով՝ անոնց էր պատահութիւնը խաղալու եւ զուարճանալու: Հալը հանդիսատեսն էր ընդհանրապէս, բայց երբեմն ալ կը մտանակցէր սեբախութեանց եւ խաղերուն:

Ետրաթ օրը գաւույն ու զուռնան միշտ փետացուին տան շարքն ըլլալով, տեսակ մը նախաստանի կը կատարուի յաջորդ օրուան հանդիսութեանց: Հարս ու աղջիկ շին փախցնէր այս պատահութիւնը եւ ուրախ պարերով ու երգերով կ'անցընէին իրենց մամանակը:

Ետրաթի գիշերն արդէն զիւզը սեբախութեան մէջ է: Տղուն տունը կը դասնայ ստից կոխան: Գիշերն ամբողջ գրուուած կը մնայ այս ու այն անձին կամ խոսքերուն պարերովը: Այս հարսանիկան սեբախութեանց պահերը լուսալոյսն պատահութիւններն են, որ ամէն սք, մասնաւորաբար երկու սեւէ երիտասարդներ, հրապարակ ցան եւ ցոյց տան իրենց մարմնական եւ մտաւոր շնորհները: Եւ այս պահերուն էր որ զարձակ շատ մը երիտասարդներ իրենց սրտի ալքերուն մէջ կը ծրարէին սիրած աղջկն այ մը կամ աղու մը պատկերը, անով հիւսելու համար սիրոյ սքանչելի վէպ մը: Հարսնետունը թոնրատուն էր, որ միշտ խնդրուած կ'ըլլար ել ու մտա ընոց բարձրութեամբ, վասնզի հարսանիքը գիւղին էր որ էր պատահանէր եւ ոչ բլէ լսի բնասնէքի մը:

Աղջկան տունը իր պատարասութեան, աղունն ալ՝ իր ընկիւրներուն մէջ կ'ըլլար Ետրաթ օր:

Հարսնիքին մամուկացոյ աղջիկներ, օրպէս կանխապատարասութիւն, նախապէս հին կը գնէին իրենց ձեռքերուն:

Ուրբաթ օր փետան կնքա՛օր տանը կ'երթնար, ուր քանի մը երիտասարդներու ներկայութեան կը ստիպուէր, կը լոյնար եւ երեւոյնն ալ կը հինալուէր:

Աղջկան հինալուէր տեղի կ'ունենայ իր մօր տան մէջ, ուր հաւաքուած կ'ըլլային չափահաս աղջիկ ու նոր հարսեր, գիշեր տանն մամանուր արարողութեամբ մը: Աղջկան կնքամայրը չոր հինան զարգարուած սեղանի մը վրայ գնէլով մէջտեղ կը բերէ: Այդ սեղանը, որ տանկերէն թառով սիւնի կը կաշուի, լուսապարզուած կ'ըլլայ մամերով: Խուճր մը աղջիկներ այդ լուսապարզ սինին իրենց մօտ առանձն կար կը քաշեն: Պարագլուխ եղօղ հարսը կամ աղջիկը հինան իր գլխուն վրայ բոնած կ'առաջնորդէ խուճրը նախ սանաձինն երկույով պարը: Իրեն կը հետեւի խուճրը, երկնէլով իր քանկերն ու եղանակը: Հինալի յատուկ երգեր ու առացուածքներ կան, որ շատ յու-

զիչ են ու մայր լացնող: Աղջկան մաքրութիւնն ու հիմնաւոր կրնար տեղի ունենալ նաև կնքածօր տունը:

Սոսորութիւն է որ Եարաթ օր փեսան, ընկերակցութեամբ նուազի և իր ընկերներուն, այցելութիւններ կուտար իր մօտիկ ազգականներուն և բարեկամներուն, առաջ բերելով մեծ ոգևորութիւն իր ճամբուն վրայ և արժանանալով մասնաւոր և սրտազին հիւրասիրութեան: Այս այցելութեան ընթացքին կը հանուին խորովածներով և համադամներով լի սեղաններ, զորս մաս մը ճաշակելէ ետք մնացածն ալ մի քանի երիտասարդներ իրենց գլուխներուն վրայ առած կը վերադառնան հարսնատիրոջ տունը: Փեսային այս այցելութիւնները սեռակ մը պատեհութիւն էին, որ հիւրասիրող ազգականներն ու բարեկամները ցոյց տային իրենց սրտակցութեան շտափ՝ հիւրասիրութեան աստիճանով: Եւ այս պարագան միշտ նըկատի կ'առնուէր փեսային և իր բնասնիքին կողմէ:

Կ'րտակի օր կը կատարուէր հալաւի օրհնութիւնը:

Եկեղեցիէն ետք զիւզին ժողովուրդը հրուիրուած կ'ըլլար համայնական մեծ ճաշին:

Եթէ եղանակը ձմեռ էր, ճաշը կը արուէր մեծ տունի մը թանրատան և անոր յարակից մասերուն մէջ: Իսկ եթէ ամառ էր, կախ մը կամ տանիքի մը վրայ կը դրուէին սեղանները: Սեղանները ցած ու կլոր էին, որոնց շուրջ կը նստէին հարսնուորները, թիւով հինգէն տասը:

Հարսանեկան ճաշը ունի իր մասնաւոր կերակուրները, որոնցմով կը կարճուի ճաշացուցակը: Ասոնցմէ առաջինն է կրիչով ապուրը, զոր զգույններով կը ճաշակեն մեծ անորժակով: Ապուրը սեղանին վրայ կը դրուէր խոշոր ևս խոր սեւաւառակով կամ սկուռալի մը մէջ: Ապուրին կը յաջորդէր շողջամէ կահնին կամ ուրիշ մսով կանաչիզկն մը, որ նոյնպէս մէկ ամանի մէջ կուզար սեղանի վրայ, ենթաբարկուելու համար ճաշողներու մեծածաշուփն՝ այս անգամ սակայն, զգալի փոխան մասներու մէջ ճարտարօրէն բաժնուած յաւաշ հադի միջոցով: Թոնիքի յաւաշ հացը զկզ զկզ դրուած կ'ըլլար սեղանի եզերքներուն՝ մասնաւոր ճաշուածքով մը: Իւրաքանչիւր ոք անով էր, որ իր պատանները պիտի չինէ ջրոյի կահնին ուտելու համար: Ատր կը յաջորդէր պատուական և աչք կշտացնող փիլաւը, որ խոշոր ափսի մը վրայ բրգամեւ զիջուած կը դրուէր սեղանին վրայ: Հարսանիքի փիլաւը մասնաւոր կիներ կը պատրաստուէին մօի ջրով և մ. վրան ալ ստատ կարող իւզ լեցուած կ'ըլլար: Փիլաւին կ'ընկերանար զո-

վացուցիչ մը, որ կ'ըլլար ծիրանի խաշապը և կամ պատուական թանձր թանձր, որ լեցուած խոշոր գուշկուր մէջ՝ կը դրուէր սեղանին շորս կողմերուն վրայ: Ամէնուրեք վերջ էր բերուէին ոչխարի խորոված կամ խաշած միսը, տիկի պանիր և այլ տեսակի ազցաններ:

Երբ ճաշը կ'աւարտի ու սեղանները կը վերանն, ուրիշ սեղան մը կը զետեղուի ուղիղ քահանային առջևը: Այդ սեղանին վրայ կը դրուէր մեծ ծրար մը: Այս ծրարը, որուն յառած կ'ըլլան բոլոր հանդիսականներուն տշխբը, փեսուն հաղուստներն են թագաւորական: Վառած մոմեր կը արուին քահանային շուրջ նստող մեծաւորներուն, ինչպէս նաև փեսային անմիջական պարագաններուն ձեռքեր: Խունկին անուշաւառ բուրձունքը կը տարածուի սան մէջ, և աճա հանդիս կուզայ կնքահայր՝ փեսան իր ետեւէն: Ասոնք տեղ կը բռնեն սեղանին մէկ կողմը, ճիշդ դիմացը քահանային: Ձերք ու զբաւէր միջուրտի մը մէջ, երբ երաժիշտը կը սկսի երգել ձեռնորդ Խորինք երկար ու հանդիսաւոր եղանակով մը, կնքահայրը կը սկսի հանուելոցին վիսամ, մէկիկ մէկիկ անոր վրայէն հանելով բաճկոնը, տարատը և իշխիլը: Երբ կարգը կուզայ հաղուսեցնելու, կնքահայրը առաջին հաղուստը կ'երկարէ քահանային որ օրհնէ: Ասիկ ետք, երբ փեսան կը պատրաստուի հազիւլ առաջին պղեստը, հանդիսականները մեծ ոգևորութեամբ կը պտտան ճեմորհաւոր ըլլայ, շնորհաւոր ըլլայ: Այսպէս յաջորդաբար իւրաքանչիւր հաղուստ կ'օրհնուի և փեսան կը հազիւ պաննք, միշտ շնորհաւորական աղաղակներուն հետ: Երբ կարգը գլխարկին (Փէս) կուզայ, կնքահայրը քահանային թեկադրութեամբ կանգ կ'առնէ: Կը կանուրի տղուն հայրը, էթէ ներկայ է, կամ մայրը՝ էթէ ան կը փոխանորդէ իր ամուսինը: Հարսնուորներու պահանջքով փեսային հայրը արժէքատր նուէր մը կը խոստանայ գլխարկը դնելու համար իր գուսակի գլխուն: Եթէ խոստացուած նուէրը զոհացուցիչ համարուի, կ'արտօնուի որ զնէ իր տղուն գլխուն թագաւորական թաղը խորհրդանշող Փէսը: Անկի ետք ծրարին թով դրուած պատեանով թուրը կը յանձնուի կնքահօր, որ այդ սուրով կը գտանայ իր սանին անբաժան պահակը մինչև առագաստի զիշկերը: Հօր քաջակալութեան՝ մօր կողմէ նշանակուած փոխանորդ մը կամ փեսային մերձաւոր մէկ ազգականը կը կատարէ այս պարտականութիւնը:

Փեսան որքան ալ աղքատ ըլլար, պէտք էր ունենար թագաւորի վայել հաղուստ: Այս պարագային փեսայութեան հաղուստը փոխ կ'առնուէր և փեսան կը հազիւր գալն առանց վարանուծի: Հա-

լաւօրհնէքը եւ անոր յարակից արարողութիւնները մեր շրջանին մէջ շատ հանդիսարարութեամբ կը կատարուէին եւ հարսանեկան բոլոր ստորաբնեաց մէջ ամենէն տպաւորելի են: Հայտարարներէն ետք փեսան իր արքայական հաղուստով եւ ընկերացած իր թրակիր կրթաճայրին՝ կը համբարէր ձեռքերը շահանալէն սկսած իր հօր, մօր, ասն երկց անդամներուն եւ ազգականներուն ու բարեկամներուն, ասնկալով անոնց սրտարար օրհնութիւններն ու մաղթանքները: Ասելէ յետոյ թաղաւոր եւ կնքահայր կը դասնան անբաժան ընկերներ: Միտսին կը շրջին դիւղին մէջ, արժանի ամենքին յարգանքին ու հիացումին: Կուսան աչքելութիւններ ազգականներու եւ բարեկաններու: Կնքահայրն ունի իր թուրք՝ միշտ կոխ իր մէջքէն: Տունէ մը ներս մտած պահուն կնքահայրը իր սուրբ պատենանէ հասնած, սեմին վերեւ կը բարձրացնէ հորեղանական ձեւով եւ թաղաւոր աչք սուրին տակէն կ'անցնի ներս: Եթէ բազմութեան մէջէն է որ պիտի անցնին, դարձեալ կնքահայրը իր սուրով ճամբայ կը բանայ իր սանին առջև:

Թուրքերը կը տեսնին այս բաները բայց որեւէ գիտազմբիւն չէին ընէր, անշուտ ընդունելով կնքահօր թուրը որպէս բնական եւ անբաժան մասը հարսանեկան ստորութեանց: Եւսնպէս անոնք որեւէ տակն չեն միջամտած մեր ազգային տոներուն եւ այդ անոնքներով ջուջալցրուած տղատիրական պոթեկամներուն: Անշուտ այս անսակեամբ մեր շրջանի մտադուրդը կընար ինչոյինք անկուսակի բարխանարներէն համարել, քանի որ ներքին գաւառներուն մէջ թուրքն ու փերսը այնքան ալ լայնախոհ եւ բարեկամ չէին:

Նոյն օրուան, աշիներն Կիրակի երեկոյին կը կատարուէր աղջիկն հայտնի օրհնութիւնը: Այդ միջոցին արդէն փեսային կողմէ հարսանեկաններու թափօր մը գացած կ'ըլլար աղջկան սանը: Նոյն երեկոյին հարսին ծնողքը կուտար համայնական ձաշ մը, որուն հրաժարուած կ'ըլլար ամբողջ դիւղը: Ծաւլէն յետոյ տեղի կ'ունենայ հարսին հայտնի օրհնութիւնը: Տեղի կ'ունենան նոյն արարողութիւնները, որոնք կատարուեցան փեսային հարաւօրհնէքին, թէև նուազ խոնդալուստութեամբ եւ խանտ արտութեամբ, քանի որ աղջկան ծրնողքն ու պարագաները արտութեամբ եւ արցունքով կը մասնակցին արարողութեան, իրենց հարսդատեն բաժնուելու սիջալով համակուած:

Հայտնի օրհնութեանէն ետք նուազն ու պարք կը շարունակուին միմչև ուշ գիշեր: Այդ գիշեր տղուն տանը հանդիստ ու խաղաղ է,

հարսանեկան ուրախութեանց եւ խրախմանքի բերք փոխանցած ըլլալով հարսին տան:

Երկուշաբթի օր տեղի կ'ունենայ պատկը:

Հարսանեկանները, իրենց հետ աննկալով փեսան, առաջնորդութեամբ անբաժան դասուլ դասուային, կ'երթան հարսին տունը: Հաս ալ կայ ստորութիւնը տան դուռը փակ պահելու, կամ այլ արգելքներ յարուցանելու: Դուէքներ սասնալու տեղեկութեամբ: Հարսը ասնելէ ետք կ'ուզուին եկեղեցի: Պատկի կատարումէն ետք հարսանեկան թափօրը աշխարհիկ եւ կրօնական երգերով կը վերապատնայ փեսային տունը: Ծամբուն վրայ բարեկամներ եւ ազգականներ ի պատիւ նորագրակ ստեղին սեղաններ կը հանեն: Եթէ պատկը կը կատարուի գիշեր տակն, հարսանեկան թափօրը կը գաննայ խոհական ջահաղնուցութիւն, բազմութի մոտերով եւ բացալատ ջահեղով:

Հարսանեկաններու թափօրը կանց կ'ունէ փեսան տան առջև: Հարսն ու փեսան կնքահօր առաջնորդութեամբ կը մտնեն տան սեմին եւ կը կենան: Նորագրակները սասնց մասապի տան սեմին ներս չեն մտներ: Գրան սեմին վրայ կնքահօր ձեռքով կը մօրթելի դասուակ մը կամ աքաղաղ մը, որուն արինը կը թան փեսային եւ հարսին ստեղան: Յետոյ կնքահայրը իր սուրը հորեղանական կը թան տան գրան վերեւ եւ թոյլ կուտայ որ հարսն ու փեսան ներս մտնեն: Այս միջոցին ամբողջ ներկաները կը պատեն թնորհուստ՝ մասաք, շորհաստ՝ հարս ու փեսայը: Յետոյ կը արտի հարսանեկան մեծ ճակոթայթը, որ երկ ու պարով կը շարունակուի մինչև ուշ գիշեր:

Երեքշաբթի օր մի քանի ազգական եւ բարեկամ տաներէ, բնկերակցութեամբ նուազի եւ ուղեկիցներու, մասնաւորապէս պատրաստուած սեղաններ կը տարուին փեսային տունը: Ասիկա յարգանքի եւ սիրոյ մասնաւոր նշան մըն է, որ անմասնաւոր կը մնայ երկու ընտանիքներու յիշողութեան մէջ:

Երեքշաբթի հարսանեկան վերջին օրն է: Այդ օրուան գերեկը մասնաւորապէս կ'ընէրու համար է, իսկ երեկուն ալ՝ ամբողջ գիւղին, երբ կ'ըլլալու մը, պարն ու գրաւարմութիւնը զազաթնակահան կը հանին: Կէս գիշերին հարսանեկանները ալ իրենց զոհարումն ստացան լիտի, իրենց սրտարար մաղթանքներն ընկելով հարսին եւ փեսան երջանեկութեան համար, կը թողան հարսնուտը:

Չարեքշաբթի կէսօրէն վերջ շահանան կուզայ եւ նորօրս կը

քակ նորաստեղծութիւնը և նոյն զիշերը կ'ըլլայ ստացաւոր զիշեր :

Երկու օրուան հարսանեկան խաղի ու պարի միջոցին հարսը կը մնայ մասնաւոր անկիւն մը քաշուած վարագոյրի մը ետին, իր հարսնորոյրին հետ : Հին կ'առանջ ցերեկուան ճաշը, զիշերն ալ կը պատկի հարսնորոյրին հետ :

Փետան երկու զիշերներուն կնքահոր տունը կը պտակի և ցե-րեկն ալ մինչև կէս զիշեր հարսնետան մէջ կ'անցընէ : Հարսը փախ-ցընելու փորձեր ալ կ'ըլլան, և կի՛նէ յաջողին՝ առանց լաւ նուէր մը ստանալու չեն վերագարձներ : Փետան իր կողմէն խնձոր և ալ մըր-զեղէններ կը նետէ հարսին վարագոյրին կողմը և փոխադարձաբար կը ստանայ նման իրեր հարսին կողմէ :

Եթէ հարսնետը պիտի ըլլայ մերձակայ կամ հեռաւոր տեղ մը, այն առանձն հարսանեկան թափօրը, նուազի ընկերակցութեանը, պիտի մեկնի Ծարաթ օր և հիւր պիտի ըլլայ իր ամբողջ ծանրութեամբ հարսին զիւղին : Այրերը իրենց յաւադոյն զգեստներով և արզուզարզով նստած ձիերու վրայ՝ մաս կը կապեն թափօրին : Հարսին քոյրերը, որ թուրքերէն բտտով ենիլէ կը կոչուին, և թիւով հարիւրներ կրնան կազմել՝ համաձայն զիւղի մեծութեան, նոյնպէս զարդարուն և հարուստ հանդերձանքի մէջ ձի կը հեծնեն, իւրանու-չիւրը այր մարդու մը խնամքին յանձնուած : Համաձայն տեղական սովորութեան, որ անկասկած թրքական ազդեցութեան արդիւնք է, այս կիներն ամէնքն ալ պարուրուած կ'ըլլային ճերմակ սաւանդերու մէջ, նման թրքական փերանէին : Ձիերու վրայ նստող այդ սպիտակ համազգեստաւոր կիները մէկ շարքի վրայ հանդարտ ու խելօրէկ կը հետևէին իրենց առջեւէն զացող այր մարդոց խումբերուն, որոնք ձիարշաւով և ալլ գանազան խաղերով սղեսորութիւնը միշտ վտտ կը պահէին հարսանեկան այս թափօրին : Ծառ անգամ թուրքեր ալ կը մասնակցէին այս թափօրներուն և ձիախաղի մրցումներ տեղի կ'ու-նենային երկու ազգի կարիներուն միջև՝ առաջիններով մեծ խան-դավառութիւն ու մերթ ալ թշնամական զոյացում :

Գիւղն ամբողջ սոքի վրայ է ճամբու զինելու համար հարս-նեկան այս թափօրը :

Ճամբուն վրայ երբ հարսանեկան թափօրը զիւղի մը կը մտնու-նայ, ամբողջ զիւղագլխի սոքի վրայ կ'ըլլան զիմուարելու հարսնե-րորներ, որոնք իրենց հնարքն ու ճարպիկութիւնը ցոյց կուտան զը-ւարձանցնելու համար հանդիսատեսները : Երբ զիւղը թուրք է կամ

սղեսոր՝ թափօրը կը շարունակէ ճամբան առանց ազմուկի : Եւ յոյգէս երբ եկեղեցիի մը կամ մզկիթի մը մտնէն անցնին, ի յարգանս կը լը-սեն նուազ ու ազմուկ :

Երբ թափօրը կը մտնելու հարսին զիւղին՝ երկու մունետիկ-ներ կը գրկուին ծանուցանելու համար թափօրին մտնելու : Ասոր վրայ ամբողջ զիւղը կը փութայ զիբք զրուելու և զէտ կանգնելու եկող հարսանեկան թափօրին :

Առաջին անգամ գաւառ գլուսնային ձայնն է որ կը հասնի, թունդ հանելով արտերը ուրախութեան ախիքներով : Յետոյ երեւան կուգայ երիտասարդ ձիւտորներու խումբը՝ իր գանազան ձիախաղե-րով, որոնք հիացումով կը զիտուին հանդիսատեսներէն : Թափօրը կը յառաջանայ և կը լեցուի զիւղին մէջ : Քիչ առաջուան խաղաղ զիւղը կը գտնայ ցնծութեան և ուրախութեան աման մը : Նախա-պէս եղած կարգապարտութեան համաձայն հիւրերը բաժնուած կ'ըլլան ընտանիքներու վրայ և ամէն մի ընտանիք իր յարկիչի հիւրերուն հետ մասնակից կ'ըլլայ ընդհանուր խրախճանքին :

Նոյն երեկոյին ազգկան տունը փառաւոր ճաշկերութիւնով մը կը պատուէ իր հիւրերը, անոնց հետ ալ ամբողջ զիւղը մասնակից ընե-լով կերուխումին : Հին սովորութիւն է, որ հարսնետրները պիտի ջանան գանազան պզտիկ նեղութիւններ պատճառել հարսնետրոյ, հարսնետունէն զոգնալով զգայներ և ալլ առարկաներ : Հարսնետուն և զիւղ կը ջանան զոհաջնջ հարսնետրները, իրենց կարելի հի-րախորութեամբ և հաճոյալի ժամանցներով : Այդ երեկոյ ազգկան տունը և զիւղը լի կ'ըլլան ուրախութեամբ և ցնծութեամբ : Ասցն ու պարը երկու կազմի հարսնետրներուն միջև տեսակ մը մրցման ցոյն առած կը շարունակուին, մինչև որ կը յոյգնի ամեն մարդ և կը սահի ժամանակը մինչև կէս զիշեր :

Երկուշաբթի առաւօտուն հարսնետրները կը պատրաստուին ճամբայ ելլելու : Կը հաւաքուին հարսին տան ճրակապար : Դաւուն ու գլուսնան իրենց սղեսորէն եղանակներով նրաւէր կը կարգան յո-ւրքին անխտր՝ մէջտեղ դառն և հանդիսատես ըլլալու հարսին մեկնումին :

Հարսին զգեստաւորմը կը կատարուի երկուշաբթի առաւօտ իր մօր ընտկարանին մէջ, հարսնաքոյրերու կողմէ : Այս առթիւ կ'եր-զուին երգեր, կ'ըլլան բարեմաղթութիւններ, որոնք լուրիչ և յա-ցընող են՝ քիչ յետոյ իրենց հարազատէն բաժնուող հարսին մօր, քոյրերուն և հարազատներուն համար : Հարսը հագուեցնել յետոյ

գուրս կը բերեն զայն հարսին եղբայրներն ու հարսնաքույրերը՝ հասն
անոր թեւերը, ու կը սպասեն անոր համար պատրաստուած ձիուն:
Ըստ ընդունուած սովորութեան, հարսին ձին բռնած է անոր եղ-
բայրը, որ կը սպասէ հայտն ու նոյն ասնն ախօր, որ զան փեսային
կողմի մարդիկը եւ զինք հանեցնելով ասնն զայն իր ձեռքն: Փե-
սուն կողմէ պատգամատրութիւն մը կը մտնենայ, եւ իրատ յարգա-
լիք ու փառաբշական խօսքերով անոր սիրտը կ'անեն ու նուէր մը,
որ պոտի մը կամ ալլ արժէքաւոր իրեղէն մը կ'ըլլայ, առյուժ՝ ձեն
կ'անեն անկէ եւ կը բերեն աղջկան ոտքը: Նուազը հարսնաստի եղա-
նակը կը գարնէ, իսկ հարսին եղբայրները, շրջապատուած հարսին
քույրերով, աղջիկը ձիուն վրայ կը հեծցեն եւ ճամբու կը դնեն զայն,
ներկանքու շորհասարական եւ մազթանքի քաջազանչութեանց մէջ:
Նոյն խնդրագոտութեան պատկերները կը ստեղծուին, երբ
հարսնաւորներ կ'երեւին փեսուն զերթն մէջ: Կնքահայրը, թագա-
ւորը եւ անոնց ընկերացոյցները մասնաւոր տեղ մը կ'եղան՝ հարսնա-
ւորներու մասքը կը դիտեն ուրախութեամբ: Զներերը կը գտան,
գտունն ու գունան կը հնչեն: Զիւտներու խօսքը աշխարհ շար-
ժամներով եւ յաղթական հանդիսատարութեամբ կը մտնէ զիւրդ եւ
կ'ուղղուի զէպի եկեղեցի: Ծամբուն վրայ փեսան կը դիմաւորէ
հարսը եւ կը մտնէ շարքին մէջ՝ հարսին անիջապէս առջեւ կեան-
քով: Հարսին եւ փեսին աջիւ արդեւք զնոզներ կը գտնուին: Մէկը
չուան մը կը բռնէ, ուրիշ մը երկար ձողով մը կը փորձէ ճամբան
խափանել: Այսպիսիներուն նուէր մը առյուժ կ'անցնին:

Պատկի արարողութենէն ետք հարսանեկան թափօրը կ'ուղղուի
փեսային ասեւր, որ տեղի կ'ունենան այն հանդիսութիւնները, ու-
րանց մասին անդրադարձած ենք արդէն:

Հարսանիքները քաջաւիկ եւ շատ սիրուած պատահուելիքներն
էին մեր շրջանի մողովարդին համար: Անոնք ուրախութեան ու
հրճանքի սքանչելի պահեր կ'ընծայէին աշխարհ շարքաշ, ձեռնուած
եւ սակաւապէս մեր զիւրպայիթեան: Միտ կողմէն, սակայն, ինչ-
պէս տեսանք, հարսնաւորը այս առթիւ իր ամբողջ նիւթական կարո-
ղութիւնը մերթ ի սղաս կը գնէր իր ազուն հարսանիքին: Սակաւա-
թիւ հարսանեկու համար աղիկա տանելի էր: Բայց շատ ընտա-
նիքներ ծանր զգարքերու տակ կը ծռէին իրենց քանակները, անզամ
մքն ալ շշտուելու զմտախօսութեամբ: Ծատ մեծածախս էին մեր
զիւրպական հարսանիքները, եւ ոչ ոք հաշուով կը շարժէր:

Գրիգոր Պաղտիկեան

ԹՐԲԵՐԷՆ ԲԱՌԵՐ

Պաղլլի կամ պաղլլիկ - կը նշանակէ զիլթակին: Տղուն կողմէ
աղջկան ծնողաց վճարուած զինք: Անկասկած թրքական սովորու-
թիւն մը, որ պարզապէս աղջիկը գնել կը նշանակէ: Այս սովորու-
թիւնը ընդհանրացած էր կամախի, մասամբ Երզնկայի, Դերջանի,
Կարնոյ, Բասնի եւ ալլ շրջաններու մէջ: Հակառակ անոր որ Պա-
րիարքարանի կողմէ արդիւրեւած էր այդ աղեղ սովորութիւնը, կարց
մը զիւրքու մէջ տակաւին գործածական էր: Ինչիկ կամ Ինչիկ - ան
չապիկը դոր կը հագնէին բանկունին տակէն - վերնաշապիկ: Ֆէրանէ
- երկար վերարիտ մարդոց, եւ մասնաւորապէս կիներու մարմինն
ու զլուխը ծածկող շարափը կամ էրիաք: Հետեւելով թրքական
սովորութեան, հայ կիներն ալ ամէն անգամ որ գուրս երթային՝
էրիաքով կամ ֆէրանէով կը ծածկուէին ու կը գոցէին նաեւ իրենց
զէմքերը մասնաւոր քողով մը կամ էրիաքին ծալքով:

ԳՈՐՈՓՈՒ ՍՈՒՐԲ ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔԸ

(ՍՐԸԵԼԻ ՍՈՒՐԲ ԹՈՐՈՍ)

Երզնկայի գաւախն արեւելեան եւ Դերջանի արեւմտեան սահմանին վրայ՝ լեռներու մէջ Հասառաւուսում էր Գորոսիւ Ս. Թորոսէ վանքը, որ ժողովուրդին ծանօթ էր ուսելի Սրբիցի Ս. Թորոս անունով: Մանկութեանս յիշատակներուն մէջ ազօտ կեդրով կենդանի է այն այցելութիւնը, զոր առեւծ եմ այն սրբալուսիքն: Հայրս շահանայ ձեռնադրուած ըլլալով Երզնկայի արեւելեան լեռներուն մէջ գտնուող կէս Հայ եւ կէս քիւրտ Խնձորեկի գիւղին վրայ, ամբողջ բնտանեօք քաղաքէն փոխադրուեցանք զիւր, ուր մնացինք մօտ երկու տարի, վայելելով զիւրական կեանքի քաղցրութիւնը: Ասիկա պատահեցաւ, եթէ չեմ սխալիր, 1905-ի միջոցներուն, երբ ես տակաւին վեց-եօթ ասրեկան մանուկ մըն էի: Գիւրդական կեանքը իր պարզութեամբ, լեռներն իրենց պաղ ու քաղցրահամ ջրերով, կարկաչաւուս վտակներով եւ ստուներով, լեռնային վայրի կանաչեղէններով ու պտուղներով՝ հրապուրած էին զիս: Ամէն առտու, ամբան եղանակին, տաջեւս կը ձգէի մեր մի քանի ուլերն ու գտնեիրք, որոնք զիւր զացոց մեզ նուերած ոչխարներէն ու այծերէն ծնած էին, եւ կը խառնուէի զիւրի ինձ հասակակից աղոց եւ կը քէլինք մեր փոքր հօտը զէպի մերձակայ լեռնակողերը: Ի՞նչ հաճելի կեանք էր: Ակերու եւ ստուներու մօտ, կանաչ մարգերուն վրայ թող կուտայինք մեր գառնեկն ու ուլերը, եւ անձնատուր կ'ըլլայինք գանազան խաղերու եւ սրբապատմերու: Ջուրերու մօտ տուճուարակ կամ զազաւսճեք կը շինէինք: Երբ ողբ տօք ըլլար՝ վտակներու մէջ կը լողնայինք: Մերթ ընդ մերթ շարճօճի ուլերուն ետեւէն կը վազէինք, դանձր կարգի բերելու համար: Աղուէսի եւ նապաստակի բոյներ կը փտտուէինք սաղին անդին եւ կամ ապստամբներուն մէջ կուտայի բոյներէն հաւիթի կը հաւաքէինք: Երբ անօթեմայինք՝ մեր ստորակները կը բանայինք եւ հայ, պանիր, չոքայիկով մեր անօթութիւնը կը զոհացնէինք: Իրիկուան զէմ, ոչխարի հօտը զիւր մտնելէ առաջ՝ կը քէլինք մեր անասունները տուն, պատրաստ ըլլալու համար հօտին եւ նախիրին ընդունելութեան, երբ զիւրն ամբողջ կը լեցուէր ոչխարներու մայրենով եւ կովերու քառալով:

Այն տարին, րանք 1906-ի ամբան, Հոգեպալտեան տանին

առթիւ, որ օրն էր նաև Ս. Թորոսի ուխտին, հօրս արձանութեամբ խոսնուեցայ ուխտի գացող մեր ազգականներու խումբին: Խնձորեկէն մինչեւ Ս. Թորոս կ'ենթադրեմ թէ երեք ժամուայ ճամբայ էր: Ճամբան կ'անցնէր լեռներու մէջէն, որոնք ընդհանրապէս անտառապատ էին: Ամէնք կը քայլէինք, զի հնաւանդ սովորութեամբ ստացնաց ուխտաւորութիւնն էր միայն ընդունելին, անուշաբայի այն պարագայէն՝ երբ ուխտաւորը տկար էր մարմնով: Ես չմնայու համար ուխտաւորներու խումբէն, եւ ուժ կուտայի սօրերուս, կը քայլէի արագ, մերթ այ կը վազէի, ցատկելով ստուներէն, մաղչելով զիւրեւակ կամ անձերէն, մերթ կենալով ակի մը ջուրը համտեւելու, վայրի պտուղ կամ ծաղիկ քաղելու համար: Ու այս ամէնը կ'ընէի այժեմի թեթեւութեամբ եւ հաճոյքով: Երբեմն քոյկն քաղող մեր քուտրդի, արգէն քանի մօտ Դերոյ Հայրանքի մօտեւաւում՝ կ'առաջարկէր շալկել զիս, բայց ես հարստութեամբ կը մերժէի իր առաջարկը, կրկնելով. «Ողնամ չիմ»:

Հոգեպալտեան յաջորդ Ծորաթի օր, կէսօրէ ետք հասանք Ս. Թորոս: Վանքը հաստատուած էր լեռներու դողը, հովիտի մը մէջ: Երբ վար կ'ընէինք լեռնակողի կամանէն, վանքն իր շրջապատով կանաչներու մէջ կ'որոտած՝ խաղաղութեան հանդրաւանի մը տպաւորութիւնը կը թողար: Եւ իսկապէս ան կրնար ըլլալ այդ հանդրաւանը եթէ քաղաքական պայմանները թոյլատուր ըլլային: Բայց կար միշտ վայր. վայրը թուրքին եւ վայրը քիւրտին...:

Ուխտաւորներ արդէն եկած էին շրջականերէն եւ հեղահակ կուտային՝ մասնաւորապէս Դերջանի շրջանէն: Դուռուց գտնուային ձայն արդէն բռնած էր շրջապատը: Հաճելի էր տեսքը Դերջանէն եկող ուխտաւորներուն: Ազնիկները եւ հարսեր իրենց կարծիք պողպոցներով եւ կարծիք գտակներով, խառուտիկ ու փայլուն հազուամեներով ամէնուն ուշադրութեան տարակոյ շին: Ծուրջպարք կազմուած կ'ըլլար երկու սեւ երիտասարդներով: Պարագլուխը կ'ըլլար ընդհանրապէս զիւրեղի ձայն ունեցող կին մը կամ այր մը: Ան թաշկինակ մը իր ձեռքին, շարժելով դան յերգաշնկօրէն երգի խաղերուն հետ, կ'առաջարկէր պարը: Նախ ինք կ'երգէր սուներ եւ յետոյ խումբը կը կրկնէր դան: Ամէն կողմ կազմուած էին խումբեր, թէ՛ վանքի շրջապատէն ներս եւ թէ՛ դուրս: Մտառացուներ կը մտրթուէին, սեղաններ կը պատրաստուէին, օղիի եւ զինիի փարչերն ու շիշերը ձեռք ձեռք կ'անցնէին: Ամէն ոք ուրախ էր, զի ուխտի օրերը ուրխութեան համար էին մեր ժողովուրդին:

Ըստ մեր եկեղեցական պատմութեան, Գորոփու Ս. Թորոսի վանքը հիմնուած է Չորրորդ դարուն սկիզբը՝ Լուսաւորչի կողմէ: Այս վանքին մէջ կը դասուէր գերեզմանը Թէոդորոս Սարգսնի իշխանին, որ քրիստոնէութիւն ընդունած ըլլալուն համար նահապետուեցաւ իր հօր՝ Սուրեն իշխանի կողմէ, Երրորդ դարու վաճառանին, երբ զեւ Հայաստան շէր զարձամ քրիստոնէութեան: Ըստ աւանդութեան, Էրբ Գրիգոր Պարթև Երեկայէն կը տարուէր Արաշառի իբրազը բնաւարկուելու, ճամբուն վրայ Հանդիպեցաւ վերոյիշեալ Թէոդորոսին եւ անոր ընկերակից յոն Դասիոս քահանային, որ արդէն պաղանապէս կը ծառայէր Քրիստոսի: Լուսաւորչ աղօթից Թէոդորոսի վրայ, որ կը տառաջէր մտային հիւանդութեամբ մը: Լուսաւորչի աղօթքով բժշկուած իշխանորդին ընդունեց քրիստոնէութիւնը, մկրտուեցաւ Դասիոս կամ Դասիկ քահանային կողմէ: Այս պարագան երբ խնայու իր հայրը, Սուրեն Սարգսնի, սկրբ մտակայ Սուրենուշէն աւանին, շատ դայրացաւ եւ ամէն կերպ փանաց հանուել իր որդին որ վերադառնալ իր հայրերու հասաւորին: Երբ տեսաւ թէ իր բոլոր քանքերը անօգուտ են, բարկութեան նուպայ մը մէջ սրահար սպանեց զայն: Ինչ մինչև տեղահանութիւններէն առաջ այս վանքին մէջ ցոյց կուտային գերեզմանները Ս. Թէոդորոսի կամ Թորոսի եւ Դասիկ քահանայի:

Հոգեպարտեան յաջորդ Կիրակի օրը մեծահանգէս տոճակատարութեամբ կը պատուուէր սուրբին յիշատակը: Պատարագէն ետք մտադնները կը դրուէին օճախներու վրայ: Վանքին ժողը անդին խալկիներ կը զորձածուէր մի քանի մտապ մէկ անգամէն եկելու համար: Մինչ մտադնները եկելու պարտատութեան վրայ էին, ուխտարները՝ առաջնորդութեամբ քահանաներու եւ դպիւնարու, Հանդիսարապէս կը բարձրացնէին այն ձողը, որ ըստ աւանդութեան րունն էր այն ծառին, որուն տակ կ'աղօթէր յաճախ սուրբը եւ ուր նահատակուած էր այն իր հօր կողմէ: Այդ ձողին ծայրը կ'անցընէին խաչ մը, որուն մէջ պահուած էր սուրբին մատուցը: Այդ ձողը Հանդիսարապէս կը տանէին ձորին մէջ այն վայրը, ուր կը հասաւտային թէ նահատակուած էր սուրբը: Այդ տեղ կը կանդնեցնէին զայն եւ ամէն ուխտատար օր կարող էր, կը մաղցէր անոր վրայ՝ համարելու համար խաչը: Ինչոյ յոյ ձողը տարիներու ընթացքին գործածուելով այնքան ոգորկ եւ սահուն զարձակ էր, որ քիչերուն կը յաջողուէր մաղցելի անոր վրայ: Այդ քիչերէն մէկն եղաւ իմ ազգական Գլորայ Հայրանանք, որ յաջողեցաւ բարձրանալ եւ համարու-

րել խաչը, ինչ որ մեծ ուրախութիւն եւ հպարտութիւն պատճառեց ինձ^(*):

Կիրակի կէսօրէն ետք մտաբէն Էկոզ ուխտատրները, մասնաւորապէս Դերջանցիները, կը սկսէին վերադառնալ իրենց տեղերը: Անկի հետուններն եկողները կը խոցուին վանքը յաջորդ մէկ երկու օրերու ընթացքին: Աւխտատրներ կուգային ոչ միայն Դերջանցի եւ Երզնկայի շրջանէն, այլ եւ Կարինէն, Կեսաբայէն եւ մինչև Թէքրուաղէն, որ է Ռոստոթո: Իրապէս զարմանալի է, որ Եւրոպական Թուրքիայէն ուխտատրներ նեղութիւնը յանձն կ'առնէին երթալու մինչև այս ուխտատեղին: Այս ալ բացատրելի է անով, որ Ռոստոթոյի հայ գաղութը հիմնուած էր զլլաւորարար Երզնկացիներէ եւ Կամախցիներէ, որոնց մէջ կային հասանարար Դերջանի շրջանէն նաև հայեր:

Այս վանքը զարբերու ընթացքին պահած է իր գոյութիւնը, թէև իր մտին շատ քիչ րան պահուած է պատմութեան մէջ: Ասոր ալ պատճառը այն է անկապկած, որ հաստատուած ըլլալով կեզրուններէ հետու, յեմներու մէջ, յարժար էր եղած վանական կազմակերպութեան, մանաւանդ որ շրջակայ աւաղակարար քիւրտերու յարձակումին ենթակայ եղած է միշտ: Մասնաւորապէս ԺՁ եւ ԺԷ դարերու ընթացքին Ջևրայի կոչուած աւաղակարարներու տարածած աւերէն ինք ալ անմասն չէ մնացած: Երկրաշարժներն ալ իրենց բաժինը բերած են: Այնպէս որ ԺԷ դարու կէսին այս վանքը բոլորովին ամալացած ու լքուած՝ կիսուէր վիճակ մը ունէր: Այդ միջոցներուն երզնկայի Մեղուցիկ գիւղէն Մարգար անունով հայ մը՝ իր վարդապետ Էկոզը հետ կուգայ եւ կը հաստատուի այս վանքին մէջ: Ասանք վանքին մէջ ընկող քիւրտերուն դրամական վորձմարտութիւն մը ընկելով կը հետացնեն զանոնք եւ կը սկսին շինել, վերանորոգել ու շէնցնել վանքը: Այս Մարգարին սերունդն էր, որ հետզհետէ բարձրանալով կազմեց վանքի ընկալութիւնը, որ տեղահանութեանն առաջ՝ 85 անձ կը հաշուուէր: Վանքը ունեցած է վանահայրերու շարք մը, թէ՛ վարդապետ եւ թէ՛ քահանայ: Ասոնց մէջ նշանաւոր եղած է

(*) Գ. Սիւրմէնալի շերտիճ հասարկի մէջ, կողիոյ Ջուէն Պատրիարք խոսելով դէպի այս վանք կատարած իր այցելութեան մտին, ակնարկելով համբաւար մօզն կամ սքրթին, կ'ըսէ թէ «վանականներէն մէկը անոր վրայ կը մաղցէր եւ գանազան խաղեր կ'ընէր»: Անիկ սխալ է: Այդ ձողը խաղի համար չէր:

Մարկոս վարդապետ, որ եղած է ուսումնական և գործունեայ անձ մը: Ան վախճանած է 1855-ին, երբ նոր առաջնորդ ընտրուած էր Դերջանի, և թողուած է նոյն դաստի Ազրոնք գիւղի Եկեղեցիին բակը:

1925-ին երբ Յանաստան էի, պատահամբ հանդիպեայ Սուրբ Քարապի Սուքիասին: Իր մականանը չեմ գիտեր: Այս անու-նով ծանօթ էր ան իր հայրենակիցներուն: Իր հետ բաւական խոսակ-ցեցանք մեր ծննդավայրի և մասնաւորապէս իրենց վանքին մասին: Ահայ իրեն գրասօր հարցարան մը տալի, խնդրելով որ գրասօր պատասխանէ անոնց: Մեր սիրելի Սուքիասը իր կարողութեան շա-փով ջանաց պատասխանել իմ հարցումներուն: Այդ գրութիւնը պա-հած էի մինչեւ այսօր, չարմար տախտակ մը այդ մասին գրելու մտադրութեամբ: Ահա այդ մտադրութիւնն է որ կը գործադրեմ: Սուքիաս 1925 Յունիս 4 թիւ նամակով կը գրէր-

Վանքին բնակչութիւնը՝ այն, կին, երիտայ, մինչև այս վեր-ջին քաղը, 85 անձ էր բաղկանար: Միայն Բուրի հովիւ մը կը պա-նէին, անոք ալ բուրդ ըլլալը երբէք չէր հասկցուեր, որովհետև յո-սակցութիւնը հայերէն էր:

Գիւղացիները կը գրաղէին յաշնարածութեամբ, մասամբ երկ-րագործութեամբ ու նաև մեղուարածութեամբ, որ ամենէն առաջին տեղը կը բռնէ այդ շրջանին մէջ: Մի քանի այրեր ալ որմնադիրներ էին: Շրջակայ գիւղերու շէնքերը կը կառուցանէին ու այդպէսով ի-րենց օրապահիկը կը մարէին:

Գիւղին դիրքը բոլորովին լեռնային էր, ընդարձակ և հա-րուստ անտառներով և զով ջրերով: Ապահած լեռներու մէջ հաս-տատուած ընդիլ կը նմանէր: Վանքը ամբողջ պարսպապատ էր, հաստատուն և բարձր պարիսպներով: Միայն մի երկաթէ դուռ ու-նէր, որը երկուները կը փակէին և ամբողջ բնակչութիւնը կը մնար պարիսպէն ներս: Իսկ վերջերս երբ բազմացան, սկսան պարիսպէն դուրս շէնքեր կառուցանել ու այդպիսով մինչև 12 ընտանիք կազ-մուցանա: Այս վերջին ժամանակներս ունէր գեղեցիկ շէնքեր, ուխ-տաւորներու համար հանգիստ օրեւան: Եկեղեցին բոլորովին նորու-կառոյց: Փոքրիկ պողատու պարտէզներ և բանջարանոցներ վանքին ներքեր: Ամէն տեսակ բոյսեր կը ցանէին: Միայն յաղող չկար: Եշամուտը էին ապրիլ և խնձորի ծառերը, որոնք քէ՛ գիւղացիներ-բուն և քէ՛ ուխտաւորներուն կը բաւէին: Լեռներու թերեքն ալ ա-

ռառ էին՝ ինչպէս բաժախ, սունկ, խաղիթ և այլ լեռնային անու-շահամ բոյսեր, որոնք ամէն տեղ չէին գտնուեր:

Վանքին կը հսկէր, իբրև վանահայր, Բահանո: Իսկ վեր-ջերս, որ Բահանայ չունէին, իրենց մէջէն որոշած էին տարիքով մէկը որպէս վանահայր, որ վանքին իրաւունքները պաշտպանէր:

Վանքը ունէր արտադրող հող, երկակայի 40 սոմառ ցորենի սերմ ցանելու չափ: Այդ հողը իրենք իրենց մէջ բաժնած էլ ին ժամա-նակին, և այդպէս ալ կը շարունակէին: Վանքը ունէր մօտ չորս հարիւր հատ ոչխար և այժ, 50 հատ կով և եզներ, 15-ի չափ ձի և ջորի, նաև էշեր, որոնք խիստ կարեւոր էին անասուն փայտ բե-րելու և ուրիշ գործերու համար:

Ուխտի օրը նիշը Հոգեգայտանան տօնէն յետոյ կուգար: Այս տօնին կը յաջորդէր շաբաթապահ մը, որ ծանօթ է եղական Պանխ անունով: Շատեր այս պահեր կ'անուանէին Ս. Քարապի պահ: Այս պահին յաջորդող կիրակին էր վանքին օրը: Ուխտաւորներ կուգա-նէին ամէն կողմերէ՝ Կարնէն, Կնարիայէն, Թէփրսաղէն, Երզն-կայէն և մեծ մասամբ Գեղեցանէն: Խիստ ուրախօյի էր այդ օրը: Կարծես վանքին ձորերն ու լեռները ժողովուրդին հետ կը փառաբա-նէին օրուան տօնը: Մանաւանդ Գեղեցանի ժողովուրդը, իրենց սրտ տարածով, քմրուկով ու գունակով, կը դրողացնէին արտաւանքը: Ազդիկներ խուճը խուճը կը պարէին իրենց յօրինած երգերը, ուխտա-ւորներու ուշադրութիւնը գրաւելով: Մինչև երկրորդ օր այսպէս ուրախ գուարք անհուն կ'անցնէին գիշերը: Երկրորդ օրը, այսինքն կիրակի, պատարագէն յետոյ կը բարձրանային *արքրին* մօտ ու ան-կից մատակներ բաժնելով ուրախ գուարք կը վերադառնային իրենց տեղերը: Իսկ հետո տեղերէ կ'աղցնէր կը վերադառնային երրորդ օրը:

Խաչին ձողը (*արքր*) մնացած էր շատ հին ժամանակներէ: Տօնին օրը ասոր ծայրը կ'անցնէին խաչ մը, որուն մէջ կար սուրբին մատուցը: Ով որ ուխտին օրը բարձրանար այդ ձողին վրայ և համբուրէր խաչը, արժանի էր սրբուն, զբա համար մեծ փափախով կը մտնենային անոր: Ուրիշ հնարիւններ չունէր: Կային մի քանի կարեւոր գրքեր և սուրբին մատուցը:

Վանքին վերս, ապառաժին վրայ կը գտնուէր բարձր քարէ խաչ մը, ուր ուխտին օրը կիներ կը բարձրանային մանջ գուակ ու-նենալու համար, մտերկով և մատաղօտի բարշտ աղով իրենց հետ: Այդ ապառաժին վրայ կը մտրէին իրենց մատաղջու գտնե-

ըր: Այդ տեղը կ'անուանենք *օգլան վերէն*, ուրտեղ սուրբը երբորդ անգամ վիրաւորուած էր իր հօրմէն:

Վանքը հաստատուն դպրոց չունէր, միայն ձմեռուան եղանակին վեց ամիսի շափ մանչ գաւակները կը սորվէին եկեղեցական արարողութիւն: Ուսուցիչը կը բերէին Գերբջանի կամ Երզնկայի գիւղերէն: Ուսմանց կողմէ բոլորովին ետ մնացած էին մինչեւ վերջին ժամանակները:

Բնակիչները մի քիչ քոթով էին: Կամոնատը հայերէն բարբառ չունէին եւ մեծ մասամբ Գերբջանի ժողովրդեան բարբառն էր, բանի որ իրենց խնամրական բարեկամութիւնը գրեթէ բոլորը Գերբջանցիներու հետ էր: Ասանցմէ մաս մը այլեր. որոնք պանդխտութեան կը դիմէին, մի քիչ խօսակցութիւննին շակած էին: Իսկ անոնք որոնք մշտական վանքը կը մնային, երբեք չէին փոխած իրենց լեզուն: Օրինակի համար կ'ըսէին. *ձիօ, ինցս՞ն ցես երթար օգլանները բերէրք*: Խիստ յաճախ անդրիկ էին: Շատ անգամ իրարու հետ կը վիճէին, իսկ երբ օտարականի մը հետ վէճի բռնուէին, անմիջապէս կը միանային: Ամէն տարի վանքին մասունքը կը պարզացնէին գաւառները ու եկած հասոյքը իրենք կը ստանային: Եկեղեցին կը կուսովարէին իրենց արտադրած մեղրամամի եկամուտով: Եկեղեցին միշտ պայծառ եւ յուսաւորուած էր: Հնուր-իւններու կողմէ շատ հարուստ չէր, որովհետեւ Բուրդ բարբառն աւագակները իրենց վայրագութիւնները միշտ կը կատարէին՝ կողոպտելով: Եթէ այդ աւագակային խումբերը չկերակրէին՝ մի շիւղ անգամ չէին բողբոս: Կային էինէն մնացած մի քանի գրքեր, ինչպէս Տարեւացին, Յայտնուորք մը, մի քանի հաս քանկագին խաչեր, եւ պատարագի գգեստներ, գոթա Թէֆլիսաղոցիներ ժամանակին նուէր բերած էին: Կան *օտրք սնդոյ խաչկէնը*, որը ուխտի օրը կը գործածուէր մի քանի մատաղուններ միասին եփելով: Այդ բաներէն ոչ մին մնաց: Թուրք եւ Բուրդ խոժանին անտի կատարածը մէկ օրուան մէջ լափեց ու ամայի դարձուց այդ բազմամարդ վանքը: Այսօր հողակոյտի մը վերածուած է հարկարտար տարիներու ժրջան աշխատանքով պահուած այդ սրբաւայրը, բուրք բռնակալ կատավարութեան երամանով եւ Խնձարեկի գագան կիւլասի աւագակապետին գրդումով: Ժողովուրդէն փոքր մաս մը ազատուեցաւ օտար երկիր գտնուելով: Ուրիշ մաս մըն ալ ամիսներով լեռները բափառեցան հացի կարով, կամ անուանին փոխած մնացին Բուրդին մօտ, մինչեւ որ անուր եկաւ եւ գրուեց այդ շրջանը: Ասոր վրայ փայտաւանները կրկին կը հաւաքուին եւ

կը սկսին շէնցնել վանքը, որ այդ տանն տակաւին քանդուած չէր: Այսպէս մէկուկէտ տարիի շափ կը շէնցնեն վանքը: Բայց երբ ուսար կը Բաշուի, ձմեռուայ սաստիկ ձիւնին ու բուրնի կը բողբոսն ու կը փայտչին իրենց կեանքը փրկելու համար: Մեր ամբողջ գերդաստանը կոտորող Զուռուցի(*) շէյխը աւերէն օգտուելով երկրորդ անգամ կուգայ եւ կը տիրանայ վանքին: Ամբողջ շէնքերը քանդել կուտայ եւ փայտը կը փոխադրէ իր գիւղը, որ կէտ ժամ հետու է վանքէն: Կը տիրանայ վանքին հողերուն, անտառներուն եւ ջրաղացին: Առաջ մէկ Բուրդ շէնքը կարող մէկ փայտ կտրել, բանի որ սաստիկ կը վայտնային Երզնկայի առաջնորդէն: Այդպէսով էին վայելուցած վանապետները: Իսկ այժմ սահմանը իրենց առաջ բաց է եւ ուզածնուն պէս կ'ընեն ինչ որ իրենց նպատակն է: Ո՛չ մի շէնք եւ ո՛չ ալ եկեղեցի մնացած է: Ամբողջը հողակոյտի վերածուած է այն նպատակաւ՝ որպէսզի հնուր-իւնները շահատանն Հայութեան կայուն լինելը:

Սուրբ Թորոսցիներէն մաս մը հոս Յունաստան, մի քանիներ Բուսաստան եւ երկու ընտանիք ալ Պալսի կը գտնուին: Յիշելով միշտ անցեալը, ապարդիւն կը մնան, չունենալով ոչ մի յոյս:

(*) Զուռուցի գիւղը, որ կը գտնուի Ս- Թորոսէն կէտ ժամ հետու, ինչ օգտանակամ Մուրթեաշէնն ըլլալու է. ինչպէս ցոյց կուտայ անուններու մտփոխութիւնը. *Զուռուցի - Մուրթեա*:

Գ

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ԵՐԶՆԿԱ-ԿԱՄԱԽ ԳԱԻԱՌԱԲԱՐԲԱՌԻ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հետագայ էջերով կուտանք այն բառերը, որոնք գործածական են Երզնկա-Կամախ գաւառաբարբառին մէջ: Ասիկա չի նշանակիր թէ այդ բառերը գործածական չեն այլ գաւառական բարբառներում: Ասոնց մէջ կան բառեր, որոնք յատուկ են նաեւ այլ գաւառաբարբառներու՝ նոյնութեամբ կամ քիչ փոփոխութեամբ: Օրինակ՝ Երզնկա-Կամախ գաւառականին մէջ *խլուք* բառը Եղզնկէյն բարբառին մէջ *խլիք* է, *ձլըզ* է *ձլէզ*, *կոյ՝ կոծ*, *օրհարտակ՝ օրատակ*, *Հաւաղ՝ խուաղ* եւլն: Մեր *դառակ* բառին տեղ հարբերդ եւ այլ գաւառներ ունին *դարձեկ*: Երզնկա ունի *դոժկիլ*, ասոր դէմ հարբերդ ունի *դոճեկիլ*, Մարգուան՝ *դուչիլ*, Ակն ունի նոյնպէս *դոժկիլ*: Երզնկա-Կամախի *դուք* բառին դէմ հարբերդ ունի *դօք* եւլն:

Կան գաւառական ծագումով շատ մը բառեր, որոնք արդէն գրական իրաւումն ստացած են թէ՛ Արեւմտահայ եւ թէ՛ Արեւելահայ լեզուներում մէջ: Ասոնցմէ են, օրինակ, *լողբար*, *ժամ*, *գիժմնայ* (տոկայ), *գիժմաղիւն*, *ժամուր*, *թրեկ*, *ջրուք*, *սժքիլ*, *պլպլալ*, *ունուր*, *չունուր*, *Նշանտուք*, *չուլլիլիլ* եւլն: Այս տեսակ բառերում մէջ ջանացած ենք ընկ ընտրութիւն մը: Միայն ստած ենք այն բառերը, որոնք նուազ գործածական են գրական լեզուին մէջ եւ կամ գրական լեզուի գործածական իմաստն այս կամ այն կերպ կը տարբերին մի քիչ:

Յայտնի է թէ միշտ կան տարբերութիւններ նոյն գաւառաբարբառին մէջ՝ քաղաքէ քաղաք եւ գիւղէ գիւղ: Երզնկայի եւ Կամախի բարբառներում մէջ գոյութիւն ունեցող տեղական տարբերութիւնները նշանակած ենք արդէն. որքան որ կարող էինք: Այսպէս, ունինք բառեր՝ որոնք գործածական են գիւղերու մէջ, բայց չեն գործածուիր քաղաքում: Ասոնցմէ մասնաւորաբար երկրագործական եւ բուսական բառերով հարուստ են գիւղերը:

Երզնկա-Կամախ գաւառաբարբառին մէջ ալ բառական տարածում է բուրբերէն բառերու գործածութիւնը: Այս բառացանկին մէջ ստած ենք միայն ա՛յն բուրբերէն բառերը, որոնք տեսակ մը մաս կազմած են լեզուին: Ասոնցմէ են նախ կէս-հայ եւ կէս-բուրբ

խամուրդները, ինչպէս: *չալի, խալի, խարաթի, Ներսուի, շափի, շափի, ջուգայի, զմշի* եւլն: Յիշեմ նաեւ *տաղ, աահաթ, զաթ, զուրպան, ազազ, էկէ, թէզ, զագան, զուլզ, գրու, ջահի* եւլն:

Այս բառարանը կազմած ենք ապախնած նախ մեր յիշողութեան եւ հայրենակիցներէ: Բնանց յիշեցումներուն: Ասկէ զատ ոչէ՛ անցուցած ենք կարգ մը գաւառական բուսականներ եւ մասնաւորապէս Մայիսանանցի ՀԱՅՆԻՆԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ-ը, որ նաեւ զանձարան մըն է գաւառական բառերու: Մեր գրքի վերջաւորութեան կուտանք աչֆի առջեւ ունեցած այդ ազբիւրները:

Աւելորդ է ըսել թէ այս բառարանը լրիւ չէ, զի սլատենութիւնը չտրուեցաւ մեզ, աւա՛ղ, անձամբ սրբատելու եւ ուսումնասիրելու մեր սիրելի ծննդավայրին բարբառը տեղին վրայ եւ մասնաւորապէս գիւղերու մէջ: Մեզմէ տառջ ալ չտունուցաւ մէկը, որ այդ աշխատանքը յանձն առած ըլլար: Որով ընդհանրանալու եւ մասնաւորապէս մեր լեզուարան-բանասէրներու ներդաւառութեան տպախնած՝ հանրութեան կը ներկայացնենք այս բառարանը կրկնա-կուսման գաւառարարութիւն:

Ա

ԱՅՏ գիրը պահած է իր դասական ենչիւնը: Միայն մի քանի բառերու մէջ ան եղած է քմային: Այս քմային *այրը* կը ներկայացնենք դարձուած ձեւով:

Ա-ԱՂ. *Երզնկայի բարբառին մէջ ալ ժակրային չ գիրը չի ճնշուիր: Օրինակ: Ես ա զուն ա մարդ ինք, արար: Այ ա խոսք է ո կըսես նը: Կամախ պահած է ալ ամբողջութեամբ:*

ԱՐԱՐ. *Կը ճնշուի արար: Եղբայր թառին ընտանեկան, ժուրքիկ ձևւր: Կը զործածուի նաև հայր իմաստով, ընդհանրապէս գիւղերու մէջ:*

ԱԳՌՄԷՁ. *Երկու սրունքին մէջ աւղը, աճուկէն ներս:*

ԱԳԱՌՈՐԻ. *Մարդ, Աղամի սերունդ: Ըս աշխարհի մէջ կա՞յ աղամարդի մ՞ ո մահ չի տեսնայ:*

ԱՁԱՊ. *Թրք. ամուրի, շամուսնացած: Ազապ այնիկ ու սղաք հանդերև ին ինկեր:*

ԱԹԱՐ. *Արջուի թրեքը, զոր ձևագով բոլորածու կը տափակցնէին եւ կը շորցնէին՝ որպէս փառլիք զործածելու չամար:*

ԱԹԻՎ. *ձարպիկ, արթնամիտ: Մօ, Ակոր այրարք արիկ մարդ է, ձուռէն ումէն բան կուգայ:*

ԱԹԼԱՍ. *Թրք. ձևաքակ կերպաս:*

ԱԺԵԼ. *Արժիկ:*

ԱԺԵՄ-ՁԱԺԵՄ. *Անարժէք, հասարակ, ոչինչ մարդ: Ամենին չամենին հետ կ'իլլայ կ'իյնայ, հէջ պատիւ բառածը չիտէ:*

ԱԺՆՈՒԹԻԻՆ. *Աթանութիւն: Հակառակ սղութիւն թառին:*

ԱԼԱՐՈՅ, ԱԼԱՐՈՅԻՎ. *Ձոր մացառով եւ փուշով փառուած թէթև ու փազանցուկ խարչիկ:*

ԱԼՈԶԱ, ԱԼՈՒԶԱ. *Մանր, կլոր բաց կանաչ սալոր, որ հասուննալով կը դեղնի:*

ԱԼԶԻ. *Թրք. վէզին անհարթ կոզմը, կանդնած փնձակով:*

ԱԼՐԱՂ. *Ալիւրի մաղ:*

ԱԼՐՏՈՒՆ. *Ջրաղացին մէջ խոշոր տաշտածու ընդունարան, որուն մէջ կը թափի աղցուած այլերը: Նաև այլերի փեթակածու ամբար:*

ԱԼՔ. Չար սյի, որ համաձայն ժողովրդային անալոգիայում լինան՝ կը յարձակի աղաչկաններն զրայ և անոր թռքերը դուրս կը քաշէ րեւնէն, Եթէ քոյր հակող չունենայ: Ասոր համար պղպայկանները բնու առանձին չլին թողուր:

Ան. Աղի, դրան փականք: Այր կը գործածուի դուրս ներսէն փակելու համար: Եղթայ մըն է, որուն մէկ ծայրը դրան զրայ, ամբայուած է, միւսն ալ մօտի կողմնակի սինին կամ բարտարին զրայ կ'ամբայուի: Այսը դինի կը նշանակէ ախոյ փակել:

ԱնԲԱՐ. Եղբայր:

ԱնԲԵՐԱԿ. Աղբրակ: Աշքին ծայրամար, քթին կողմը, արկէ արցունքը կը հոսի:

ԱնԲՈՒՐ. Աղբիւր:

ԱնԼԱՅԻՐ. Վերայիշուլ ախ կամ աղի փականքը: Գործածականն կամ մօտի շրջանին ու թերեւս նաեւ Երզնկայի զինգերուն մէջ: Քաղաքին մէջ գործածականն ըլլալը շեմ յիշեր: Մեր սան մէջ չէր գործածուեր:

ԱնՋԻԿ. Աղջիկ:

ԱնՋԻԿՏԵՍ. Աղջիկեան: Մոլորութիւն էր որ ծնողքը իրենց մանչ դուստր ամուսնացնելու համար աղջիկ տեսնելու կ'երթային: Այդ սոլորայթը ծանօթ էր աղջիկանս անունով: Աղջիկը տեսնելէ եւ հաւանելէ ետք տեղի կ'ունենար նշանուտը:

ԱՄ. Այծ:

ԱՄ ԵԼԼԵԼ. Ածել սկիւրի (հաւու):

ԱՄԱՆ. Շատ ձու անոյ: Ածան հաւը կոկոսան կ'ըլլայ:

ԱՄԸԼԻ. Ածելի:

ԱՄԻԿ. Թրջած եւ ծլած ցորեն, որմէ նշայ կը պատրաստեն:

ԱԿ. 1. Քունիքի մտուէն րեքանը, անտուին ակը: 2. Չուարի, կորկոտի եւ նման ընդեղէններու հատիկը: Ախի, ապրցուին ակը ջրէ անցուցի՞ր: 3. Իդական սեսի յառուկ մտերմիկ կոշական: ԱԿ, Կարիկ, աղ վն՞վ է դուրը կը ծծել:

ԱԿԱՍ-ՄԱՆԱՍ. Դժգոհութեան արտայայտութիւն, կրք աշած կացութեան մը զրայ նոր մը եւս կ'աւելնայ: Ակաս-մակաս դուռ է իր պակաս:

ԱԿՈՐԻԿ. Նախաճաշիկ, թեթեւ նախաճաշ (կամախ):

ԱԿՕՆ ՏՈՒՆ ԳԱ. Վերահասու ըլլալ, խելամախի, հասկնալ: կը գործածուի հեղեանկան խմատով մէկու մը հանդէպ, որ բուռածը

Վերջին փայրկանին կը հասկնայ: Նօ, ախօն նո՞ր է տուն ե-կիր: Հիմա՛ խիլք կը պակի ըսածիս:

ԱՀՈՒՋԱՐ. Ահողող, սարսափ: Գուշմանին տնուգրքին հանդիպիս, օղոլ:

ԱՂ. Վարտիքի, շայտարի կամ տարտարի աղամէջի մասը:

ԱՂԻՆՁ. Թեթեւ բոցի կամ այրարցի զրայ խարկուած կիսահաս ցորենի փոքր խուրձ: Յորենի աղինքը շատ համեղ եւ սիրելի էր աղայոց համար:
